Universitäts- und Landesbibliothek Bonn

Arack' azgayink'

Venetik, 1880

urn:nbn:de:hbz:5:1-60382

Visual Library

Goussen 3623

ԱՌԱԾՔ ԱԶԳԱՑԻՆՔ

Ցուցակ 3623

ԱՌԱԾՔ ԱԶԳԱՑԻՆՔ

ԽՄԲԱԳՐԵԱՑ

Հ. ՍԻՄՈՆ Վ. ՃՈՒԼԱՐՏԵԱՆ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ Ս. ՂԱԶԱՐՈՒ

1880

3623

ՑԱՌԱՋԱԲԱՆ

Ով որ կ'ուզէ և հարկադրեալ է հիմա-
կուան Հայոց ազգին այլ և այլ կողմանց
աշխարհաբառ կամ ռամկական լեզուն
քննելու ժամանակ անցունել և տեղեկա-
նալ անոնց հոգին՝ բնաւորութիւնը և կեր-
պը, այս հայկական առածները ու հաւա-
քումը կարդայ, որ կարճ խօսքով և մէկ
առածով՝ այլաբանական ըսուածքով մը,
իր միտքը կը յայտնէ դիմացինին, որով
կամ կը խրատէ, կամ կը համոզէ և կամ կը
յանդիմանէ, և իր դիտաւորութիւնը և ըսե-
լիքը կ'աւարտէ։ Իսկ գործածութեան հա-
մար՝ խօսքին յարմար տեղն որ գայ ըսելու
է, ըստ պատշաճի անձանց և պարագային։

Այս առածները ես ինքս անձամբ շատ
տարի ժողվեր էի, այլ և յայլոց ժողուածնե-
րէն՝ որոնք չունէի առի. ինչպէս Ճէլալեան
Հ. Անանիա վարդապետէն, Մ. Մ. Մխի-
թարեանէն, Խաչատուր Աբովեանէն, Խո-
ճաքեանցէն, և յայլոց, ըստ խօսիլ Երևանցոց

և կամ Տփխիսեցոց, Վանեցոց, Անեցոց գաղթականաց, Ալաշկերտցոց, Պաշպալովցոց և Ջուղայեցոց. տեղ տեղ ալ բացատրելով մէկ քանի անյայտ խօսք կամ բառ և մէկ գրով յայտնելով թէ ո՞ր տեղաց ոճն է։

Գիտեմ դեռ շատ առածներ կան գործածուած զանազան գաւառներ, որ չեն գրուած հոս. անոնք ալ ժամանակին կը ժողվուին ու կը միանան սոնց հետ։

Ուր որ չէ նշանակուած թէ ո՞ր գաւառին ոճն է, ըսել է որ Կ.Պոլսոյ և Տաճկաստանի սովորական ոճն է. իսկ ուր գրուած են այս համառօտագրութիւնները, կ'իմացուին

Ե. Երևանեցոց, կամ Տփխիսեցոց և կամ Պարսկահայոց։

Պ. Պաշպալովցոց և կամ Անեցոց գաղթականաց 'ի Դրանսիլվանիա։

Կ. Կարնեցոց։

Խ. Խրիմցոց գաղթականացն յԱնւոյ։

Ա. Ալաշկերտցոց։

Վ. Վանեցոց։

Ջ. Ջուղայեցոց։

ԱՌԱԾՔ ԱԶԳԱՅԻՆՔ.



Աբիկն եկաւ տունփեսայ, ես ասանկ բան չտեսայ։

Ագահէն բան ուզելը, ջուրի մէջ ծակ փորել է։

Ագահն է աղքատ, աղքատն աղքատ չէ։

Ագահ մարդուն մի աչքն է կորած, փառասիրին երկուսն ալ։

Ագահութիւն ծնող է չարեաց։

Ագռաւին ըսեր են. Թռչնոց մէջ ո՞րը գեղեցիկ է. – ըսեր է. Իմ ձագս։

Ագռաւը գոմէշին կռնակը կը քթուրտէ իր փորին համար։

Ագռաւին ընկեր եղողը, աղբիւսէ դուրս ելլելու չէ։

Ագռաւին ձայնը թէ որ Աստուած լսէր, վարդավառին ձուն կու գար։

Ագռաւին տեսած սերմը չի կանանչանար։

Ազգիդ մօտէն ոչ բոյէ (սպասէ), ոչ տուր. (Պ):
Ազգին վրայ փոշի մը չնատեցընել՝ ազգը կործանելու վտանգի մէջ ձգել է:
Ազնիւ պատառ, չտայ յագելոյն դուլ և դադար:
Աման բանը՝ թանկ կը լմննայ, թանկը՝ աման:
Ամ՝ան միսը՝ արգանակ չունենար:
Ամ՝ան միսը՝ համ չունենար:
Ամ՝ան մեկին խաշուն՝ շունն ալ կերեր է:
Ամեմ չամեմին բերանն ենք ընկեր:
Ամենք էիր բորոտէիր, անոյշ անոյշ քերուըտէիր:
Ա՛լ աղէկ ա՛լ խաս, անունը դրինք Մալխազ:
Ա՛լ աղէկ է հոտածը՝ քան հատածը. (Պ):
Ա՛լ աղէկ է նոր կօշիկը՝ քան ղգլխածը:
Ա՛լ առ աշխարհքիս բանը անցաւ քեզմէ:
Ալէն ինչ տեսայ որ՝ ալաճըզտիկէն ինչ տեսնամ:
Ալեին դարտը փլաֆն էր. (Ե):
Ալին կուլայինք՝ Վէլին բերին կարպետով:
Ալին որ տեսանէ՝ Վէլին կը մոռնայ:
Ա՛լ լաւ է համր ըլլալ՝ քան ստախօս:
Ալ խաղը խաղացիր, տանտէրը մնաց:
Ա՞լ կալ ունիս կասելու:
Ա՞լ կորեկ ունիս ծեծելու:
Ա՛լ հեռու է մօտիկ դրացին, քանց զհեռուն:
Ալիւրը մենք մաղեցինք, գաթան ո՞վ կերաւ:
Ալիւրդ մաղեցիր, մաղդ կախեցիր:
Ա՛խ Աստուած, փլաֆն ո՛ւմ է տուեր, իշտահն ո՛ւմ:
Ա՛խ ա՛խ մի ըսեր, ի՞նչ ախ է. ախը դռնէն կախ:

Ա՛խ ժամանակ, ժամանակ, այս ի՞նչ օրերու հասանք. նժոյգները յարդ կ'ուտեն, գարին կ'ուտէ աւանակ։

Ա՛խ իմ մատս տարայ, իմ աչքս հանեցի։

Ա՛խ տանծ մը իյնար՝ կոթը վեր։

Ախոռը կամ պատը ծուռ է, կովը կաթ չի տար։

Ախոռին քէօշէն պառկեր՝ սուլթան Մուրատը երազը կը տեսնէ. (Վ.)։

Ածան հաւը կրկռան կամ կարկըչան կ'ըլլայ։

Ածերդ գնաց. (բարկութիւնդ անցաւ)։

Ածէն կ'ըլլայ՝ կովէն կ'ըլլայ, մակըրդուի՝ մածուն կ'ըլլայ։

Ածը (այծ) իր ոտքէն կը կախեն, ոչխարն իրեն։

Ածը կտաւին դուրս։

Ածը սատանայ կ'ըլլայ։

Ածը վախ կը քաշէ մեռնելէն, մսագործը ա՞խ կը քաշէ թէ եղը քիչ կ'երևի։

Ականջդ կարէ՝ եաւդ ձգէ, կ'իմանաս ի՞նչ կ'ըսեն, ի՞նչ կը խօսին վրադ։

Ականջդ որո՞ւ քիրայի տուեր ես։

Ականջիդ բամպակը հանէ։

Ականջիդ ջուրի ձայն կու գայ։

Ականջիդ քո՞ն կ'ըլլաս. (պէտքդ չէ՞)։

Ականջիդ օղ ըլլան ըսածներս։

Ականջ կախէ խօսքերուս։

Ականջը՝ անոր համար չի մեծնալ, վասն զի շատ բան կը լսէ։

Ակաս մակաս՝ աս էր պակաս։

Ակռայ ակռայի վրայ դրած համբերեցի։

Ակռայէս կտրեմ, կ'ուտեցընեմ։
Ակռայ չի կարնար կտրեցնելու։
Ակռայ կը կրծաէ, բայց ինչ ընէ։
Ակռայ փորելով, (պչխելով) փոր չի կշտանար։
Ակօդ կամ Մակօդ տունը չէ՞։
Ակօսին ծռուլթիւնը՝ մեծ եղէն կ'ըլլայ։
Ահա փիսիկը, ուր է մնիկը։
Ահը վեր է քան զԴաւթայ մահը։
Ահը շատ է քան զմահը։
Ահը՝ էշը ձիէն վազուկ կ'ընէ։
Աղբար աղբօր աղբուրն է, թէ ծարուընայ՝ պաղ ջուրն է։
Աղբեր աղբնոց, երկու ձեռքը ծոց. (Վ)։
Աղբէրն աղբօր ըսաւ. Տէ՛՝ հիսապ տեսնենք, էլի աղբեր ըլլինք։
Աղբէրն ասաց. Ծի քեօր (քոյր) չկայ. – քեօրն ասաց. Իմ աղբօր արև. (Վ)։
Աղբարն ասեր է՝ քոյր չունիմ. – քոյրն ըսեր է՝ աղբար ունիմ։
Աղբօրորդի՝ իմ որդի, քրոջ որդի՝ շան որդի։
Աղբին մնիկը ցանեց։
Աղէկ է խելօքին հետ քար կրել, քան խելին հետ ուտել խմել։
Աղէկ է ծերը տանը՝ թէ որ քիչ մը խելք չունե-նայ նա. (Պ)։
Աղէկ է միամտին արդար աչքը, քան խորագի-տին չար միտքը։
Աղէկ կաղմած գիրք, մէջը բան չկայ։
Աղէկ կաթ ուտող մէկը գոնը։
Աղէկ կապիս, աղէկ կ'արձրկիս. կամ աղէկ կի գանաս. (Պ)։

Աղէկ հիւանդի ձմերուկ հասցընող ես։

Աղէկ հիւանդի քահանայի գացող ես։

Աղէկ ձին հարանը (գոմ) կի նային. (Պ. և Խ)։

Աղէկ մանած էլնիր, քէօ մօր պատէն կախած կ'էլնիր. (Վ.)։

Աղէկ մարդիկ՝ աղէկ ձիերն հեծան գացին։

Աղէկութեան փոխարէն ըլլար նէ, սև եզին գանակ չէր ըլլար։

Աղէկութիւն ըրէ՝ ծովը թասլէ, ծովը չբերէ նէ, ալիքը կը բերէ։

Աղէկ օրը բարեկամ շատ կը գտնուի։

Աղէկ օրդ գէշ օրի մի տար։

Աղէկ օրն առավըմէ (առաւօտէն), աղէկ տարին՝ գարնան է։

Աղէմալիքս բերանս եկաւ։

Աղէն (պարոնը) աղնոց, խաթուն աղենոց։

Աղէն որ ձէթ կի տայ (կու տայ), գոգդ ի բաց։

Աղուէսը փուշին վրայ մէյմը կը նստի։

Աղուէսը՝ մեր մարագը ձագ է հաներ, մեր թաղուն հեղուութենէն է։

Աղուէսի փախուստը մինչև քուրքճու թուքանն է։

Աղուէսին գունչը խաղողին չէ հասեր, ըսեր է. դեռ խակ է։

Աղուէսը բազարումը ինչ բան ունի։

Աղուէսին հարցուցին թէ, քանի՞ տեսակ պօս (տիւպարա) գիտես. — ասաց. Շունին առջևէն խաչսելու 32 պօս գիտեմ։ — Հարցին ո՞րն է լաւ. — ըսաց. Լաւն ան է որ ոչ ես շունին տեսնեմ, և ոչ շունը ինձի։

Աղուէսին հարցուցին. վկաղ ո՞վ է. — ասաց. Պոչս է. կամ

Աղուէսին խօսքին վկայ են ուղէը, – պոչն է ցցուցէը։

Աղ ու հաց ենք կէրէը։

Աղ ու հաց, սիրտը բաց։

Աղջիկը մօրը վրայ ինչ որ տեսնէ՝ ան կ'ընէ, մանչը՝ հօրը վրայ։

Աղջիկը պատկուէլ ուզէլիս՝ տան կճուճնէրն է կոտորտում. տղայն ուզէլիս՝ օտարութիւն է վախչում։

Աղջիկ ունեցող մօրը մէկ ձեռքը ծոցը կ'ըլլայ։

Աղջկայ տունը դափ ու զուռնայ. տղի տունը՝ ոչ ինչ չկայ։

Աղ ցանեմ որ չհոտիս։

Աղքատը ամէն տեղ կու պառկի։

Աղքատ առուտուր է (չիւրիւք վոստակ) դատ անելը։

Աղքատ իրիցու քարոզը չանցնի։

Աղքատաց հայրն ու պաշտպանն Աստուած է։

Աղքատին աչ տէրը Աստուած է։

Աղքատին զաւակ ըլլալուդ, հարստին դէրին էղիր։

Աղքատին ունեցածը գլխուն վերև պէտք է ըլլայ։

Աղքատ հպարտ է։

Աղքատն ունի հաց ու պանիր, գիշէրը քունը չի տանիր։

Աղքատութիւնը երկրթէ (կամ կրակէ) շապիկ է։

Աղքատութիւնն աչ՝ մէկ օրուան պէտք էղաւ։

Աղքի կով յղի թըխ էղնի. (Վ.)։

Աղօթքն իր տեղը, թուրն իրը։

Ամառ ձմեռ մէկ խէլքը ինչ ընէ։

Ամառը մարդս խանի թազի ըլլի, ձմեռը վարդապետի կատու։

Ամառուան անձրևին, ձմեռուան արևին մի՛ հաւատար։

Ամառուան փուշը՝ ձմեռուան նուշն է։

Ամառուան գաղը, ձմեռուան կամակն է։

Ամէն անգամ սէլը գալ մալէզ չի բերեր։

Ամէն անգամ տէրտէրը կամ տատը (դայեկը) գաթա չուտեր։

Ամէն բանի հա ըսողը, ամէն բանի չէ՛ ըսողը, ցորեն ու կորեկ ծեծողին քովը կեցող ը՛հ ըսողը։

Ամէն բանի բարակը կը կտրի, մարդուն՝ հաստը։

Ամէն բանի ժամանակ կայ. (Պ)։

Ամէն բան իր գինն ունի. (Ե)։

Ամէն բանը՝ իրան տեղն ունի։

Ամէն բանին՝ շէնք շնորհք համ ու հոտ կայ։

Ամէն բանի սիպտակցընելը՝ լաւ չէ. (Ե)։

Ամէն բան ճերմակ չեն ներկեր։

Ամէն բանի վերջն է գովելի։

Ամէն գլխէն մէյմէկ ձայն կ'ելլէ։

Ամէն գրող ու թարգմանող հեղինակ չէ։

Ամէն թուֆայի (փշոտ թուփ) մէջ չիս գտնուր եփուրա (նապաստակ. Պ)։

Ամէն դարիվեր ունի իր դարիվարն։

Ամէն դեղին ոսկի չըլլար։

Ամէն հայացող մլուտի չըլլար։

Ամէն Ղազար՝ Ղազար չի ըլլիր. ամէն տակուի՝ դազար չի ընիլ։

Ամէնն իրեն տուն, ոսկի ամտուկը մեր տուն։

Ամէն բաածը ած ըլլար՝ սարուաձոր ած կ'ըլլար։

Ամէն ջուր գերան չի բերեր։
Ամէնը սուտ, Աստուած իրաւ։
Ամէն ծաղիկ՝ իր տեսքն ունի. ամէն հատակ՝ իր պէտքն։
Ամէն կլոր՝ խնծոր չէ։
Ամէն կնիկ՝ կնիկ է եղեր. օխլաւուն ալ՝ էրիկ։
Ամէն կլոխէ մէյմէկ թել մաղ առնուսնէ՝ միւ-րուք կ'ըլլայ։
Ամէն հատիկ՝ մարգարիտ չէ։
Ամէն հաւկիթ երկու դեղնուց չունենար։
Ամէն կնիկ չի պըտըտիր պարխանան. որը չորթան կը շինէ, որը թարխանան. (Պ)։
Ամէն մարդ՝ իր թանին թթու չի ըսեր։
Ամէն մարդ՝ իր արևի ձէնն ածեց. (Ե)։
Ամէն մարդ իրան գրածը լաւ կը կարդայ։
Ամէն մարդ՝ իր խալկինին տակը փայտ կը դնէ. (Կ)։
Ամէն մարդ՝ իր եղջիւրը չի տեսնի։
Ամէնն ալ իրանց ձին են քշում. (Ե)։
Ամէն մարդ իր ձին ա քշում, էլ առաջը մարդ չի անում, թէ ո՞վ ա կանգնած. (Ե)։
Ամէն մարդ իր գլխի տէր ա։
Ամէն մարդ իրեն կօրայ մարդու հետ սովորութիւն ունի բարեկամուելու։
Ամէն մարդ իր սրտի խարջ բան կ'ուզէ։
Ամէն մարդ կրակը իր բաղարջի տակ է քաշում։
Ամէն մարդ որ ծնաւ, պիտի քաշէ ամեն դարտ. (Պ)։
Ամէն մարդու իր խոցը կը ցաւի։
Ամէն մարդու սրտումը մի առիւծ է պառկած։
Ամէն մարդ ջուրը իր ջաղացքը կը կապէ։

Ամէն միւրուքէն մէկմէկ մազ՝ կ՚ելլայ մէկ միւրուք։

Ամէն մընի զուռնայով պար գալ չելլար։

Ամենամէկը իրեն փէշակ(արուեստ)բանեցնու.(Պ)։

Ամէն մօրուքաւոր՝ պաշպգ կը կարծես։

Ամէն մէկը իրեն բարեկամին վրայէն կ՚ելլայ ճանչնալու. նայէ զբարեկամը ու կի ճանչնաս ղինքը. (Պ)։

Ամէնքը իրենց տունը՝ հաւերն իրենց բունը։

Ամէն մէկը ա՛լ աղէկ կի սիրէ ինքզինքը, քան զօղկան (զայլս. Պ)։

Ամէն նման իր նմանը կը սիրէ։

Ամէնի գլխին մի սանտր է յարմարցուցել։

Ամենուն ատէթ է, մեզի պէտիէթ է։

Ամէն մէկ խօսքդ մէկ ճավահիր ածի, ամա ո՞ւմ ասես. (Ե)։

Ամենուն չէյնար զարը վէց. (Պ)։

Ամէն պօթայինն՝ քոթն է գոլոխը. (Պ)։

Ամէն ջանի՝ իր շապիկը կպած կ՚ելլի։

Ամէն ջուր իր ճամբան կ՚երթայ։

Ամէն տեղ լեզու ընկնալը լաւ չէ։

Ամէն փորձանքը մէկ խրատ է. ոչ փորձանքը կը վերջանայ և ոչ խրատը։

Ամէն փորձանքին մի մի խրատ, կամ Ամէն փորձանք՝ մէկ խրատ և մէկ օգուտ ունի։

Ամէն քար շարժեցի։

Ամէն քար իր տեղը ծանր է։

Ամէնքը արտ կը ցանեն՝ շիտակ կը բուսնի, իմ ցանածս ծուռ բուսնի։

Ամէնքը բարեկամ չին, որոնք վրադ ծիծաղերեսով կի նային. (Պ)։

Ամէնքը ղիւրը կը խնդրէ։

Ամէնքը իր ցաւը ունի, ջաղացպանն ալ ջուրի ցաւը։

Ամէնքը քեզի՞ պէս գիտէս։

Ամէնքն ալ աղա, հապա մեր ջաղացքը ո՞վ աղայ։

Ամէնքն ալ ակռայիս զարկէր եմ գիտեմ։

Ամէնքն եղան, դո՞ւն մնացիր։

Ամէնքն իրեն Էլօն (Կիկօն, կամ Պաւլէն) կու լայ։

Ամէն օր կուժը ջուր չի բերբեր։

Ամէն տարպայ (անգամ) տէրտէրը գաթայ չուտիր, մէյմ ալ իրիցկինը կ'ուտի։

Ամէնուն հետ եկած փորձանքը է միխիթարանք։

Ամպէ և ոչ անձրևէ։

Ամպը չգոռացած, Ատուած Ատուած չըսեր։

Ամպի գոռալնու գէօրայ՝ անձրև չի գալ։ (Ե)։

Ամէն ոչխար իր պաճախէն կը կախեն։

Ամպուր քաղցածը՝ իրեն ամէնին շէն կ'անի. (Պ)։

Ամպ օրը՝ գալէրը կ'ուրախանան։

Ամպ օրն՝ փնդի կնկան ճաշն է։ (Ե)։

Ամօթը՝ մարդուն է։

Աղջիկ քեզի կ'ըսեմ, հարսնուկ դուն լսէ։

Այբ ըսէ։ – չեմ ըսեր։ – ի՞նչու։ – վասն զի եւեր երկան է։ բեն ալ կայ, գիմ ալ և այլն։

Այս ճիճիմ այլարին է։ կայնէ հուճում այլարին գայ։

Այբը տեսնայ, հօրը միւրուքին սանտրը կը կարծէ։

Այբը տեսնայ՝ մարդակ կը կարծէ։

Այբը տեսնայ՝ բենը մէհքէմին կը տանի կամ կը փախցունէ։

Այլ է մնա, այլ է ճկուռթ։

Այծը՝ ուլուց յայտնի կ'ըլլայ, ազէկ մանուկը յօրոցը։ (Ե)։

Այլոց համար լաց լինողը, իրեն աչքերից կը զրկուի. (Ե):

Այնքան փափկացեր է որ ձուի բեռը կը տանի, և մի հատ չէ կոտրում:

Այ փողակեր, հողակեր:

Այսօր աշխարհ, վաղը աշխար:

Ան ալ իր արևուն վրայ է մոլորել:

Անաղուն ջաղացքի քարն՝ էլ չի պտիտ գալիս. (Ե):

Անամօթը չի պատկառում, թէ հին շորեր էլ հագնի, պէտք է ծռմռկի, հպարտանայ:

Անբանին սանձէն, մարդուն լեզուէն կը բռնեն:

Ան բամբակը ականջէդ հանէ:

Անգն ընգայ մանգն ընկայ, ագռաւնեբու ճանգն ընկայ:

Անբանեցընել դուռը՝ կը ժանգոտի, նամ տեղի ցորենը կը բորբոսի:

Անբանը՝ հաց ուտելիս առողջ ա, բանելիս՝ հիւանդ:

Անգունդը գնաց կապիկ բերելու:

Ան գրացիս կը սիրեմ, որն որ հաւկիթիս աղ մը կը ցանէ:

Անէծքը՝ անիծողին կը դառնայ:

Անէծքը բերնէն ելլայ գլխուն թափի:

Անէծքը գլխուն թափի:

Անէծքը երկու բերնէ թուր ա. համ գէան է կարում համ գէնը:

Անէծքը երկու բերնէ սուր է. թէ ասդին կը կարէ թէ անդին:

Անժամանակ խօսող խօրօզի, գլուխը կը կտրեն:

Ան իրեն նեբկը նեբկեց:

Անլի անհամ խօսակցութիւն։

Անխամ (անհոգ) հարսը հէրանց անխամ վիէ-
սէն անէրանց։ (Վ)։

Անխելք գլխին ձեռքէն, խեղճ ոտքը ի՞նչ կը
քաշէ։

Անխար կի հասկընայ բանին, ինչխար եզը Ա, Բ,
Գ, Դայէ։ (Պ)։

Անխելքը նատեր՝ քարի գլուխ կու լայ։

Անխելքին հետ գործ տեսնելուն, խելօքին հետ
քար կրելը ա՛լ լաւ է։

Անխելքին հետ հաց ուտելուն, խելօքին հետ
քար կրելը ա՛լ լաւ է։

Անկաձն ընդո՞ր չի մեծանում, որ շատ բան ա
լսում։ (Ե)։

Անկաձի լսածն ուրիշ ա, աչքի տեսածն ու-
րիշ։ (Ե)։

Ան կաշուն մէջ՝ տէրտէր չի պառկի։ (Պ)։

Անկից հաւկիթ առնողը, դեղնուց չի գտնար։

Ան կուշտին ի՞նչ ըսեմ, որ քառասուն լօխման մե-
կէն կ'ուտէ։

Անհամնալ պէտք չէ։

Ան հենէկին (հանաք, կատակին) ի՞նչ ըսեմ որ
կէսը ղորդ է։

Անհիմք տուն չի շինուիլ։

Անհոգին հոգը, Աստուած կը հոգայ։

Անհովիւ արծէր, անփարախ պառկեր է։

Անհունար մարդի լեզուն՝ երկար կ'ըլլի։

Անձողի (խանձոդ, քոսով) հոտը գիպած գլու-
խը, ձնումը կը գնե՞ն թէ կրակումը։

Անձը բօղազիցն է առաջ գնում։

Անձրև օրը հաւերուն ջուր տուող շատ կ'ըլլայ։

Անձրև օր ճոռոթան խաճար չէն ի տար. (Վ.):

Անղամի ղամն, Աստուած ա քաշէլ. (Ե):

Անճարը՝ կերել ա բանճարը:

Անձրկի մուկը, ուտէ չոր կորեկը. (Պ):

Ան մարդն որ Աստուած ունի, աղքատ չէ:

Անմիտը՝ միշտ դժբախտ չմնար. և ոչ խմաստունը՝ մշանջենական բարեբախտ:

Անշուն գեղ է գտեր, առանց գաւազանի կը քալէ:

Անոյշ լեզուն՝ օձը ծակէն կը հանէ:

Անոր խօսքը չուանի վրայ չէն դներ (բանի տեղ չէն դներ. Ե):

Անունդ ինչ ա. — Մալխազ. ա՛լ աղէկ ա՛լ խաս:

Անունը կայ՝ ինքը չկայ:

Այնչափ կը սիրեմ, որչափ աչքիս մուխը:

Այնպէս աղէկ բնուԹք ունի որ, ազատա Ջուրեբրուն հետ կը խմուի:

Այնպէս անունդ կ'աւրեմ որ քառասուն խալիպ սապոն չի յատրկցներ:

Այնպէս ըրէ որ, ոչ շամփուրը էրի, ոչ միսը. (Ե):

Այնպէս բազմուԹիւն կար որ, շունը տէրը չէր ճանչնար:

Այնպէս խօսք կամ բան կ'ըսես որ, էշն ախոռը կը զրայ. . . . մուկը ծակը կը խնայայ:

Այնպէս գեղեցիկ է որ, արևուն կ'ըսէ կամ էլ, կամ կ'էլլեմ:

Այնպէս գեղեցիկ է որ, մուԹ պատերուն լուս կու տայ:

Այնպէս տէրտ տամ որ, քու տէրտդ մոռնաս:

Այնպէս եմ որ, դանակ զարնեն՝ արիւնս չելլէր:

Անպէս երեսի կաշին հատտ է, որ հագուիմ Երուսաղէմ երթամ՝ չիմաշիր։

Անպէս ըրէ՝ որ կամրջի տակի ջուրը չփախցընես։

Անպէս թուրքըցեր է՝ որ սուրբ Աստուածն ալ մոռցեր է։

Անպէս թուրքըցեր է՝ որ հօրը խաչն ալ մոռցեր է։

Անպէս խօսք մը ըսաց՝ որ ակն 'ի մատանուոջ։

Անպէս կ'ընեմ՝ որ եկած ճամբան կը մոռնայ։

Անքան չէզար ինծի պէս, ինծ ալ արիր քեզի պէս։

Անխելքը կը դատի, խելօքը կ'ուտէ։

Անխելքին հացը՝ խելօքին փորը։

Անոր ակռաները կոտրատած է։

Անոր մօրուքին սանտրը ույտուրմիշ ըրեր էր։

Ան որ լռել չի գիտեր, խօսիլ ալ չի գիտեր։

Անոր համար շինն ու շէքէրը մէկ է։

Անոր ով օշտ ըսաց, որ ո՞ւնտ կ'ընէ։

Անոր չոր փայտը վառելուն, մեր թացը կը մնայ։

Անոր չուանովը հօրը մանողը, հոն կը մնայ։

Անոր ջուրին փիլաւ ձգել չըլլար։

Անունը կայ, անուշենիքը կամ ամանունը չկայ։

Անունն ելլալուն՝ աչքը ելլէ։

Անունդ գառ հանէ, այլոց ոչխարը կէր։

Անունը տուր՝ տեղը դցի. (Ե)։

Անուշ անուշ ուտելուն, կծու կծու փսխելը կայ։

Անուշապուր դարձուցիր։

Անուշ արի՛ փեսայ ճան. (ուշ ուշ եկուր)։

Անուշ հոտ է առեր, կարծեր է թէ խորոված է. գնացեր տեսեր է որ էշ կը տաղէն։

Անուշ քուն կ'ըլլայ, ում (որուն) կողը տաք է. (Պ)։

Անուշ լեզուն օձը ծակէն հաներ է. ծակող լեզուն սուրբը քովէն կը վանէ։

Անուսաա արուեսաը (կամ փէշակը՝) հարամ ա. (Ե)։

Անպաշարը՝ չուալը գրեր են, ոտքերը դուրս է մնացեր։

Անպէս կարծեմ թէ մարդ ես դարձեր, մէյմ ալ տեսնամ՝ ջարդ ես դարձեր։

Անպէս հպարտ է, ինչպէս թէ ինչուր ընկուզի ծառին մօտ ըլլար. (Պ)։

Անպէս կը սիրեմ, որչափ աչքս մուխը, կամ փոշին։

Անպէս մարդ է, որ իր միսը կ'ուտէ, խասապին միննէթ չըներ։

Անպէս մէկ ծաղիկ՝ որ հոտ ընողին քիթը կ'էյնայ։

Անպէս մէկ մարդ է՝ որ պղտոր ջուրերուն հետ կը խմուի։

Անպէս մէկ հէնց տղայ ա, որ պղտոր ջրի հետ կը խմուի։

Անպէս մնառէց որ, քառասուն ղալիպ սապոնով չի մաքրուիր։

Անպէս յանդիմանութիւն՝ որ շունն ուտէ կը կատղի։

Ան պատին՝ ան ծեփը կը բաւէ. (Ե)։

Անպտուղ ծառին քար նետող չըլլար։

Անջուր մի՛ բոբիկանալ։

Ան ջուրէն վախցիր, որ ոչ կը թշայ և ոչ կը խշայ։

Անսխալ՝ միայն Աստուած է, ինչ ընենք։

Ան վաղ էր՝ որ էշը կաղ էր։

Անվարել հողը թէ ցանեցիր, ղուրտ ու ղուշ կ'ուտի սերմդ. (Ե)։

Անվարտիսին մոքէն, օրը տասնըհինգ կաղ կըտաւ կ'անցնի։

Անտէր դառը՝ դալն է կերբեր։

Անտէր քաղաք, թէրմաշ մարդիկ։

Անտէր փոր, անտակ ձոր։

Անցած բանին մի՝ ափսոսար։

Անցած թաթաւուն քէփէնեակ (հովանոց) չի պէտք է. (Պ)։

Անցած օրին օր չհասնիր։

Անցանք դարձանք, մեղայ Աստուծոյ։

Անցաւ դարձաւ, բարև քեզի։

Անցաւ սուտերը՝ պի դան ղորդները. (Պ)։

Անցկացած բանին մի՝ ափսոսալ. անհաւատ բանին մի հաւատալ։

Անցուկը մոռցուկ կ'ըլլայ։

Ան քու բերնիդ ապուրը չէ։

Անօթի հաւը երազումը ցորեան է տեսնում։

Անօթին երազը հաց կը տեսնէ, ծարաւը՝ ջուր։

Անօթութիւնը էն աղէկ ապուրն է։

Աչխարս դմակ, ես մին դանակ։

Աչխարս դմակ, մարդը դանակ, կարէ ու կէր։

Աչխարքը տես ու ուս է։

Աչխարք գլխուս մթնեց։

Աչխարք խաչկին, ինք մէջը շերեփ։

Աչխարքը մանղալ, դուն մէջը մաչա։

Աշխարք էրի, խօրոմըմ խոտը չի էրիր։
Աշխարք քօռ գալիս էն, քօռ գնալիս. (Ե)։
Աշխարհքը խմաստուն Սողոմոնին չէ մնացեր։
Աշխարքիս անիւը դարձեր է։
Աշխարքի էնդիցն ա խաբար տալիս. (Ե)։
Աշխարքիս խազըխը փրթեր է։
Աշխարքիս մէջը՝ մէկը վեր կ'ելլայ, մէկալը վար կ'իջնայ։
Աշխարհքս լայնարձակ է, ինչ օգուտ որ սիրտս նեղ է։
Աշխարհքս շինողն ու աւրողն է լեզուն ու գրիչն։
Աշխարհքս արօտ, ես մէջը կարօտ։
Աշխարքս թալան թալան ա. նամարտը իշի փալան ա. (նէմէրտը իշու փալան է. Ե)։
Աշխարքս ոմվ է կերեր. — հեզն ու խոնարհը։
Աշխարքս սանդուխ է. մէկը կ'ելլայ, մէկալը կ'իջնայ։
Աշխարքիս մալը աշխարքը կը մնայ։
Աշխարքիս մէջ սարկէն լեւ բան չիկայ, սարկէն ալ գէշ բան չիկայ։
Աշխոյժ ձի մը գարմանել, ու երիտասարդ իշխանի մը ծառայել՝ վտանգաւոր բաներ են։
Աչից կի հեռանաս, սրտանց կ'օտարանաս. (Պ)։
Աչից ծարուր կը թռցնէ. (այնպէս գող է որ)։
Աչիցս եղը (լուսը) կ'ուտեցնեմ։
Աչք բանալու չի տար։
Աչք գոցեցի։
Աչքդ կը կարէ՞։
Աչքիլուս երթալ։
Աչքդ բաց գիտցիր ոտքիդ դրած տեղը, չըլլայ թէ փոս մը ինկաս։

Աչքդ լուս։

Աչք դնելու տեղը՝ աչք կը հանէ։

Աչքդ ո՞վ է փորեր. – Իմ մարդս. անոր համար տակէն է փորեր։

Աչքդ ո՞ւմ հանածն է. – Աղբօրս. անոր խորունկ է հանած։

Աչքդ չորս արա։

Աչքդ չորս բաց։

Աչքէ ալ խալըսեցանք, աչքի ցաւէ ալ։

Աչքից էլ պրծիլ, աչքացաւից էլ. (Ե)։

Աչքէ տես՝ բերնէ կարօտ մնացինք։

Աչքը գոցեր առեր է։

Աչքը ականջը ծակած՝ դուրս ձգածին մէկն է. (դմլօշ մարդուն կ'ըսուի)։

Աչք ընել։

Աչքը որչափ բարձրանայ, օնքիցը վեր չի կարող գնալ, կամ չելլեր։

Աչքը որչափ լուսաւոր ըլլայ, օնքէն վեր չելլեր։

Աչքը տեսածիցն է վախնում։

Աչքին գերանը թողուցեր է, ուրիշին աչքին շիղը կը քնտռէ կամ կը տեսնէ։

Աչքի չտեսութիւն, անձի կուսութիւն է։

Աչքին փեռը մեն եկաւ. (աչքը դարձաւ)։

Աչքին քէօքը ճերմկցեր է. (ծերացեր է)։

Աչք կայ՝ լուս չկայ. (հարբածի)։

Աչքդ արդար լաւ ա, քանց միտքը մեղաւոր. (Ե)։

Աչքն երեսին վրայ՝ արուն արցունք կու լայ։

Աչքն երեսին վրայ կը խաղայ, կամ կը խլվլայ։

Աչքն ու երեսը բացուեր է։

Աչք ունի, ձեռք չունի. (կը տեսնայ՝ չի դպչիր):

Աչք ունի՝ լուս չունի, որ վրան նայի. (կը նա-խանձի):

Աչքս կը պաղիր՝ ինչ եկար:

Աչքս քթիդ բարև կու տայ:

Աչքս կաթնապուր՝ պաղ մը տուիր, պաղ մ'ալ տուր:

Ապաւինած սարերս ձուն եկաւ:

Ապերախտին աղէկութիւն ըրիր, մի ժգոհար, գիտցիր որ լաւութիւն շատ ես ըրած:

Ապուզամպախ կը խօսիս:

Ապուր ես կերեր:

Ապուր մը կերանք որ:

Ապուրն ապրանք՝ խուսուրը պարծանք է:

Ապուրս ալ ապուր ըլլայ, բերանս էրելը աժէ:

Ապրանքը մուխաննադ չէ, (նենգաւոր, ապի-րատ), տէրն է մուխաննադ:

Ապրի ապրանք պէտք է (մարդուս), մեռնի պա-տանք. կամ Ապրողին ապրանք, մեռնողին պատանք:

Ապրի ապրեցընողը, ծաղկի ծաղկեցընողը:

Ապրի զրկեալն, չապրի զրկողն:

Ապրի մեռած մօրքուրդ:

Ապրիլ կայ երկաթ է, ապրիլ կայ արծաթ է:

Ապրինք էլի. (տահա):

Ապրինք նէ՝ ապրանք պէտք է, մեռնինք նէ՝ պա-տանք:

Ապրուստս թող քիչ ըլլայ, գլուխս գինի:

Աջովը գարի կու տայ, ձախովը հաւկիթ կը բնտռէ:

Առանց տման տանձի չեն երթար:

Առանց Աստուծոյ կամացը տերև մ'ալ չի շարժիր։

Առանց աքաղաղի ալ կը լուսանայ։

Առանց ինչու գլխի հարանիք կ'ըլլայ։

Առանց խունկի մոմի ուխտատեղ կ'երթայ։

Առանց շունի գեղ չըլլար։

Առանց ոսոի ծառ չըլլար. (անսխալ մարդ չըլլար)։

Առանց չուանի կապուեր ենք։

Առանց պանդոկապետի հաշիւ (չըլլար)։

Առանց վարպետի, արհեստը փուճ է։

Առանց փուշի վարդ չըլլար։

Առապան կոտրի նէ, խրատ տուող շատ կ'ըլլայ։

Առաջ գետին անցքը գտիր, ետքը ջուրը մտիր։

Առաջդ անցեր է. (կատղեր ես։)

Առաջ լուծ ու կամդ պատրաստիր, ետոյ գիժ (խենդ) մոզու ականջիցը բռնիր։

Առաջ մտածէ, վերջը սկսէ։

Առաջ մտածէ, յետոյ խօսէ. փողիդ հաշիւը գիտցիր, ապա մտիէ։

Առաջ չիլ, կամ շաշի էր, արեգակը զարկաւ կուրցաւ։

Առաջուց խելքդ ո՞ւր էր։

Առատաձեռնութիւնը անյատակ է։

Առտիցը մէկ՝ ագահիցը երկուսն են գնում։

Աւելութիւն բանից, պատերազմող է լսելեաց։

Աւաւ քալէց. (զօրացաւ, առաջ գնաց)։

Աւաւօուայ շառը (գէշութիւնը) լաւ ա, քանց իրիկուայ խէրը։

Առիւծը կատուին չեմ խղդել տար։
Առիւծը ճանճ չի բռներ։
Առկոց եղաւ. (արսըզցաւ։)
Առնանցս որին երևնամ։ — Ինծի մի երևնար տէ, որուն կ'ուզես երևցիր։
Առնաւուտերէն կը խօսիս։
Առնելիք ուզելու՝ ամէն մարդ պատրաստ. տալիք վճարելու՝ քիչ մարդ պատրաստ։
Առնողի աչքը՝ ծախողին ձեռքն կ'ըլնի. (Ե)։
Առուտուրն՝ աղբեր են. ինչանք չըտաս, առնել ալ չիս. (Ե)։
Առպերէն խօսելու ինչ կայ. շինէ շինէ ու խօսէ։
Առջևը խոտ ձգածին պէս (ոչխարին), գմակը կը նայի թէ գիրացաւ։
Առջի ըսողը չի գիտեր, գիմացինը ինչ պիտի ըսէ։
Առջի ասողը չի գիտուր, թէ ետինը ինչ պիտի ասէ։
Առսըզին երեան են թքեր, ըսեր է. թաթաւ կու գայ։
Աս ալ հերիսային եղն է։
Ասացի չասացի։
Աս ալ կ'անցնի, աս ալ չի մնար։
Աս բամբասանք չէ, բանասանք է։
Առիւծը մեռաւ ու գնաց, բայց մորթը հոն է։
Աս գիշերը ականջիս մէջ մարդ պառկեր է։
Ասեղ կերած շուն է դարձեր։
Ասելը հեշտ ա (կամ է,) անելը դժար. (Ե)։
Ասեղը քեզի խօթէ, մախաթն ուրիշին։
Ասեղը ուր որ մնէ, դերձանը ետևէն կ'երթայ։

Ասեղի ծակ կը բնտռէ՝ որ պահուի։

Ասեղով ժողվեց՝ աւելով փռեց։

Ասեղով հոր կը փորէ։

Ասեմ նը՝ գէշ կ'ըլլամ, չասեմ նը՝ էշ կ'ըլլամ։

Ասեր են առուտուր, և ոչ թէ առ ու կուլ։

Աս զարիֆ է, աս մօտայ, նէ սուֆա մնաց՝ նէ օտայ. գուն գնա հազար տարի մնամնա. Մէ-լէք տուտու Փուլճեան կու գայ։

Ասլը շաշը էինք, արևն ալ զարկաւ քէօռացանք։

Աս խմորը գեռ շատ ջուր կը վերցընէ։

Աս խռխռոցն որ հոս կայ՝ զատիկն ուշ կու գայ։

Աս խօսքին՝ վազած ջուրերը կը դադրին։

Աս մօրուքը շատ պատարագ տեսեր է։

Աս մարդուն կուտը պօլօզ է, կամ տախտակը պակաս է. և կամ բամպակը պակաս է, և կամ վաղնաթը ջրի է։

Աս չոր գլուխը ինչէր է տեսեր, ինչէր ալ պի-տի տեսնէ։

Ասողին, լսող պէտք է։

Աս տաքին ձիւն կը դիմանա՞յ։

Աս տարի խնամու տարի չէ։

Ատուած ա՛լ պէթէրէն պահէ. (Պ)։

Ատուած ամէն բանով մարդը կորցնել չի։

Ատուած ամէն շնորհք՝ մի մարդի չի տալ. (Ե)։

Ատուած ասիլ է, ան ալ էղիլ է. (անբան մարդու համար. Պ)։

Ատուած բոր տայ՝ էղունկ չտայ։

Ատուած գիտէ գողը ո՛վ է։

Աստուած գին տայ ու առնէ։

Աստուած զմարդը ուրիշին կարօտ չընէ։

Աստուած եղէ մամ վառողին՝ եղէ մամ կու տայ, մեղրէ մամ վառողին՝ մեղրէ մամ։

Աստուած երկու ականջ է տուեր՝ մէկ լեզու, երկուս լսէ՝ մէկ խօսէ։

Աստուած երկու ականջ է տուեր, որ մէկէն մտնէ, մէկալէն ելլէ։

Աստուած երկու ձեռք է ստեղծեր, մէկ գլուխ։

Աստուած ի՞նչ կ՚ընէ։ – Սանդուխ կը շինէ. որը վէր կը հանէ, որն ալ վար կ՚իջեցընէ։

Աստուած իշտահը որոնն է տուեր, փիլաւը որուն։

Աստուած իր խեռ ծառային՝ աղքատութեամբ կը սանձէ։

Աստուած կանչողը փուռը չի մնար, կամ ղուրկ չի մնար։

Աստուած հալալին կը տայ. (Ե)։

Աստուած հոգի է տուեր, չի՞ կարնար առնել։

Աստուած մահ տայ, բաժանմունք չտայ մեզի։

Աստուած մէկին որ ուզէ տալ, գլխուն՝ կռնակին զարնելով կու տայ։

Աստուած որ մի մարդի բան յաջողի ոչ, բանտէրն հազար ալ աշխատի՝ ոչ ինչ չշինիլ. (Ե)։

Աստուած մէկ ձեռքը մէկալին կարօտ չընէ։

Աստուած պահէ յայտնութիւնի հեծելէն, վարդավառի հեղեղէն։

Աստուած լեռը կը տեսնայ՝ անոր կէօրէ ձունը կու տայ։

Աստուած որ մէկին քալցընէ, թուչունն ո՞ւր կը մնայ։

Աստուած սարի կօրայ՝ ձին (ձիւն) կու տայ, կամ կը դնի. (Ե):

Աստուած վատը կը Ճանաչէ:

Աստուած օրը կու տայ, բարին ալ հետը:

Աստուծմէ զատ ոՀվ է արդար:

Աստուծոյ աչքը որ քաղցր լինի, մատաղի գառը իրան ոտովը կու գայ դուռդ. (Ե):

Աստուծոյ ըսածը կ'ըլլայ:

Աստուծոյ չինածը՝ մարդիկ չէն կրնար աւրել:

Աստուծոյ չէն հարցըներ, աղուն անուն շատ արև կը դնեն:

Աստուծոյ պահած գառը, գալը չէ տարեր, կամ գէլը չի ուտիլ:

Աստուծոյ սուրը գուլ է՝ ուշ կը կտրէ, բայց խորունկ կը կտրէ:

Աս տունը փոս է, ամէն խեւը հոս է:

Աս քաղքին հողն օրհնած, մարդն անիծած:

Ասօր ինձի, վաղը քեզի. (Պ):

Ասօր Կիրակոս, վաղը Մարտիրոս. մին մին գալիս են. (Ե):

Ասօրուան գործդ վաղուան մի թողուր:

Ասօրուան հաւը վաղուան սագէն լաւ է:

Ասօրուան հաւկիթը վաղուան սագէն աղէկ է:

Տամ մը կը հանէ անդամը:

Տամ քչփորելով՝ փոր չի կշտանար:

Տըմի կեղտ (ակռայի աղտ) մարդ չի կշտացուի. (Ե):

Ատ խմորը՝ դեռ շատ ջուր կը վերցընէ:

Ատ խոսքին՝ վազուկ ջրերը կը կայնին:

Ատոր՝ էրած սրտին մանանեխ կ'ըսեն:

Ատ սանտրը՝ ես կտաւ չունիմ:

Ատ քեզի ըլլայ խրատ. որ սղ չցանես կտաւատ:

Արարիք նատեր, Վարագ կի խաչի. (Վ.):
Արարիք նատեր, Վարագ կը հաջէ:
Արած ցեխին՝ մէկ փարջ ջուրն ալ հերիք է. (Վ.):
Արաճի Մուրատ, մուրս 'ի վրատ,
կարգուեցար, ո՞ւր է հինատ:
Արատաւոր մարդէն վախցիր:
Արեմանն կամ Երևան գեղին նշանաբան չի ուզէլ. (Ջ.):
Արևը՝ աղբով չի պղծուիր:
Արև ըլլայ նէ, մարդու վրայ չի ծագեր կամ չը-ծաթեր:
Արևը վատ տեղն է մար մտնէլ. (Ե):
Արևուդ գերձանը կարի:
Արևը չծագած՝ ինչէ՞ր կը ծագին:
Արևուս թեղը կտրեցաւ, կամ կապը քակուեցաւ, ինչուան որ գտայ:
Արեգակը չարրիսը կը սիմէ, չարրիսն ալ ոտքը:
Արդար եղի պէս վրայ կ'ելլէ:
Արդէն շիլ (շաշը) էր, արևն ալ զարկեց բոլորովին կուրացաւ:
Արեգակը որ այնչափ բարձր ու լուսաւոր է, մէկ փոքր ամպը կը ծածկէ:
Արթուն հոգին և թեւաւոր միտքը անգործ չէն նստիր:
Արդը քիոն չի՞. խօ մարագ քիոն ի. (Վ.):
Արդը քուկդ չէ նէ, խօ մարագը քուկդ է:
Արի հիմա աս պոչատ էշը ցեխէն հանէ:
Արծած խոզս՝ էս գիտեմ:
Արծիւը իր փետուրէն չինուած նետով կը վիրաւորուի:
Արծիւը ճանճ չի բռներ:

Արընաէրդ ըլլայ՝ արուռնէդ ըլլայ։
Արընաէրս ըլլայ՝ աղբարս ըլլայ։
Արուռնը չեմ՝ մոնար։
Արուռնը՝ ջուր չի դառնար։ (աղգականութիւնը չի պաղիր)։
Արիւնը տեղը չի մնալ, միայն թէ համբերութեամբ։
Արիւնն արուռնով չէն լուանար, այլ ջուրով։
Արուռնք ըրէ, կանոն մըներ։
Արուռն քրտընեցայ, ինչուան որ ըրի։
Արպերէն չեմ հասկընար։
Արջը գէլին փայ դառաւ, նրա բանն խարապ եղաւ։ (Ե)։
Արջը թէխմախ չկարնար խաղալ։
Արջը իր ահէն կը գոռայ։
Արջը խաղի եղաւ, տանձը մոռցաւ։
Արջը խաղոդ գտաւ, տանձը մոքէն եղաւ։
Արջը խաղողի եղաւ (խաղոդ փնտռելու), տանձը մոխցն ինկաւ։ (եղաւ)։
Արջը ձագը շատ սիրելուն, սխմրտեր խղդեր է։
Արջը մեշիցը (անտառ) խռովել է, մեշէն երբեք խապար չունի։
Արջը ձագը ուտել ուզէ նէ, ցեխով կը մալակոնէ՝ եռքը կ'ուտէ։
Արջին կալումը լուծ անել տալը հեշտ է, բայց աղբը վեր առնելը դժուար է։
Արջին ձագը տամազլըխ չըլլար։
Արջը մենք խաղցուցինք, շապաշը դուք առիք։
Արջը ոմ, թէխմախը ոմ։
Արջն քառասուն խաղ է կանչէր, ամէնքը ալխաթին (վայրի տանձ) կսթին վրայ է։

Արտ՝ քու բուսուկդ կ՚ասեմ. չէ նէ՝ Բասեն ցո-
ւրեն շատ։
Արքայ մի հպարտանար, քեզնէց մեծ Աստուած
կայ։
Աւազի վրայ տուն չի շինուիր։
Աւելի գեանի տակն է, քան երեսը (խորամանկ
մարդը)։
Աւելի գիւրին է՝ որ գազան իր բնութիւնը փո-
խէ, քան թէ մարդ իր բնութիւնը։
Աւելի պատառը՝ փոր չի ծակեր, կամ՝ չէ ծակում։
Աւելի մալը՝ աչք չի հաներ։
Աւետարանը տուեր, դամպուռան է առեր։
Աւետարանի կողքէն մի խօսիր։
Աւեր մարդ է դարձեր։
Աւեր ջաղացքի պէս (բանեբս) եղեր կ՚երթայ։
Աւեր ջաղացքի օլուին ինչ է, առուն ինչ. (ան-
օգուտ հարստի աղքատին օգուտն ինչ)։
Աւեր փեսան, շէն աներանցը ունեցածը իրենը
գիտէ կամ կը կարծէ։
Աւեր քաղքին՝ շէն անուն։
Ամի վառուդ, ամի գլխուդ, եղեր կ՚երթաս։
Աքաղաղը կատարքովը կը պարծի, խեն ալ իր
մեծ քիթովը։

Բաբէլոնի խառնակութիւն է։
Բաժանեա՛, զի տիրեսցես։
Բալի (կեռաս) ծառին շան գլուխ։
Բախալ արդար տուր՝ արդար առ։
Բախտ, բախտ է սա. փողի բարաքաթին ալ
նալլաթ, անոր կարողին ալ։
Բախտը խուլ է, պռռացողներուն չնայիր, միայն
գործքերը կը տեսնէ։

Բակը ծուռ է, կովը կաթ չի տար։
Բաղարջին մեծը, խմորին շատէն կ'ըլլայ։
Բաղնեց թասը կորեր է։
Բաղնիք երթայ՝ զուռնային կը հաւնի. հարսնիք երթայ նէ՝ զուռնային։
Բաղնիք մտնողը՝ պէտք է քրտնի։
Բաղնիքում խաղ ասելը, օտար տեղում պարծենալը, դարիցը վեր ձի քշելը։
Բամբակը նօսր է։
Բամբասանք չէ, բանն առանկ է։
Բան բացիր գլխուդ։
Բան դրին՝ փախաւ, հաց դրին հասաւ։
Բաներ ինս բուրդ է։
Բանը բանելով, Ճամբան քալելով կը լմննայ։
Բանը բանէն անցաւ։
Բանը բանէն անցնելէն վերջը, ամէն մարդ խելք սորուեցնող կ'ըլլայ։
Բանը բան կը բանայ, խօսքով բան չի բուանիր։
Բանը բան կը ցուցունէ՝ կամ շանց կուտայ. (Ե)։
Բանը գիտնալը չէ. բանը ընելն է։
Բանը ընելով, էշը քշելով առաջ կ'երթըցուի։
Բանը կը հանէ սրտին դամը։
Բանը կոթ է։
Բանը շինելով, էշը քշելով։
Բանը ո՞վ անի, էս ու դուն. հացն ո՞վ ուտի. էս ու դուն. (Ե)։
Բանը ո՞վ ընէ, էս ու դուն. հացը ո՞վ ուտէ. էս ու դուն։
Բանը սահթուն, հոգսը (հոգալը) տարուն։
Բանը սկսիլը չէ, գլուխ հանելն է։
Բանը չաթալ է եղեր, գրքերը վար ինքեցուցէք։

Բանն ան է որ Աստուած յաջողէ։
Բանն արա՝ Եռքը (յեռոյ) պարծենցիր. (Ե)։
Բանուկ երկաթը՝ ցոլուն կ'ըլլայ։
Բան չունիս մի կամ բանդ տես։
Բանս բուսաւ, ինչուան որ խօսք հասկըցուցի։
Բանտ մի է աշխարհ, մէջէն պակաս չէ աշխար։
Բարակ չուանով մի՛ քաշէր։
Բարեկամէդ որ բերդիս, կամ փոխ ստակ տուր, և կամ փոխ առ՝ մի՛ տար, կը հեռանայ։
Բարեկամը գլխին կը նայի, Թշնամին ոտքին։
Բարեկամը նեղ օրն է պէտք։
Բարեկամի հետ՝ կերուխում ըրէ, առուտուր մի՛ ըներ։
Բարեկամին հացը՝ Թշնամու պէս ուտելու է։
Բարեկամի հացը՝ պատճառներով են ուտում։
Բարեկամ ինձի չ'օգնող, Թշնամի ինձի չ'ընասող, երկուսը զոյգ մը օղ։
Բարեկամացանք, բարեբարեցանք։
Բարեկամներուն ամէն բանը հասարակաց է։
Բարեկամներուն բարիքը՝ մարդուս իրենն է։
Բարև ըսողին՝ բարեկենդանքի կ'երթայ։
Բարև տուինք խօսեցուցինք, երկուս կուտանք ձայնը չի կտրեր։
Բարև տաս նէ, անոր համար բարեկենդան կուգայ։
Բարի զաւակը որորոցինն է յայտնի լինում։
Բարի սէրն՝ կռուին կը կոխէ (Թէֆս կընէ. Պ)։
Բարկասրտին քովը մի՛ կենար։
Բարկացող մարդը, իր պարկը կը պատռէ։
Բարկացող մարդը, շուտ կը ծերանայ։
Բարկացող մարդը, շուտ կը պառուի. (Ե)։

Բարձր բարձր տուներ, մէջը անօթի շուներ։
Բարկ քացախը՝ իր ամանը կը ճաթեցընէ կամ կը տըրտաքեցնէ։
Բարձր սարին բուքն ու քամին շատ կ'ըլլայ։
Բարտին կռացնես (ձկես), քեզ վրայ կ'ընդունի, դլուխդ կը ջարդի։ (Ե)։
Բաց ասեմ և ոչ ամաչեմ։
Բաց բերան մարդ է։
Բացը մի՛ նեբկեր։
Բեռին մեծը, մեծ իշուն կը բառնան։
Բեռին տակը՝ էշը չի զբաղ։
Բեռ մը ընկուզի ճռճռոց, երկու հաւկըթի կըռկռոց։
Բեր զան աջը, որ բռնէ զաս խաչը։ (Պ)։
Բեր ան խելքը, որ երթայ լռէ՝ դայ պառկի։
Բեր ան մարդը՝ որ ատ բանը ընէ։
Բերանդ ականջիդ ա՛լ մօտ է, քան գլխս։
Բերանդ բանալուն, աչքդ բաց։
Բերանդ բաց անես հող են ածում, աչքդ բաց անես թոզ են ածում։
Բերանը բաց, մէջը թաց։
Բերանը դուռ չունի։
Բերանը ծուռ, աչքը ծուռ, ետևէն տես, ճամբայ տուր։
Բերանդ տաճա՛ր դառնայ։
Բերանը կաթէն է երեր, մածունին ալ կը փչէ։
Բերանը կաթ կը հոտայ կամ հոտի։
Բերանը սատանի լեզու կայ։
Բերանը ոսպ չի թրջիր։
Բերանը չափ չունի։
Բերանը քամուն է բռներ։

Բերան կայ՝ լեզու չկայ։

Բերան կայ՝ հաց չկայ, հաց կայ՝ բերան չկայ։

Բերան կայ պագնելու, բերան կայ փակելու։

Բերանն երածին չի նայիր, թավայէն կ'ուտէ։

Բերաննին լեցուն է, բայց փորերնին պարապ։

Բերան չէ, սաղմոսարան է։

Բերանս երածին կէօրէ, տղուրս ալ տղուր ըլլար։

Բերանս մաղ բուսաւ, ինչուան որ հասկըցուցի։

Բերդն իրա մէջէնը կը քանդուի. (Ե)։

Բերնիդ է ընկեր։

Բերնիդ կապը կապէ՛, և լեզուդ քնացրու։

Բերնին եկածը գուրս կու տայ։

Բերնին եկածը չի նայիր, դուս կու տայ։

Բերնին կապը կտրել։

Բերնիցդ է ոսկի վեր ածիր, ո՞ւմ պէտք է ասես։

Բերնովս ուզեմ, ինչովս ուտեմ։

Բեւեռով զբեւեռ թափել։

Բղի գլխին՝ բռնցկով տալ չի ընկիլ. (պիղին ծայրին բռնցկով չզարնուիր)։

Բթամիտ մարդ է։

Բթնեբս բռնուեցաւ։

Բիրդ կը վերցնես, գող շունը կ'իմանայ. (Ե)։

Բլբուլն իր դարտը կը լայ (կու լայ), ագռաւը ղարղառ կ'անի։

Բնաւեր հաւք է դարձեր։

Բնութիւնը քիչով կ'օգտուի. (Պ)։

Բոլորը մօրս խաթր են հարցընում, հօրս հէջ չկայ։

Բողկը որքան սէյրէկ ըլլի, էնքան գլուխը մեծ կը բռնի։

Բողկը որքան նօսր ըլլայ, այնքան մեծ գլուխ կը կապէ։

Բողկի նօսրը աղէկ է, քան զսրխը, կամ Բողկի նօսրը աղէկ է։

Բոր տայ՝ ըղունկ չտայ։

Բուրդ է բանէրս։

Բուրդը տուէր է։

Բուրդը տուած (ընկած՝ ծերացած) շուն կը նմանի։

Բուրդը քամուն տուին։

Բուրդ ու բապուշ փախաւ։

Բռնութեամբ բան չի լմննար, այլ անուշութեամբ օձը ծակէն կ'ելլէ։

Բրդին տալու առնելու է։

Բրդողը գիտէ, ուտողն ինչ գիտէ։

Բրդուշ մը թան՝ կ'ածէ կով մը կթան։

Բրինձը քարոտ է։

Բրուտը կժի ունկը որ գինը ուզի, էն գինը կը չինի։

Բրուտը կժին ունկը որ գին ուզէ հոն կը դնէ։

Բրուտը փարչին խուլփը որ գին ուզէ կը դնէ։

Բրաին կուլայ չի ըլնիլ։

Բրաին տունը փարչ չ'ըլլար։

Բոշաշ ինչ տեսնես, կը գողաս։

Բոշային փաշայ են ըրեր, նախ իր հայրը կախեր է։

Բոշան փաշայ չըլլար. կամ Բոշէն փաշայ չի գառնալ. (Ե)։

Բոշան խաթուն ալ ըլլայ, բարձին եռևէն հաց կը մուրայ։

Գաղանին՝ գաղանով պէտք է պատժած (պատ-
ժել. Ե)։
Գաթան ծոցը պաս բռնել կըլլա՞յ մի. (կամ բանն
ան է որ, գաթան ծոցը պաս բռնէ)։
Գալէն ինչ տեսայ՝ որ գալատակէն ինչ տեսնեմ։
Գալէն՝ գառ է ծներ, կամ գեղեցը՝ գառն ա ծը-
նել. (Ե)։
Գալէն տամազլըխ չըլլար, կամ Գէլէն տամազ-
լըխ չէնէ. (Ե)։
Գալ թէ գաղան՝ մեր գառը կերաւ (կամ տարաւ)։
Գալը ամպ օրը կ'ուրախանայ։
Գալը բուրդը կը փոխէ, բայց բնութիւնը չփո-
խեր։
Գալը բուրդը չփոխեր. (Պ)։
Գալը՝ թողածը կ'ափսոսայ, հովիւը յամշտա-
կածը։
Գալը համբանք չիգիտեր։
Գալը մեռաւ, ես կի խաղամ. (Պ)։
Գալը քաղցածութենէն չէ կրցած քալել, ըսեր
են. Տեսէք այնչափ կերեր է որ չի կրնար քա-
լել։
Գալին անուն է ելեր, ուտէ ալ գալ է, չուտէ
ալ։
Գալին անուն է ելեր, աղուէսը աշխարհք քան-
գեց. կամ աղուէս կայ որ մարդ կուտէ։
Գալին առջի տեսած ձմեռը չէ։
Գալին բերնէն չիս կարնայ գառը հանելու. (Պ)։
Գալին խաֆան հասա է, ինչ որ ըսես՝ չմոռածեր.
անձամբ կը մտնայ ոչխարներուն մէջը. (Պ)։
Գալին կերածը՝ խաչին մատաղ կը սեպէ։
Գալն անօթութենէն սարը չէ կրցեր ելլել, ըսեր

են. Տեսէք, այնչափ կերբեր է որ չկարնար քալել:

Գալն ինկաւ ջոկին, վայ եկաւ մէկին:

Գալին գլխուն աւետարան են կարդացեր, ըսեր է. շուտ ըրէք, սիւրիւն կամ ոչխարը գնաց, կամ հեռու կեցէք, ոչխարն հեռացաւ:

Գալին շլլիքը ընտուր ա հատա, որ իր բանն իր ձեռովն ա բանում, կամ բանն իր ձեռքովը կընէ:

Գալն ու գառը 'ի միասին կ'արածին. (Ե):

Գամը գամ կը հանէ:

Գամ գամ ու սարն է ելեր:

Գամը գամով, գողը գողով. (բևեռով զբևեռ Թափեալ. Պ):

Գամը՝ պարկուճէն (տոպրակ) դուրս կ'ելլէ. (օր մը ծածուկը դուրս կ'ելլէ. Պ):

Գամ կարեց:

Գայլի ահիցը գեղ չեյիշէ՞նք:

Գայլն որ ծերանայ, շներուն խաղալիք կ'ըլլայ:

Գայլի տարածը հօրը հոգուն հաց է սեպում:

Գայլին ձագը կրթելով գառ չըլլար:

Գայլուն բերանը, խաչին մատաղ կը սեպէ. (Ե):

Գայլուն գառը պահ են տուեր, կատուին գառան ճիկարը. Թրթուրին խնծորին ծառը, տպուշ մնաց Խիկարը:

Գայլից վախցողը՝ ոչխար չի պահում:

Գանելի է տէրտէրին մուրալը, որով աշխարհականի չհարկելը զտէրտէրը. (Պ):

Գանկն ու կողը վարէ վար կու տայ:

Գառը՝ գարնան, ձիւնը՝ ձմեռան:

Գառը գալին պահ տալ չըլլար:

Գարի հաց՝ պարզերես ('ի հիւրընկալութեան):

Գարի հաց՝ թթու թան, պապս ուտէ՝ երթայ գուլթան։

Գարնան գառն է գովէլի, աշնան՝ հաւը։

Գարունը կ'իյնայ կռնէկուռ, ձմեռը կ'իյնայ դռնէ գուռ։

Գարունը չիգայ, ծառը չի ծաղկիլ. առանց ա-մառի պտուղ չհասնիլ։

Գաւառթի մօտ է (հարբիլ կը սիրէ)։

Գեղացի՝ խաս տեղացի։

Գեղացին որ չփանայ, չարբիս բեր որ դիմանայ. կամ Գեղացին որ չփանայ, չարբիս պէտք է դիմանայ։

Գեղացու առածը, ով չուանի կգնի. (Ե)։

Գեղացու խօսքը չուանի չէն գնում. (Ե)։

Գեղացու վրայ ջավահիր ծախիր, մէկ կտոր լաթի հետ չի փոխիլ. քո տուած անգին քա-րը. (Ե)։

Գեղ գեղի վրայ կ'ըլլայ, տուն տունի վրայ չըլլար։

Գեղ գզէ՝ գաւառ մանէ, անունն ըլլայ ճար-տարին կամ շահխաթունին։

Գեղ գիզուի, գերան կոտրի. կամ Գեղ կաննի, գերան կոտրի. (Ե)։

Գեղէգ մարդ չկայ՞ եա, ինչ կ'ուզես խօսէ։

Գեղացըգ մարդ չի պիտէր. պարծենալուդ ալ ինչ պիտէր. (Ե)։

Գեղեցիկ նա է, որուն որ կը սիրես։

Գեղը նստեր, քաղաք կը հաչէ. կամ Գեղ նստեր, գաւառ կը հաչէ։

Գեղ մտիր, խապէրը տղայէն առ. կամ Գեղ որ մտնաս խապէրը տղայէն առ. կամ Գեղի գլուխը գնայ, երեխէցը բան հարց ու կամ երեխէցը խաբար առ. (Ե)։

Գետնէն ալ գտնաս նէ, համբէ՛ ու ուռ։

Գետնի յատակին (տակը) ալ գանձ շատ կայ. մեզ ինչ։

Գէշ բանը գէշէն կ՚ելլայ։

Գետը անցանք՝ առուն խղդուինք։

Գէշ դրացին՝ մարդու հաճութի կամ կարասիի տէր կ՚ընէ։

Գէշ երաշ են տեսեր՝ ինչ։

Գէշը գէշով կը կորի. (Ե)։

Գէշ խօսքէն՝ ականջդ քաշէ։

Գէշ խօսք ու գէշ կնիկը, տիրոջն են։

Գէշ կ՚ընես, քեզ կ՚ընես. աղէկ կ՚ընես, քեզ կ՚ընես։

Գէշն աղէկին, գէշն աղէկին, ժամ են շիներ, քիչ կայ աղէկն աղէկին։

Գէշն երեսէն կը ճանչցուի։

Գէշ ըսողին, աղէկ լսողին։

Գէշ շանը՝ մէկ քար ալ պակաս թող ըլլայ։

Գէշ շունը գեղէ գեղ օտար շուն կը բերէ։

Գէշ շունը, ոչ ինքը յարդ կ՚ուտէ, և ոչ գառին կամ ուրիշին կ՚ուտեցնէ։

Գէշ օր իմ դուռս, գէշ հարս քու դուռդ։

Գետը առեր է մեր կապերտը կը տանի, նայինք ուր եղէրքը կը հանէ։

Գետինը ականջ ունի կ՚իմանայ։

Գէրը վատուժը կը կոխէ։

Գժութիւնը խփելով (զարնելով), մարդկութիւնը տալով կը լինին։

Գիններին հարցուցին. աւրածդ շատ է թէ շինածդ. — ասաց. շինածս չի գիտեմ, աւրածս համրանք չունի։

Գինի խմողն կը հարբի, կռիւ մտնողը կը մեռնի։
Գինին՝ ծերոց գաւազան է։
Գինու սիրուն՝ շիրախանի պատը կը լիզէ։
Գիշերը մայր է բարի խորհուրդներու. ի՞նչեր կը ծնանի։
Գիշերը մամ տուր վառէ, ցորեկը ձուլթ կը ծամէ։
Գիշերը չի ուզում քնիլ, առաւօտը չի ուզում վեր կենալ։
Գիշերուան կերածը հարամ է, կամ կորած է։
Գիտնալը թէ խուծած է (գէշ է,) և կ՚անէ՝ մեծ չար է, քան թէ չգիտնալը։
Գիրքս բացի, վրան լացի։
Գիրն էլ ա ձեր ձեռին, գրին բալլիքն էլ. (Ե)։
Գլխակեր է։
Գլխէդ վար սոխ մը կապէ որ նազար չառնէ։
Գլխիս տալու վէքիլն ես, աչիս դուրս գալու վէքիլը չէ՞ս։
Գլխէն մտնել, տակէն էլլել։
Գլխուդ հետ կըխաղամ։
Գլխուդ խռով կենայ (ատ բանը)։
Գլխուս խուփը վերուց։
Գլխուս զարնելուն տէր ես, աչքս դուրս գալուն տէր չէ՞ս։
Գլխուս վերայ տեղ ունիս։
Գլուխը կու տայ, չի ըներ ևն։
Գլուխդ որ ցաւի՝ ոտքդ կը մոռնաս։
Գլուխդ քարը, երեսդ պատը։
Գլուխդ քարին ես տուեր։
Գլուխը ծակած ոմ է եկեր անդիէն՝ որ տեսնանք հաւատանք։

Գլուխը մահու տալու չէ։

Գլուխը Ճամէ եղողը, քարով կռուողներուն մէջ չի մոնար։

Գլուխը ողջ ըլլայ նէ, գտակ շատ կը գտնուի։

Գլուխ մի բերիր՝ ինչ։

Գլուխ մի հոտեցներ։

Գլուխն առաւ գնաց։

Գլուխը մահի տալ։

Գլուխս դինկ, կամ դրդում դարձուց։

Գլուխս խոտ չբուսաւ։

Գլուխս կերաւ (ուզելով ևն)։

Գլուխս իմն չէ՝ որ թրաշ ընել տամ։

Գլուխս կը կարեմ, (թէ որ չըլլայ)։

Գնա բռնի քե խնամի, որ պոչը քիոյ պոչին կնմանի։ (գնա բռնէ քեզի խնամի մը, որ քեզ նմանի վ.)։

Գնա մեռիր, եկուր կամ արի սիրեմ։

Գոգին քարը վեր ածել։ (համոզուիլ։ Ե)։

Գող՝ դարան կ'ըլլայ գողի։

Գողը գողէն գողացաւ, Աստուած վերէն զարմացաւ կամ Աստուած տեսաւ՝ զարմացաւ։

Գողը մնի մեղք տարաւ՝ կորցընողը հարիւրի։ կամ Գողը մէկին մեղքն առաւ, կորցընողը հարիւրին։

Գողը՝ պէզազիանէին պահապան են դրեր։

Գողին ինչ մոքին ու ինչ հաւատքին։

Գողին հախէն Աստուած գայ։

Գողին սիրտը գող կ'ըլլայ։

Գող՝ ու սիրտը գող։

Գողը իր համար տուն չի կարող շինել, բայց տուն ունեցողի տունը կը քանդէ։ (Ե)։

Գողն ինչ կ'ուզէ. – մուրթ գիշէր։
Գողն որ տանէց (տունէն) լինի, եզը երդքէց կը հանեն. կամ
Գողն որ տունէն որ ըլլայ, եզը փէնճիրէյէն կը հանեն։
Գողն որ անէն ըլլայ, վկայն դռնէն կը կախեն։
Գողուրթիւնն ալ մէկ արհեստ է, գիտցիր ու մի ըներ։
Գոմշատիրոջը՝ կաշէգինը կ'աւտան. (Ե)։
Գոմշիտէր մարդուն՝ կաշու դին (փող) կու տան։
Գործը մէկ է, գործողն հազար։
Գործն՝ իրմով չէ ազնիւ, այլ ընողն է՝ որ կ'ազնուացընէ ու կըսրբացընէ զգործը։
Գործքը արու, խօսքը էգ պէտք է։
Գուրպայի պէս քակուեցան։
Գտալով (դգալ) կը կերցնէ կամ ժողվէց։
Գտակս թողուտ տեսար, կարծեցիր կամ հէնց իմացար թէ ջաղացպա՞ն եմ։
Գրի սէն ու սպիտակը չեմ գիտուր, ամա ես իմ կարճ խելքովը գիտեմ որ այսպէս է։
Գրի սէն ու սպիտակը գիտցողը՝ աս բանը չըներ. (Ե)։
Գրողն ալ մեղը է կերեր, կարդացողն ալ։
Գրչէն արուն կը կաթէ։
Գրքին երկու երեսն ալ կարդալու է. կամ մէկ երեսը մի կարդալ։
Գորտին աչքին է զմայլեր։

Դալը մօրէն չուտողը ինչ պիտի խնայայ։
Դայեկը՝ ամէն ատեն ձուազեղ, կամ գաթա չ'ուտեր։

Դայեկ ըլլալէն վերջը, հեղկէթ մէկ օր պորտը տեղը կը ձգէ. կամ 'ի հարկէ մէկ օր պորտը տեղը կը ձգէ։

Դանակ զարնեն արուինս չ'ելլեր (տրտմութենէս)։

Դանակը կովին կուշտը կամ քովը կը տանին, թէ կովը դանկին։

Դանակը կոթին, կամ պոչին կը կոտրէ։

Դանակը կովին քով կը տանին, և ոչ եթէ կովը դանկին։

Դանակը ոսկորին խածաւ. (հասաւ։)

Դանկի կտրածը կ'ողջիննայ. լեզուի կտրածը չողջիննար։

Դասմանց տէրտէրը, դասմանց երիցկինը սիրուն է. (Պ)։

Դառ դատեցայ, դատարկ ելայ։

Դատաստանը մոմէ քիթ է. (Պ)։

Դատաւոր՝ որ բան չիգիտեր, զբան չիհարցներ։

Դատարանը կայ, դատաւոր չկայ. դատաստանդ ով տեսնայ։

Դարբինին դանակ չըլլար, ջուհլակին ալ պատանք։

Դարբինին դրամագլուխն ածուխն է։

Դարմանի տակի ջուր ես. (անպիտան)։

Դարն 'ի վեր հող կի կրես. (հարստաց կուտաս. Պ)։

Դարուփոս, Աստուած հաւասար. չկայ դարը, որ դարն 'ի վար չունենայ. (չինք երջանկութիւն անփոփոխ՝ բաց յաստուածայնոյն)։

Դարտակ կարասի ձայնը բարձր կ'ելլէ։

Դարտ տամ, դարտ մոռանաս. (հին տէրտդ մոռնաս)։

Դարտակ փեռեին՝ շուն չի հաչալ։
Դգալ մը ջրի մէջ կ՚ուզէ խղդել։
Դգալով կը ժողվէ, շերեփով կը ցրուէ։
Դգալով կը կերցընէ կամ կու տայ, կոթովը աչք կը հանէ։
Դեղ գիտես (կամ ունիս՝) քու գլխուդ արա. եղ ունիս՝ ձեր բղղումը պահիր. (Ե)։
Դեղին դեղին, ով որ տեսնի՝ պատռի լեղին։
Դեռ շատ հաց ու պանիր պէտք է որ մարդ ըլլայ։
Դևը դարբնոցը չի գնալ։
Դևք միշտ հակառակ կան միմեանց. բայց 'ի կորուստ մարդկան՝ միաբանք են։
Դերձակին ըսեր են, էլ տնէս, կահկարասիքդ տար. – ասեղը գլուխը զարկեր եղեր է, ու ըսեր է՝ ահա՛ գնացի։
Դերտ ու պէլան ես քաշեմ, խայմախը Գասպարն ուտէ։
Դըդմի համ տուիր։
Դժար է զգայլը՝ հետ գառին հաշտեցնելը. (Պ)։
Դշխոյին մօրուքն էր պակաս։
Դու առատ ձեռք ունեցիր, որ առատ առնիս. (Ե)։
Դու իմն գիտես, ես քիւմն (քուկդ), տէրտէրն մեր երկուսումն. (Վ)։
Դու ինձ պահէ պողջամիջին, ես քեզ պահեմ մարգամիջին. կամ Դուն ինձ պահէ պողջայի մէջ, ես քեզ պահեմ մեծ մարդկանց մէջ։
Դու կեցիր գիշուկ, աղէկը չ՚առնէ նէ, քեզի կու տանք ազջիկը։
Դուն ալ կակաղ՝ ես ալ կակաղ։
Դուն ալ կաղ ի՞շովդ, կարաՀան կամ քէրվանն կը խառնուիս։

Դուն ամ կը կակուղնաս։
Դուն աս սանտրը կտաս չունիս։
Դուն գինի գտիր կամ ըսէ, ես մէջէն շանը տակէն կը հանեմ։
Դուն գիտեսին, վաղուկ ջուրերը կը կայնին։
Դուն գիտես մէկ երկուս, ես գիտեմ տասուերը կուս։
Դուն երկան ականջ եղիր։
Դուն իմ աչքիս արգար ես։
Դուն իմ աչքովս նայէ։
Դուն իմ մեռածիս պատահեցար։
Դուն ինձի՝ մէկ աչքով մի նայիր։
Դուն Թող, ջուրը իր ճամբան կը գտնէ։
Դուն վատակէ, գուն կեր. (ինչ կայ, ինչ չկայ. բան չկայ...)։
Դուն ու քու խղճմտանքդ։
Դուն քուն, բախտդ արթուն
Դուն վերի արտին ցորենն ես։
Դուն դեռ մորդ եփածը կերեր ես։
Դուն քու գլխուդ ճմերուկ մի կարեր։
Դու քու խշուկդ քշէ։
Դուռդ փակ պահէ, դրացիդ գող մի բռներ. կամ
Դուռդ ամուր բռնէ, դրկիցդ գող մի բռներ։
Դուռը ծախելու՝ մեծ օրը օրիկ ընելու է կամ մեծ օրը օր ընելու է։
Դուռը մեծցուցինք։
Դուրս տանող խեւերէն չէ։
Դատրիկ քեզ կ'ասեմ, հարանուկ գուն լսէ։
Դրախտը որ իմն չի՞, խշուանք Թող Թաւալին 'ի նի. (ան դրախտն որ իմ չէ, անոր մէջ էշերը Թող տապլտրկին. Ե)։

Դրանց սևին ալ նալլաթ, սիպտակին ալ։
Դրացի դրացիին, էա աղն է պակաս, էա մաղը։
Դրացիդ խաղալ, տունդ ալ խաղալ։
Դրացիդ՝ մաղում շունն ալ քեզի օգուտ է։
Դրացիդ խաղը, քեզի խոզ կ'երևնայ։ (Պ)։
Դրացիդ ձիապը մ'ըներ, կամ դուռն է, կամ
երդիքը։ կամ հա դուռն է, հա երդիքը։
Դրացիդ մեկ կով ուզէ, որ Աստուած քեզի
երկուս տայ։
Դրացիին ոչխարը գալը տարաւ, միւս դրացին
իրենին մուխայէթ կեցաւ։
Դրացիին պագածը չեն առներ, օտարի։։։
կ'առնեն։
Դրացնէ դուռը՝ ընդհատէ ղքունը։ (Ե)։
Դրեր էս նէ՝ գոիր։
Դրուատ (չիտակ, ուղիղ) խօսողի մի ձի, որ ասի
ու փախչի։ (Ե)։
Դրուատը խօսողի բաբաղը կամ գտակը ծակ
կ'ըլլի։ (Ե)։
Դրսէն քահանայ, ներսէն սատանայ։

Էա դուռն է, էա երդիքը։ (շուտով կ'ըլլայ։)
Էա սխտ, էա բախտ։
Էա աղն է պակաս, էա մաղը (դրացիին)։
Էա աղը պտուկին, էա պտուկը աղին։
Էա պանպան, էա տան տան։
Էախաս չթողուր։
Էախայէս չինչնար։
Էատը գնալով գալով բարեկամացաւ։ բարե-
կամը չգնալով չգալով՝ էատացաւ։
Էա կացինը քարը, էա քարը կացինը։

Եա հօրը, եա մօրը, եա խև կնքահօրը (պիտի նմանի)։

Եափունճան անձրև օրը պէտք կու գայ։

Եզերքը տես, կտաւն ա՛ռ. մարը տե՛ս, աղջիկն ա՛ռ։

Ե՞զը կը տանին դանկին մօտ, թէ դանակը եզին քով. կամ

Եզը դանկին քով չէն տանիր։

Եզը ռաֆը չէն հաներ։

Եզը դատի, եզն ուտի, աշխարհք կ'աւրի. (Ե)։

Եզը կը վերցընեն, տակը հորթ կը փնտռեն. կամ եզին տակը հորթ կը փնտռեն։

Եզը որ վեր ընկնի՝ (վար իյնայ) դանակաւորը կը շատնայ. (Ե)։

Եզին լաւը լուծին տակը կ'իմացուի։

Եթէ խնդայի, գալը մօրէս կուտայի (կուտէի. Ե)։

Եթէ մանչը աղջիկ դառնայ, աղջիկները մանչ կ'ըլլան։

Ելած աչքը տեղը չիդար։

Ելայ զաւկի տէրը, իյնայ զաւկի տէրը։

Ելէ սիրտ, կարէ գլուխ. իջնայ սիրտ՝ ո՞ւր է գլուխ։

Եկանք Ալուր. եկանք ի՞ւր (ո՞ւր. Ա)։

Եկեր պատեր, ճարն է հատեր։

Եկո՛ ընկի՛ր մեռնի՛ր, որ գովեմ զքեզ. (Պ)։

Եկողը՝ գնացողին ողորմիս հանել կու տայ։

Եղբօրորդի իմ որդի, քրոջ որդի շան որդի։

Եղը գնաց, մոխիրը մնաց։

Եղը կ'ուտէ, մոխիրը պուկընեռուն կը քսէ։

Եղի պէս ջուրին երեսը կ'ելլէ։

Եղն ելաւ, մոխիրը տարաւ։

Եղը ու մեղրը, (մեղք) որ շանը տիկն են լեցու-
ցեր. կամ Եղ ու մեղր, շանը տկումը դրել
են. (Ե):
Եղ ու մեղր եղան. (հաշտուեցան):
Եղունգ չունի. չէ՞նէ այնպէս պիտի քերուրքի որ:
Եէն ալ գիտեմ, Զ ալ գիտեմ:
Ես ալ քու Աստուծովդ կ'ապրիմ:
Ես աղա, դուն աղա, մեր Ջաղացքը ո՞վ աղայ:
Ես աղա, դու աղա, բրս մեր ալիւրն ով կ'աղայ.
(Ջ):
Ես աղէ, դուն աղէ. զրս մեր Ջաղացք ո՞վ աղայ.
(Վ):
Ես բրդեցի բրդեցի, նա կերաւ և ուրացաւ:
Ես անոնց մեռելէն եմ փախեր, սաղն ալ բե-
ռեն գլխո՞ւս ձգեն:
Ես աս գիշեր քեզի կու գամ, կ'ըսես կ'ըսես ու
չես իգար:
Ես գանձ կ'ըսեմ, դուն տանձ կը հասկընաս:
Ես ժամ չեմ երթալ, դուն ալ գինէտուն:
Ես այդ բանը մինչև ընեմ, ջուրը կու գայ Ջա-
ղացքը կը տանի:
Ես իրեն հոգիս կ'ասեմ, նա ինձ կ'ըսէ Հոգիդ
դուրս գայ. ես իրեն աչքս կ'ասեմ. նա կ'ա-
սէ ինձ Աչքդ դուրս գայ:
Ես կը մարիմ կամ կը մեռնիմ քու վրադ, դուն
չես թքներ իմ վրաս:
Ես Մուսուլ կըսեմ, ան Մսըր կը հասկընայ:
Ես ու դուն, թըրֆանտա՛ խաթուն:
Ես փաշայ, դուն բոշայ. բարեկամացանք՝ հա-
ւասարեցանք:
Ես քեզի կուտամ խրատ, դուն չես առներ վրադ:

Ես քեզ ամառուընէ ալ գիտեմ։
Ես քեզի վարն ալ տեսայ։
Ես քու բերնիդ ձուԹը չեմ։
Ես քու վրադ փոշի չեմ ԻՂեցները (պաչոպան եմ)։
Ես քուն, բաղդս զարԹուն։
Ես օր ղաբլու փլաւ էլ ուտես, էգուց փորդ էլի իր ուզածը կ'ուզի։
Երաղումը սովածը (քաղցածը) հաց կը տեսնի. ծարաւը՝ ջուր։
Երած սրտին մանանեխ կ'ըսեն ատոր։
Երած սրտին, քըխ մխիԹարանք։
Ե՞րբ աս երկինքը մէկ կերպի մնացել, որ մարդի (մարդու) սիրտը մնայ. (Ե)։
Երբեմն ալ մէկ աչքդ գոցէ։
Երբեմն խլուԹիւն, բերէ հլուԹիւն։
Երբեմն համբերուԹիւն, բերէ քաղցրուԹիւն։
Երբ մէկ երկիր կ'երԹաս կը տեսնաս ամէնքը կոյր են, դուն ալ մէկ աչքդ գոցէ։
Երբ լսես հաչել չան, առ ձեռքդ գաւազան։
Երբոր ձուկը ծառը ելլէ, ան ալ ան բանը կրնայ ընել։
Երբոր սոխ չես կերեր, սիրտդ ինչու կ'երի։
Երդումը երկու բերնէ սուր է, Թէ ասդին կը կտրէ, Թէ անդին։
Երեխէն մահանայ, մերը կշտանայ, կամ քնանայ. (Ե)։
Երեխին ասին, ի՞նչ ես լալի. — ասեց. Խօսքս անց է կենում ընդուր. (անոր համար կու լամ։)
Երեխին բան դիր, հեռը գնա. (Ե)։
Երեսդ ճերմակ։
Երեսէն ղնֆա կամ ղնֆը ալի կը Թափի կամ կը կաԹէ։

Երեսէն մէկ ճանճ իյնայ, քառասուն կտոր կ'ըլլայ։
Երեսէն հայլի, եռանէն ածիլի (կեղծաւորի։)
Երես է չի դիմանար։
Երեսը պատռած մարդ է։
Երեսը սև ըլլայ։
Երեսը վար առնել։
Երեսին թքեր են, ըսեր է. թաթաւ կու գայ։
Երեսին կաշին հաստ է։
Երեսի ջուր չունիս մի։
Երես մ'ունի որ, հագուիս Երուսաղէմ երթաս չի մաշիր։
Երեսնեբիցը ելս (ելայս) է վեր թափվում. (Ե)։
Երես չունի։
Երես տալ պէտք չէ։
Երես տուար, ասատառ ալ պէտք է. (Պ)։
Երես տուինք, ասատառ ալ կ'ուզէ։
Յերևիլ ատամանց վերասցին շնորհք։
Երևցած գեղին առաջնորդ պէտք չէ։
Երթամ արանցս, յիշեմ հարանցս. կամ
Երթայ արանցը, յիշէ մարանցը։
Երինջը լօխմա մը, ոչխարը համեռս կ'ընէ։
Երիտասարդ յօգն էլանիցէ մի հաւատար։
Երկաթ ըլլեր, կը հալէր (կը հալէր)։
Երկաթը՝ տաք տաք կը ծեծեն։
Երկաթ ծամելու համար՝ պողպատէ ակռաներ պէտք է ունենալ։
Երկայն հասակ, թանձրամօրուսը՝ յիմար կ'ըլլայ, կ'ըսեն։
Երկան մարդը ախմախ կ'ըլլայ, կարճ մարդը չախմախ։
Երկար հիւանդութիւնը, մահ կի բերէ. (Պ։)

Երկինքը վինտռեէն իքէն, գեռինը գտանք։
Երկինք մի թքներ. թուքը Հակտիդ կու գայ։
Երկինքէն է ինչեր, ոտքերն ամպոտ է։
Երկինքէն ինչ է եկեր, որ երկիրս չընդունի. հարուստ ինչ է պարգևեր որ աղքատը չընդունի։
Երկինքէն մեծ քար մը կախուած է, մեծին չհնազանդողին գլխուն կ'իյնայ։
Երկինքին տուած պարտքը, գեռինը չի մնար. գեռնինը՝ երկինքին։
Երկու եղբօր կռուին մէջ մի մտնար։
Երկու դանակ, չէյրէկ մը միս. տեսնեմ քեզի հիւնէր ունիս։
Երկու դանկի կամ սրի մէջ եմ մնացեր։
Երկու երնեկ զիրար չի գտնայ։
Երկու լսէ, մէկ խօսէ։
Երկու խաչին լուսարար, երկուսին ալ սեւ երես։
Երկու խևին մէկ խեղօք է պէտք։
Երկու խորոշ, մէկ տօտօրոշ, զրզուին կ'երթաս։
Երկու կռուողին, երեքդումը կը շահուի։
Երկու ձեռն եմ առել մի գլուխ։
Երկու մերկ բաղնիքը կը վայլեն։
Երկու նաւապետ ունեցող նաւը, շուտով կ'երթայ ծովու յատակը։
Երկու ներ մէկ տունի մէջ, ամէն օր մէկ կապու կռիւ։
Երկու ոտը մէկ մաչիկ (կօշիկ) են գրեր. (ե)։
Երկու ոտքով կամին կայնիլ չի կարնար։
Երկու չանախ եալտըզ ունիմ, ինչ աղէկ պալտըզ ունիմ։

Երկու պինդը պատ է պատռեր։
Երկուսին մէջ սար ու ձոր կայ։
Երկու ստակի կապաս է, ինչ կայ չկայ վրաս է։
Երկու փարայի կերակուր է եփեր, տասը փարայի աման է կոտրեր։
Երկու փարայ սալիան, կա՞յ մի։
Երկրէ երկինք շատ հեռու են։
Երնէկ ան բանին, որ պիտի ըլլայ։
Երնէկ քեզի խօրոզիկ, ոչ պաս գիտես ոչ ուտիք։
Երնէկ ուտողին, վայ բրդողին. (Պ)։
Երուսաղէմ գնացեր, լուս չէ տեսեր։
Երուսաղէմ ալ առանց շնորի չէ։
Երուսաղէմ ուխտի պէտք է տանիս։
Եփած կերակուրին՝ սառ ջուր չեն ածեր։
Եփած ապրին ջուր չեն լեցըներ. (խորհած խորհրդին խօսք չեն խառներ)։
Եփած ըլլիս, խաշուդ կը ճանաչենք. (Ե)։
Եփեցինք թափեցինք։
Եօթը ծովէն դուրս նետուածին մէկն է։
Եօթը եկեղեցի շինելուդ, եօթը որբ մարդ արա՛։
Եօրղանիդ կէօրէ ոտքդ երկնցուր, կամ ոտդ մեկնիր. (Ե.) կամ Եօրղանէդ դուրս՝ մի՛ ճողեր զոտդ. (Պ)։

Զանգակին ձայնը հեռուէն անուշ կուգայ. կամ, Զանգակի ձէնը հեռուանց լաւ ա դալիս. (Ե)։
Զատանց (հեռուէն) սիրուն, մօտանց՝ խիրուն. (Վ)։
Զար վարախգ հօ չիգնալ. (Ե)։

Զատիկն եկաւ չունիմ կապայ,
Ով որ կ'ընէ ինծի կապայ,
Անոր կ'ըսեմ հաճիպապայ։

Զարարը՝ զէհիրէն կծու է։

Զարարի կէսիցը եւ դառնալը՝ ֆայտա ա (Ե.) կամ, Զարարի կէսէն եւ դառնալը՝ օգուտ է։

Զարդարուն սեղանիս՝ դեղին մոմ տնկեցիր՝ ինչ։

Զարկ զԹամրը՝ որ իմանայ էշակը. (Պ)։

Զարմացած, մատը բերանը մնաց։

Զգեստիդ կը նային աղէկ ու նոր է նէ, հրամմէ՛ ներս կ'ըսեն. գէշ ու հին է նէ, դուրս կ'ընեն։

Զէնկինին աչքը՝ փէրտէլի կ'ըլլայ։

ԶիաֆէԹ՝ կռուին զէնճիրն է։

Զինչ մտածես, ան երազես։

Զիս է ծծեր՝ որ զինա կծի, կամ զիս է ծծել որ զայն խածանէ. (իզմէ շահուեր է որ ուրիշի ՀԷնասէ. Ա.)։

Զհոգիդ տէրտէրին վրայ ու զդատաստանը բրօ՞քրաԹորի (գործակալ) վրայ պիտուի մանի՛. (Պ)։

Զոր որ մանեմ, պատրուս մ'երկուք. երԹամ բերեմ՝ խապար մ'երկուք։

Զուռանճու կնկանը հարցին ԹԷ, կենդապա՞ր գիտես. — ասեց. Ես ո՛ր տեղ պառաւեր եմ որ կենդապար ալ չգիտնամ։

Զուտելուն՝ սովը ունի տատաԹ, որ համով կ'անէ. (Պ)։

Զուտ ոսկին ժանգ չիբռներ։

Զչարն մի Թողներ, ԹԷ բռնել կ'ըլլես. (Պ)։

Զրուցէ լմանդ, ու պի պատռի կոլոխդ. (Պ)։

Զփորձեալն կրկին փորձել՝ անմտութիւն է։

Զուռնէն էն տեղ փչիր, որ տեղ պար եկող ըլնի. կամ չալէ որ տեղ պարի։

Զփո՞ւշն կը խնայես, թէ զըղտու թուշը. (Ա)։

Զռռով թազին յորս չերթար. (Ե)։

Էդ քեզ խրատ, ալ չցանես կտաւատ։

Էլ էն ջուր է, էլ էն ջաղացքը։

Է՞դ հալով պիտի երթաս քրդի թալան։

Էլին բերանը չէքիպիւզմէ չէ, որ գոցեմ ձեպս դնեմ։

Էժան միսը պուտուկն ի մաշէ։

Էժան միսը խաշու չունենար։

Էլի գիտնաւորին գերի, մի ընիր անգէտին սիրելի։ Անգէտն քամակս առէցի, ասաց՝ Դիր գէտին, ոտքս կըցաւի. (Ե)։

Էշն ինծի խոճա կըսէ, բայց ես իմ հալս գիտեմ. կամ էլ ինձ խոճա է ասում, համա իմ հալն այսան է։

Էլի էն սուֆրէն ա, էլի էն հացը. (Ե)։

Էլոն կուլայինք, Վէլին բերին կարպետով. (Ե)։

Էծը սատանայ կ'ըլլի։

Էծը վախ կը քաշէ մեռնելէն, մսագործը ա՞խ կը քաշէ թէ եղը քիչ կ'երևի։

Էծն ինծի համար լաւ ա, քանց մի սուրու ոչխարը։

Է՞հ զորն ասեմ կամ զորն խոստովանիմ. (Ե)։

Էն ձէթն որ տանն հարկաւոր ա, մեղք ա տալ եկեղեցւոյն. (Ջ)։

Էն կուշտին ինչ ասեմ, որ քառասուն թիքա (պատառ) չիդնի։

Էն վաղ էր որ՝ էշը կաղ էր. (Ջ)։

Էն ինչ չես ուզեր քրոջդ, կըկամենաս տալոջդ։

Էն հանաքին (կատակ) ինչ ասեմ որ՝ կէսը ղորդ չ՚ըլլի։

Էն ջրիցը վախեցիր, որ ոչ թշշում ա ոչ խշշում։

Էշերն ալ Երուսաղէմ կերթան կու գան։

Էշ է հեծեր, էշն է մոռցեր. կամ Էշ է հեծեր, էշը կը բնտռէ։

Էշէն ընկեր է, չիւհ չիւհը չթողուր. կամ, տահ-տահը ձէռքէ չթողուր։

Էշէն նժոյգ չի ծնանիր։

Էշը բեռը՝ քարը մէյմը կը զարնէ։

Էշը բեռին տակը չի զբաղ։

Էշը կը դատի, ձին կ՚ուտէ։

Էշը ընկաւ գարու հորը, ըսաւ. Ա՛խ լաւ է քան զմեր գոմը։

Էշը իշի կշտին կապես նէ, էա արուց կը հանի, էա բարուց։

Էշը իշուն խնամին է։

Էշը կերան, պոչումը խռովեցին. (Ե) կամ պոչին վրայ կը կռուին։

Էշը կորուցեր է, փալանը կը բնտռէ։

Էշը հարսնիք հրաւիրեր են, ըսեր է. կամ փայտն է պակսեր կամ ջուրը։

Էշը հեծնալը մէկ ամօթ, իյնալը երկուս։

Էշը մատաղ չի ընիր, իշագինը հօ՞ կը ընի, կամ Էշը մատաղ չ՚ըլլար, գինը կ՚ըլլայ։

Էշը մեծնալով՝ թաւլապաշի չ՚ըլլար։

Էշը մեծնալով՝ թառը (վերի գլուխ) չեն հաներ։

Էշը յիշէ՝ փայտը պատրաստէ։

Էշը չկերած խոտն որ ուտէ՝ գլուխը կ՚ուռի, կամ փորը կը ցաւի։

Էշը որ քու պարոնը լինի, չուշ չասես։

Էշը չուտուիր, գինը կ'ուտուի։

Էշը վեր եկեալը մի ամօթ, վեր գալը երկու ամօթ։

Էշը ցիսումը անկուեց, ինչ էշը կը տանջայ, ինչ տէրը։

Էշը քաղցած է եղեր, ըսեր են համբերէ, գաբուն կու գայ առուոյտ կը բերէ։

Էշը քշողը քամին ալ պէտք է գիմանայ, կամ համբերէ։

Էշը կը տաղէն, դու գիտես թէ քէպաճ կ'եփեն։

Էշն ախուռը կը զուայ։

Էշն արժանի՞ արօտ խոտին. արժանի է չար փշին։

Էշն ինչ գիտէ նուշն ինչ է։

Էշն ինչ գիտէ քրքումն ինչ է։

Էշ նատիլ չիյտէ, կամ ատտին կը մնայ կամ նըստիմ ըսելով՝ չափ անցնելով անդին կ'իյնայ։

Էշն որ հալեորնայ, մրջիւններն ալ վրան կը հեծնեն որ քալցընէ։

Էշն փնտռէն ինքն՝ թագաւորութիւն գտաւ։

Էշը որ մէյմը ցեխ իյնայ, ա՛լ անկեց չանցնիր. կամ Էշն որ տեղ մի հետ ցեխն ընկաւ, էլ դենը չի անց կենալ։

Էսպէս լինէր, էնպէս լինէր, Թիֆլիսը Թիֆլիս չիլինիր. Քուին տեղը մին ծով լինէր ասելով, Թիֆլիսը Պոլիս չիլինիր։

Էս օրուան շահին, էգուցվայ մանէթից լաւ ա։

Էս օրէն ձուն էլ լաւ ա, քան թէ յեգուցէն խաւն (հաւ. Ջ։)

Էս խելք չի, տիրոջը պատիժն ա։

Էս հօ խուրմա չէր որ, մինակ ուտէի, քեզ չտայի. (Ե)։

Էս օր ջիբդ (ՀԷպտ) լեցունես, էգուց պէտք է մատդ լպստես (լղես. Ե)։

Էրէկուան երեխէքն էլ գեռ ոտք չի էլած ոան ա բարձրցնում։

Էրը գացեր, տէրն է մնացեր։

Էրիկ կ'ուզեմ, հիմա կ'ուզեմ։

Ըլլալիք կար, եղաւ։

Ընդ վեհագոյնս մի ոգորիր։

Ընդ օգս աշտարակ չինել։

Ընես նէ կ'ըլլայ։

Ընկերդ գեղիցը վեր կալ, հացդ տաշտիցը։

Ընկերութեան արտը, կռունկն է կերեր։

Ընկիր մեռիր, լամ զքեզ. (Մ)։

Ընողը կը գտնայ։

Ընչանք (մինչև, ինչուան) երեխէն լաց չըլնի՝ մէրը ծիծ չի տալ։

Ընչանք հատը բարակի, բարակի հոգին գուրս կը գայ։

Ընչանք էն օրը՝ կամ էշը կը սատկի կամ ինչ-տէրը։

Ընտոր լուացողը, անպէս ոպրուզը (փէշկիր. Պ)։

Ընտոր տեղ գցիս (եաթաղ), անպէս կի հանգ-չիս. (Պ)։

Ընտոր աղիս, անպէս կ'ուտիս. (Պ)։

Ասելն ու ընելը, շատ տարբերութիւն կայ։

Ասեր են ամ ու տուր, և ոչ ամ ու կուլ։

Ասէ՝ որոնք են բարեկամներդ, ասեմ ինչ մարդ ես։

Ասինք թէ ամ տար հեռու. չըսինք թէ ամ տար մեռուր։

Ասիր՝ կը լսես, ըրիր՝ կը գտնես. մի տար՝ կը սրվեցնես։

Ասողին լսող պէտք է, թագաւորն ալ թագի լայլիս պէտք է։

Ըրած ցեխին (շաղուած) մէկ փարչ ջուրն ալ հերիք է։

Թագաւորը թագին լայլիս պէտք է ըլլայ։

Թաղին ան թաղին է, բայց ջուլը փոխեր է։

Թաթաւը ծովը կու գայ։

Թաթաւ հաւային քուն կ'ըլլան. բայց ամառն է թէ ձմեռն է չիյտեն։

Թանը կերաւ՝ արդարացաւ։

Թանկ՝ կրակի գին է, կամ թանկ ու կրակ է։

Թանն ընկած մուկ է դարձեր։

Թապար տափճուն (անկողին) մէջ չի պառկիր իմաստութիւն. (ծոյլը իմաստուն չկրնար ըլլալ. Պ)։

Թաս էլ՝ չանախ եղան։

Թաց տեղ չի պառկիր։

Թաց փտոի պէս կը թրսսայ։

Թափս, գոնն ալ խօսեցար։

Թէ առողջ ես, ունևոր ես. թէ հիւանդ ես՝ չքաւոր ես։

Թէ ասեմ՝ խօսք կ'ըլլայ. թէ չ'ասեմ՝ ցաւ կ'ըլլայ. արդէն սիրտս ցաւած է. չեմ ըսեր թող ցաւ ըլլայ։

Թէ լաւ խորոված կ'ուզես, թէդ սօթթէ, աչքդ բաց, որ մեն բերելիս ոչ շամփուրն էրի ոչ խորոված։

Թէ կացինը քարը, թէ քարը կացինը։

Թէ կուզ (կ'ուզէ) իմ ասածը, Թէ կուզ մէկ քամու ջաղացքը բան չին հասկցնիլ։

Թէ կուզ էրած, Թէ կուզ մրկած. (Ե).

Թէ կուզ փողի համն առած, Թէ կուզ իր միսը կէրած, հիսապը մէկ ա. (Ե)։

Թէ ձեռիցդ գալիս ա, դանակդ սրիր (սրէ), մէկ կողիցը (կողմէն) վրայ Թռիր. (Ե)։

Թէ կ'ուզես բանդ առաջ երթայ, ձեռքովդ արա։

Թէ մէկ բան ալ գիտես, ձեր կամ իր տան պատերին ալ մօտ մի գնալ, կամ մ'աւտա, հողին ալ մի ասիլ, ձեն կտան, դուն մնաս մէջումը մեղաւոր։

Թէ հոգաս՝ բուրատատան, Թէ չհոգաս՝ մացառըստան։

Թէ որ կ'ուզես տունդ գող չի մանէ, Աստուծոյ աղաչէ որ աղջիկ չտայ։

Թէ որ փող շատ ունիս, երաշխաւոր եղիր։

Թէ որդիդ խելք ունի գլուխը, փող ինչ պէտք է. Թէ որ խելք չունի, փողն ինչ պէտք է։

Թէ որ հօրը չեղլար, վրաս պիտի մնար։

Թէ չլինի օրհնեալ ահն ու մահը, մարդիկ իրար կ'ուտեն։

Թէ ջանք ունիս, բաղդը ինքնիրեն կու գայ։

Թէ քարը գլուխը, Թէ գլուխը քարը։

Թիթեռնիկ Թիթեռնիկ՝ ուտիկ ըրէ, եռի բանը մտիկ ըրէ։

Թիթեռնիկը ծառն է եղեր, ինչ կայ չկայ վար է Թափեր։

Թիֆլիզ, մարդուն կ'ընէ միւհլիւզ։

Թիթու Թան գարի հաց, աս քու Ճակատդ է գրած։

Թիզ ու կէս, գեանի բզէզ։

Թշնամիդ առիւծ ըլլայ, անմեղ ես նէ մի վա-
խենար։

Թշնամիդ մրջիւն ըլլայ, դարձեալ զգուշ կեցիր։

Թշնամիդ գատաւորն ըլլայ նէ, օգնիչդ Աստուած։

Թշնամին երթալ գալով՝ բարեկամ կըրնայ ըլ-
լալ. բարեկամին երթալ գալով՝ թշնամի կը
դառնայ։

Թշնամին տունէն որ ըլլայ, հորթը երդիքէն
կը հանեն՝ կամ բանդ վայ է։

Թշուառութեան չափն որ անցնի, կ'ըսեն աղէկ
նշան է։

Թող անոր որ իրեն մեղքը գիտեն։

Թողեր է չէն տունը, դէմ է առեր աղքատ դուռը։

Թող ուրիշները բրդեն կամ խփշտեն, ես ու-
տեմ։

Թողուցիր դրած սեղանը, դէմ առիր փակած
դրանը։

Թող չեն իտար որ տղան հօրն ու մօրը ելլէ.
(խօսքի յարմար տեղն որ գայ ըսէ)։

Թող չըսեն թէ էշ է, թող ըսեն թէ գէշ է։

Թող քարերը մար չըլլան։

Թող փոքոյ (հանգիստ) քուն եղած առիւծին. (Պ)։

Թո՛ւհ, մարդ իրան հոգին պէտք է ծախի (ծա-
խէ), որ փողի թամահ անի. (Ե)։

Թուղթին մէկ երեսը կարդալու չէ, երկու ե-
րեսն ալ։

Թունտիրը տաք տաք՝ հացը կողը կը տան (կը
զարնեն. Ե)։

Թունտ (բարկ) քացախն իր ամանը կը ճաթեցնի։

Թուր է կախեր։

Թուրն եկել ոսկորին դէմ էր առել։ (Ե)։

Թուրքին ընչանք (ինչուան) չիծէծես, խոնախա (հիւր) ջըլլար։

Թուրքն անիրաւ, խօսքերն իրաւ։

Թուրքն ըսեր է՝ կեր, յետոյ խօսէ։ Հայն ըսեր է թէ՛ կեր թէ՛ խօսէ։

Թուք ու մուր մէկ սատակ։

Թոփալ ինչով քէրվան կը խառնուիս։

Թռչունը կուտով կը բռնեն, մարդը՝ արծաթով։

Թռչունը ձեռքէ թռաւ։

Թռչուն կայ միսը կ'ուտեն, Թռչուն կայ միս կ'ուտեցընեն։

Թրի կտրածը կը սաղնայ, լեզուի կտրածը չի սաղնար։

Թրով չկտրածը հացով կը կտրէ։

Թքածը չի լզեր։

Ժամիցը ես եմ գալի, ողորմի Աստուած դո՞ւ ես ասում։ կամ Ժամէն ես կու գամ, ողորմի Աստուած դո՞ւ կ'ըսես։ (Ե)։

Ժամի գուռը կամ Ժամին բակը խաղք ընել։

Ժամկոցն ըրախի կ'ուզէ։

Ի հուր գզել, 'ի ջուր աղալ։ (անօգուտ տեղը աշխատիլ)։

Ի բարեկամն և 'ի թշնամին մի յօժարել երկրորդել զբանն։

Ի ծակ կարաս կրել կամ արկանել ջուր։ ('ի զուր աշխատիլ)։

Իմա մի բուռը հողը, մէկ գաղ (առչին) կտաւը։ (Ե)։

Իմ աշխարհիս քարերն ալ, Եդիպտոսի Մեմֆոնի արձանէն աւելի կը խօսին իմ սրտիս մէջ։

Իմալ որ կը փչես, հմալ կլայեկէ։ (Ա.)։

Իմամ որ նամազն աւրէ, հալխի նամազն ո՞ւր մնայ։

Իմաստութիւն և խոնարհութիւն՝ մէկ տան մը մէջ չեն բնակիր։

Իմաստունի հետ քար կրէ, յիմարի հետ հաց մի ուտեր։

Իմ արիւնը էդպէս էժան չեմ ծախել։ (Ե)։

Իմ բանն ալ ա, ով կ'ուզի թող հալայ։

Իմացեր են Ալին մեռաւ, չեն իմացեր որ Ալին ա։ (Ե)։

Իմացողին մէկ, չիմացողին հազար։

Իմ եղովս կը տապկուի։

Իմ ընկերին՝ ինծի բարձ չեմ շինել։

Իմ թանա թթու է, ի՞նչ։

Իմ լացիս մի նայիք։ գաթան խորդեցէք։

Իմ լացիս մի նայիք, հէմ լանք, հէմ երթանք։

Իմ խաչիս զօրութիւնը ես գիտեմ։

Իմ խորոզս փախաւ։

Իմ խօսքիս չի հաւատար, ինչուն խօսքին կամ ան շունին կը հաւատայ։

Իմ հալը տես, անոր տուտիկ տալը տես։ (վեր վեր ինալը հորթին)։

Իմ հալին, նրա տուտիկ տալին։ (Ե)։

Իմ հացս աղ չունի։ (երախտիքս չճանչցուիր)։

Իմ ձեռքերս բանջար կը քաղեն ի՞նչ։

Իմ մատը մտած փուշը՝ քո ջանն ա ծակել։

Ինի մալտէրը, ելլէ որդետէրը։

Ինը խենթ էինք, տան եղանք։

Ինծ չէ հաւատում՝ իշին է հաւատում. կամ Ինձի տեսնէ՝ քեզի վերցընէ։

Ինձ տես, քեզ ողորմիր։

Ինձմէ է ելեր՝ ինձ լոշ կը սորվեցնէ։

Ինծի տես, քեզի լաց, ուր տեղ որ ես՝ ամուր կաց։

Ի՞նչ ականջը կտրած մարդ է։

Ի՞նչ անուշնս կը ծամես։

Իմ ու քուն՝ քանդեր է տուն։

Իմ ցամաք հացը լաւ աչեմ ինձ համար, քանց ձեր զաբլու փլաւը. (Ե)։

Իմ ու քո քէֆը իրար չի ընկնում. (Ե)։

Իմ տանս ծառան եմ, ուրիշին՝ աղան։

Ինատը դրուցը (եարբշ), շատի մօտ կի տանի զմարդ. (Պ)։

Ինը չտուած՝ տասը ձեռք չի՛նար։

Ի՞նչ եզն արաւ Թրիմին, Թրիմն արաւ իծին (այծ)։

Ինչ ես անում՝ գործը գործիս անց է կացել (բանը բանէն անցեր է)։

Ի՛նչ էնեմ կամ ընեմ ան դմակը որ դանակը մէջն է. (Կ)։

Ի՞նչ արիւններ է կըլկըլցուցեր։

Ինչ բրդես ուրիշի քեասէն, կու գայ կը լցուի քո կտեղը. (Ե). կամ Ինչ բրդես ամանդ, ան կու գայ դգալդ։

Ինչ գիտէ սիրտդ, չգիտնայ շապիկդ. (Պ)։

Ինչ լաց լինիլ, Թէ այգի չունիմ. լալուն մեր էշն է որ ադի (պոչ) չունի։

Ինչ զիլերով տէֆերէ բաժնուեր է։

Ինչ ընեմ աշխարքիս լայնութիւնը, որ ոտնամանս նեղ ըլլայ։

Ի՛նչ ընէ սաղ ու տաղը, երբ սիրան է արիւնով լի։
Ի՛նչ կը ցանես, ան կը քաղես, կամ կը հնձես։
Ինչ կը տանինք աս աշխարհքիցը. դարտակ եկել ենք, դարտակ կ՚երթանք։
Ինչ կ՚ուզեն անեն, մեր ոչխարին ինաս չտան տէ։
Ինչ կուզես ասա, կամ արա. Ջուրն իր ճամբէն կը գանի։
Ինչ շահ ոակի տուփիդ, որ մէջի թուչունը թռաւ։
Ինչ որ առնեմ, ան կը ծախեմ։
Ինչ որ բերնին գայ՝ գուրս կու տայ։
Ինչ որ բրդես, ան կ՚ուտես. կամ Ինչ որ բրդես գուշդ, ան կու գայ թուշդ։
Ինչ որ բրդես կամ փշրես քարղանդ՝ ան կը գդլես կամ կ՚ուտես։
Ինչ որ գնում է՝ բաղիցն է գնում. բաղմանչուն ի՞նչ ա գնում. (Ե)։
Ինչ որ խօսում է, հենց իմանաս թէ աւետարանի կողքին գրած ըլլի. (Ե)։
Ինչը՝ ոչ բերնին համ կուտայ, ոչ հաւատքին ցաւ։
Ի՞նչ անես. գեղացու խօսքը չուանի չեն գնում. (Ե)։
Ի՞նչ բանդ ա. փորդ հոյ, բերնիցդ բարձր չէ. (բերնէդ բարձր չէ. Ե)։
Ի՞նչ տըւիր ձեռքս որ ան զարնեմ երեսդ։
Ի՞նչ իրար անցեր ես։
Ինչ խաչ քաշես, ամենուն դեղ՝ անցաւոր ըլլալը մոռածելն է։
Ի՞նչ ծանոր ու մեծ նստեր ես։
Ինչ կանտաը որ ուղտն իյնի, իւր կաշին իշու մը քեռ կ՚եղնի։

Ինչ կը բրդես, ան կը խրթես կամ կ'ուռես։

Ի՞նչ կը մտածես. հարուրին կէսը յիսուն է։

Ինչ կ'ըսես, ան կը լսես։

Ինչ տեղ փորդ չի կշտանալ, անօթութիւն մի յայտնել։

Ի՞նչ էր տեսեր պատէն կախ՝ հիմա տեսաւ ճակատէն կախ։

Ինչ պէտքն է թէ գալը ոչխարը տարաւ. (Ե)։

Ի՞նչ ջուր կամ ստռ եղեր մնացեր ենք։

Ի՛նչ սիրտը, ան բերանն է։

Ի՛նչ սուրբին խունկ ու մոմ խոստացիր, ինչ տղին՝ բան։

Ինչ տալիս ես ձեռքով, նա գալիս է քեզ հետ։

Ինչ տեղ հաց, ան տեղ կաց։

Ինչ տեղ պանիր, ան տեղ բանիր։

Ինչ տեղ Վիրք կայ, գիրք չը կայ. ինչ տեղ գիրք կայ, Վիրք չկայ։

Ինչ տեղ քթոց, ան տեղ կթոց։

Ինչ քաղցր կերակուր էլ տաս երեխին, էլի իր մօր կաթը՝ շաքարից և մեղրից էլ անուշ ա. (Ե)։

Ի՛նչ քար վերցընես՝ տակէն կ'ելնէ։

Ի՛նչ քիթը կտրած մարդ է։

Ի՛նչ օձի ձագ է, չիկտես։

Ինչ ստեղ չի (աս տեղ չէ) իրայ փայ (իր տեղը), Ասուած ստեղ ա։

Ինչ տեսեր՝ տեսեր էինք, քէօր հրեշտակ չէինք տեսած։

Ինչ տամ, որ մի բարի խօսիս։

Ինչուան աղը եկաւ, մատաղը վերցաւ, կամ հանդչեցաւ։

Ինչուան առուն ջուր գայ, գորտին աչուին գուրս կու գայ։

Ինչուան գու ատ հասկընաս՝ ուղտի պոչը գետին կը հասնի։

Ինչուան Զարգարը զարգարուի՝ ժամուորը կ'արձակուի։

Ինչուան հասատը բարկըցաւ, մենք եղանք բարակ ցաւ։

Ինչուան հարուստին կամքը ըլլայ, աղքատին հոգին կ'ելլայ։

Ինչուան հերթը (կարգը) մեզ հասաւ, բարի լուսը բացուեցաւ։

Ինչուան սայլը չի շրջի, ճամբան չեն շակեր։

Ինչուան մենք գողուլթեան եղանք, լուսընկան ալ ծագեցաւ։

Ինչուան որ լէպլէպի ըսէ, խանութինները կը փակուին։

Ինչուան որ հասկըցուցի, բերանս մազ բուսաւ։

Ինչուան որ ջուրը գունդգ չհասնի, ձեռքդ չեա շարժեր։

Ինչուան որ քուռակը ձի ըլլայ, քուռակի տէրն ինչ կը քաշէ. (ինչուան որ տղան մարդ ըլլայ, մարը ինչ կը քաշէ)։

Ինչուան չգայ յեռինը, չիմացուիր առջինը, կամ չի յիշուիր առջինը։

Ինչուան չիրը կամ չորը թրջի, հիւանդին հոգին կը թռչի։

Ինչուան սէլը (հեղեղը) չանցնի, ճամբան չի շըտկըւիր։

Ինչուան տղան չը լայ, մարը կաթ չի տար։

Ինչուան քիւրք ըսայ, գարունն եկաւ։

Ինչպէս աչ թապլիս պատի զպուրչախը (ոլոռ կամ կարկուտ), նա հոն չի կպիր։ (Պ)։

Ինչպէս մարդ, այնպէս խօսքն։

Ինչպէս ուզում են, էնպէս խաղում են։

Ինչքան գեանի երեան ես, երկու էնքան աչ գեանի տակն ես։

Ինքը կը գրէ, ինքը կը կարդայ։ տիկը կը չալէ, ինքը կը խաղայ։

Ինքը գեղին՝ մազը գեղին, ով որ տեսնէ պատ-ռի լեղին։

Ինքը հոս չէ, Աստուած հոս է, որ աս բանիս անմեղ է։

Ինքը պզտիկ, լեզուն մեծ։

Ինքը պզտիկ, մեծ երազ կը տեսնայ։

Ինքնիրեն եկող միսաֆիրը պատիւ չունենար։

Ինքնիրեն վար կնողը չի լաց լինում։

Իշի ոսն ու գլուխը խուզում, որ տէրը տեսնե-լիս, ասում են՝ թէ քոնը չի։ (Ե)։

Իշի գացուցը (անարգութենէն) բեռամաղ (ան-հանգիստ) մ՚ըլլար։

Իշին ասեն, աչքալոյս՝ քեզ քուրիկ է եղել։ ասաց՝ Խոտը առջևիցս պէտք է առնէ, և ոչ բեռը շալակիցս։

Իշուն անգին պէտք չէ անցնիլ։ (չափով)։

Իշուն գլուխը լուանալ է աս բանը։

Իշուն գատածը՝ ձիուն համար է։

Իշուն դրախտն են դրեր (բանտը դրեր են)։

Իշուն զռոցին ըսեր են, ձայնդ անսպառ։ ա՛լ զռոցը չէ կտրեր։

Իշուն թալ (աղցան) խաչէ, թէ ուտէ՝ ա՛լ խա-չէ։

Իշուն խօսակցութիւնը չէ՞ք ըներ։

Իշուն ծախսը մոռցանք։

Իշուն հարցուցեր են, ի՞նչ պաշտօն կուզես. — ասաց. ձմեռն ըլլիմ կատու, ամառը հովուի շուն։

Իշուն հարցուցին, խօնախդ ո՞ւր է. — ըսաց. մոտուլը գիտէ, կամ Իշին հարցրին՝ թէ ինչևանդ ո՞ւր է. — ասաց. Մալուխը գիտէ. (Ե)։

Իշուն ոսկի դիպակ հագցուր, նա դարձեալ կը զռայ։

Իշուն չի՞ւշ ըսելը դ, իրեն հոգին է։

Իշուն պոչը մէյտանը չեն կարեր՝ որը երկան կ'ըսէ, որը կարճ։

Իշուն ուհան են տուեր, հոտ ընելու տեղը՝ կերեր է։

Իշտահը ակռային տակն է։

Իշտահն ատամի տակէն կ'ելնի. (Ե)։

Իշտահը ուժ է տուեր, փլաֆը ուժ։

Իրեն գլուխը չի կարում կապել, կ'երթայ հարսնէտունը հարսի գլուխ կապելու։

Իրեն եղովը կը տապկուի։

Իրա համար քնում՝ ա, ուրիշի համար երազ տեսնում։ (Ե)։

Իրեն ծառը ծարաւ թողած, ուրիշինը ջրողը, ոչ յարուութիւն ունի, ոչ թողութիւն։

Իրեն համար քուն կ'ըլլայ, ուրիշի համար երազ կը տեսնէ։

Իրեն հացը կ'ուտէ, ուրիշի վրայ կը խօսի։

Իրեն յարդը չիմացողը, այլոց յարդը ինչ կ'իմանայ։

Իրեք մարդու խօսքը անցուկ կ'ըլլայ. հարսին, քժշկին և երաշխաւորին։

Իրիկ եղնի, թող գէշ եղնի. ոտքերս թող գեա-
նէն կարի, թող էշը եղնի. (Ե):
Իրիկուընէ պիւլպիւլ, առաւօտուն սուտ խուլ:
Իրիցու բերան, Աստուծոյ կրակ:
Իր կանգունովը կը չափէ:
Իրն իրի միսը կերաւ, ոսկորը դէն չդցեց (ինքն-
իրեն միսը կերաւ, ոսկորը անդին չձգեց. Ե):
Իր ոտով եկած խոնարհը՝ պատիւ չունի:
Իր տնկած ծառին տակին քնիլը, իր բհամ բե-
րած (առաջ բերած) պտուղն ուտելը՝ աշ-
խարհք ամի (կամէ. Ե):
Իւրաքանչիւր վնասը՝ իրատ է մարդոյ, ոչ թան
պակսում, ոչ խրատը:
Ի քարէ կաթն կթել. (յանյուսալեաց հանել
ինչ):

Լալին լեզուէն՝ տէրը կը հասկընայ:
Լալով կը ծնանիմք, խաղով կը մեծնանք, աշխա-
տութեամբ պէտք է մարդ ըլլանք:
Լաթերով սատանայ:
Լալու ալ սիրտ պէտք է:
Լալու էշը մեր էշն է որ ականջ կամ փալան և
կամ պոչ չունի:
Լալուն՝ խենթին տէրն է, խենթը ամէն օր հարս-
նիք ունի:
Լան լան թեւեր ուժ չկայ, խոշոր աչուի լուս
չկայ:
Լանին ճար կայ, նեղին ճար չկայ:
Լանքին ու երկանքին կը քաշեն. (կը բամբասեն):
Լան օրը նեղ ապրէ, որ նեղ օրը լան ապրիս:
Լացը լաց կը բերէ, խնտումը խնտում:

Լացով ոչինչ չի շինուիլ։

Լաւագոյն է բուրգը տալ, քան զոչխարը։

Լաւագունին անյագ տենչ՝ բառնայ և զլաւն առ 'ի մէնջ։

Լաւ եզը՝ լուծին տակը կ'իմացուի, կամ լծան տակը բէլլիւ կ'ըլլի. լաւ կնիկը՝ օրոցքին տակը։

Լաւ է ամուր երեսը, քան զտանը գուլթանը։

Լաւ է անագան, քան երբէք։

Լաւ է առտուան շառը, քան իրիկուան խէրը։

Լաւ է տսօրուան ընկուզը, քան վաղուան խարփուզը։

Լաւ է արդար աչքը, քան մեղաւոր միտքը։

Լաւ է գալիք զատիկը՝ քան անցածը։

Լաւ է գեղով գերի երթալ, քան մէնը (մինակ) մեծ հարանիք երթալ։

Լաւ է գիտունին գերի, քանց անգէտին սիրելի։

Լաւ է խելօքին գերի ըլլաս, քան անխելքին տէրը։

Լաւ է գիտուն մեղաւոր, քան զտգէտ արդար։

Լաւ գրեան, աշնիւ գինին, ոբքան հիննան, այնքան յարգի կը լինին։

Լաւ է թռչուններուն մէջ կաքաւն ու լորը, պըտուղներուն մէջը սեխն ու սալորը, Ադամորդոցս մէջը՝ կարճն ու կլորը. Աստուած անիծէ երկայն ու ջորը։

Լաւ է իմաստունէն յանդիմանութիւն լսել, քան յիմարէն գովասանք։

Լաւ է խելօք չարկամը, քան անխելք բարեկամը։

Լաւ է խելօքին հետ ծեծ, քան խելին հետ հաց ուտել։

Լաւ է խոզանալ, քան թէ խոստանալ և չկատարել։

Լաւ է կաղանդ, քան զվարդավառ։

Լաւ է հեռու կամրջէն անցնիս, քան թէ մոտի ջրէն անցնիս ու վտանգի մէջ ըլնաս։

Լաւ է կռունկին ղահվէ խըմցընել, քան քեզի խօսք հասկըցնել։

Լաւ է Հային հոր մը հաց պարտք ունենաս, քանց Թուրքին փոր մը հաց։

Լաւ է հազարը գայ, քան մէկ հատը երթայ։

Լաւ է մարդու աչքը ելլէ, կամ դուրս գայ, քան թէ անունն ելլէ։

Լաւ է մէկ պատառն՝ հազրի բերան, քան հազար պատառն՝ մէկի բերան։

Լաւ է մոտիկ հարևանը կամ դրացին, քան հեռու բարեկամը։

Լաւ է սարին տակն ամըչնալ, քանց սարին գլուխը։

Լաւ է տան շունը ըլլալ, քան թէ տան պզտիկը։

Լաւ է փորձած սատանան, քան անփորձ հրեշտակը։

Լաւ է քիչ, քան ոչինչ. կամ Լաւ է քիչը, քան թէ հիչը։

Լաւ աղջիկը օխտը մանչու կամ տղի համ կուտայ։

Լաւ երազ է, թէ որ կատարուի։

Լաւը՝ լաւին կ'երթայ. (վատն ամուսնութեան)։

Լաւ ըլլիմ, լաւ կասեն. վատ ըլլիմ, վատ. (Ե)։

Լաւ թուխսը իրեն ձիգձիգներուն (հաւձագ) հետ կը քալէ. (Կ)։

Լաւ հաւը իրա ձուաբերի վրայ մատ կը դայ. (իրեն ձագերուն վրայ հոգ կ'ունենայ. Ե)։

Լաւ լողալ գիտցողը, վերջը ջուրինն է։
Լաւ կաթ ուտող մէկը գտիր։
Լաւ ձին՝ գարին կ'աւելցնէ, գէշ ձին՝ խամչին։
Լաւ տանձը, արջն ա ուտում կամ արջը կ'ուտէ. (Ե)։
Լաւ փոքրաւորը, իր տիրոջը երկու աչքի լինի ա. (Ե)։
Լաւութիւն կ'անես, լաւութիւն կ'տեսնես. վատութիւն կ'անես՝ վատութիւն. (Ե)։
Լաւ օրերու բարեկամներ։
Լաւ օրը բարեկամ շատ կը գտնուի։
Լեզուդ լուռ ըրէ, գլուխդ դուր կենայ։
Լեզուդ չըլլար նէ, գլուխդ շունները կ'ուտէին. կամ Լեզուդ չ'ըլլար նէ, աչքդ ագռաւները կամ մկները կ'ուտէին կամ կը տանէին։
Լեզուին տալ գիտէ ....
Լեզուի նման անուշ բան չկայ, լեզուի նման դառն թոյն չկայ։
Լեզուի տակ մի իյնար (բամբասանքի)։
Լեզուն բունը դնելու է։
Լեզուն կակուղ միս մըն է, բայց ինչ ոսկորներ կը ջարդէ։
Լեզուն ոսկոր չունի որ քիմքը խրի։
Լեզուն չըլլար նէ, ախոռը կը կապէին։
Լեզուն օձի պէս երկու ճիւղ ունի, մէկէն մարդիտ կը թափի, մէկալէն աղու։
Լեզուի տակը ասեղ չկայ որ պաթի։
Լեզուն ոսկոր ունենար նա, աքըցադ (արդելիչ) կ'ըլլար. (Պ)։
Լեզուով թէ ըլլար, ամէն բոչայ փաչայ կ'ըլլար։
Լեղի՝ օձի կաթ է։

Լեռը լեռնէն խռովեր է, ան անկէց խապեր չէ։
Լեռ լերան վրայ կ'ելլայ, տուն տունի վրայ չելլար։
Լէփէզ վէգ է դարձեր. (սրուած, անամօթ)։
Լիտր մը բամպակ՝ լիտր մը բուրդ, կ'ուզէ հայրցեր է, կ'ուզէ թուրք. (Ա.)։
Լող է ելեր, լող կը ցուցընէ։
Լուին համար եօրղան կամ խալին չէն էրեր։
Լուսացաւ՝ լուսն 'ի բարին, հաւն 'ի թառին, ծիսն 'ի ծառին, մարդն իր բանին. ծօ հէյ պէ՛օ տէօլվէթ. ի՞նչ ես պառկեր, էլ քու բանին. (Ե)։
Լուսաւորեալ գլուխն ափսոս չի որ ցաւի. (Ե)։
Լուսը գրկէ ու պառկի։
Լուսին եմ տեսեր, աստղին լուսին չեմ ըսեր։
Լուս իջնայ հոգուն կամ լուս վառի գերեզմանին։
Լուսնին կապայ կը ձևէ։
Լուս տեսած հաճի է դարձեր։
Լուրը ա՛ռ. տղայէն, հարբածէն, խևէն և կնիկ մարդէն։
Լսողը ըսողէն խելօք կամ վարպետ պէտք է ըլլայ։
Լարա գլող, լարա մանող, շուտ խալըսող, գուռը կայնող աղջիկս։
Լաչին մէջ հալվա կայ. (կարծեց թէ . . .)։

Խալիսը գիտեն ես ովեմ, գու ովեմ։
Խալիսի աչքը քեզ համար լիս չի տալ (լուս չի տար. Ե)։
Խածանին եռևը կեցիր, քան թէ տուողին առջևը։

Խանչալիդ քարը խօ չկ՚ինիր. (Ե):

Խաչին ասաց. տակս ոսկի է. – շերեփին ասաց. ես ոսկից կու գամ:

Խաղ շատ գիտեմ, բայց ձայն չունիմ:

Խաղաղութեան մէջ կռիւ մի՛ ձգեր:

Խամ հագիր, խաս վայլեցուր:

Խամ մարդուն թէ գործ մը տաս, պէտք է դուն ալ հետն երթաս:

Խաչը՝ աչը կ՚ընէ զօրաւոր:

Խաչը վերնական, դիւանքը հետ կ՚իյնան. (խեն-դին հետ երիշմիշ կ՚ըլլան):

Խաչը տէրը կ՚ընէ զօրաւոր, հարսը տէրը կ՚ընէ համաւոր, շունը տէրը կ՚ընէ հաչան:

Խաղողը սև խաղողին նայելով կը սևնայ. մարդն ալ իրմէ խելօքին նայելով կը խելօքնայ:

Խաչին ալ խունկ ու մոմ կը պակսի:

Խաչիս զօրութիւնն ես գիտեմ, կամ Խաչն իմս է, զօրութիւնն ես գիտեմ:

Խառղան՝ խառղային աչքը չի խաներ (հաներ. Վ.):

Խաւն երազն ինի (երազին մէջ) գարու արտին կը տեսնայ. (Վ.):

Խացը խացթխին տու, (հացը հացեփողին տուր), մէկ էլ աւելի տու. (Վ.):

Խարբերդու անցածը, Բալու կը կարդայ:

Խարանիս ծի պիտի (հարանիքը ինձ՝ պէտք է), խաչօխնէն իմ խօր ու մօր. (խաչօրհնէքը իմ հօրս ու մօրս. Վ.:)

Խացը գրին խատաւ, բանը գրին փախաւ. (Վ.):

Խաց ու բարին կ՚երթայ, բանն առաջ չ՚երթար. (Վ.):

Խեղացին մէկ խօսք, անխելքին հազար:

Խելացին ծնած երկիրը չի բնտռեր, ունած երկիրը կը բնտռէ։

Խելքդ թէ հանի, ձեռքդ չհանի, մեծ տառապանք է։

Խելքդ խելքին ինչ ես տուեր։

Խելքդ հացիդ հետ ես կերեր։

Խելքդ սիրեմ։

Խելքը հասակումը չէ՝ գլխումն է. (Ե)։

Խելքի բուն։

Խելք որ կը բաժնէին կամ փայ կ'ընէին՝ դուն ո՞ւր էիր։

Խելօքը ինչուան մտածեց, խելը իր բանը տեսաւ։

Խելօքին մին, յիմարին քանի՞ն կ'ուզես. (Ե)։

Խելօք մարդուն հետ քար կրէ, խեւ մարդուն հետ՝ հաց մի՛ ուտեր։

Խեղճ գէլին անունն ա կոտրեր, աղուէսը աշխարհք քանդեց, կամ Խեղճ գալին անունն է եղեր, աղուէսը աշխարք քանդեց. (Ե)։

Խենթ եմ ըսէ՝ փարայ մը տամ։

Խենթը իր օրը՝ օր է ըրեր, խելօքը սպասեր է օրը գայ։

Խենթին սիրտը՝ լեզուին վրայ է, խելացիին լեզուն՝ սրտին վրայ։

Խենթը խենթին տեսնելիս՝ տէյէնէկը պահում է։

Խենթը շալկեր են, ըսեր է որ ոտուընեբս կը ցաւի։

Խենթ կամ խեւ աղջիկը՝ խենթ կամ խև հարս կ'ըլլայ. խենթ հարսը՝ խենթ տանտիկին. խենթ տանտիկինը, խենթ պառաւ կ'ըլլայ։

Խերը խիար է դառել, արիւնը՝ ջուր։

Խեւը գնաց հարսնէտունը, ասաց՝ աս լաւ է

քան զմեր տունը, կամ Գիժը գնաց հարս-
նեւտունը, ասեց՝ աս լաւ ա քանզ մեր տունը.
(Ե):

Խեւը զինքը գովեր է, ապտալն ալ իր կնիկը:

Խեւը հորը քար մ'է ձգեր, տասը խեղոք չեն կըը-
ցեր հանել:

Խեւը ունէր բեռ մը չաման, միշտ կը չափէր ամեն
ամանն:

Խեւը վեր են առեր (վերուցեր են) ըսեր է. վար
գրէք՝ յոգնեցայ. (Ե):

Խեւը վախկոտ կ'ըլլայ:

Խեւին բան տայ մարդը, նա տանը կրակ կու-
տայ. (Պ):

Խեւին չուլը ինչ ընէ, չուլին ատպոնն ինչ ընէ:

Խեւին և հարբածին ձեռքը՝ դանակ չեն տար:

Խեւին հացը՝ խեղոքին փորը:

Խեւ հարսին, խենթ փեսայ:

Խեւին հետ մի աներ Ճամբայ, գլխուդ կը բերէ
պէլա:

Խեւին ջաղացքն Աստուած կ'աղայ, կամ Գիժի
աղունն՝ Աստուած կ'աղայ:

Խեւն կամ խենթն ասայ. խեղառն կամ խեղոքն
և կամ շըլթն աւտայ:

Խեւն կամ խեղառն ինչ գիտէ՝ նուշն ինչ է:

Խզանին փորն որ կշտանայ, քունը կը տանի:

Խիարը ծուռ կը բուանի:

Խզանն ունի հայ ու պանիր, գիշերը քունը չի
տանիր:

Խիկար, անջուր ջաղացքին օղուին ինչ է, փող-
ղակն ինչ է. անողորմ մեծատունին ըռզակն
ինչ է՝ գուլթն ինչ է:

Խիկարն ըսեր է. ուր տեղ պանիր, հոն տեղ բանիր։

Խիկարն ըսեր է որդւոյն. ինչ առուտուր կ'անես արա՛, հացի առուտուր մի՛ աներ. քեզ չի մնար աղքատաց ահուզարը։

Խիկարը չորս բան գովեց. գողութենէ գողալ, խաղ անխռով խաղալ, ջրի մէջ լաւ լողալ, իրեն սխալը ճանչնալ։

Խին խաւերաց քշա քշա. նոր հաւերաց, ճու-ճո՛ւ ճուճու. (Վ.։)

Խիպիլիկ տիտիկ արա՛. էտի կամ եռքի բանը մտիկ արա՛։

Խլլոտին՝ ցուրտը կամ ծուխն է մահանայ։

Խլլխի (հալխի) աչքը որ ծի (ինձի) լոս տայ (լոյս) իմ աչքը կը խանեմ կը թաշեմ (կը հանեմ կը թապլեմ. Վ.։)

Խլլխի խարսը՝ խօր կ'եղնի. (հալխի հարսը գեղեցիկ կ'ըլլայ. Վ.։)

Խմորը մենք շաղուեցինք, տես գաթան ո՛վ կերաւ։

Խնամիի շունի պէս՝ պատէպատ կը զարնեն, կամ կու տան։

Խնծորը ծառէն հեռու չինիր։

Խոզը սեղանեն հրամցուցեր, թաթերովը պղծեր է սեղանը։

Խոզին գլուխը ոսկի թէփսին գրին, ցաթիկեց ցեխին ընկաւ. և կամ Խոզին գլուխը սուֆրան են գրեր, գլորեր աղբն է ընկեր։

Խոզին քիթն ալ կորեա՛ ականջն ալ, դարձեալ իր խոզութիւնը կ'ընէ։

Խոզն ասեց. ինչ ճուտերս աւելցան, (քանի որ

ձագերս աւելցան) պարզ ջուր չկարացի խմել. (Ե):

Խոսաու�մը տալ կի բովի. (Պ):

Խորթերու հայր, խեղնթերու կնքահայր:

Խորթը՝ կը հանի մարդու մորթը:

Խորհուրդ մարդկան, կամք Աստուծոյ:

Խուլէն, մունջէն, կաղէն, Աստուծոյ արատաւոր մարդէն վախցիր:

Խուլը մունջին իշմար կ՚ընէ:

Խուլն առանձին պառկեցաւ՝ կնկան մեռնելն իմացաւ:

Խուլը չիմանալուն՝ դլխին... էն զարկեր, ըսեր է. Ա՛ս ինչ դմբդմբոց է կու գայ:

Խուլն է յաղթեր շատխօսին:

Խուծած փատին (անպէտ ծառին) խուծած է եէմիշը. (Պ):

Խունկդ մոմդ քեզի, մեր ժամը մի՛ գար:

Խունկը վեր կրակին տէրը կը ճանչնայ:

Խուփը դլորեցաւ պուտուկը կամ կճուճը գըտաւ:

Խոփդ սուր ա, հանդը բաժնովի ա, (խոփդ սուր ալ ըլլայ, արտը օրթախուրթեան է. Ե):

Խոփը քարին առաւ:

Խպնիմ նէ ամօթ է:

Խռովեր ես, սառ ջուր խմիր, սիրտդ հովնայ. (Ե):

Խրատ ունիս նէ, քեզի պահէ:

Խփած աչքին բաֆա չկայ. (կուրցած աչքին վընաս չի գար. Ե):

Խօսքը կանուխ ելլալը չէ, բանն ան է որ Աստուած յաջողէ:

Խօսքը կորիՃին կէսն է, տուած խօսքը կը կատարէ։

Խօսքը՝ խօսք կը բանայ։

Խօսքը հասարակաց է, մանաւանդ առնողինը։

Խօսքը մերը, տունը մերը։

Խօսքը մեր մէջը մնայ, ամմա....

Խօսքը ջուխտ է. մէկը ըսէ, մէկն ալ լսէ։

Խօսքը ցան փռէլ չի, ցան Թօփ անելն ա։

Խօսքը տեղը Թող գանէ, հոգիս քեզ մատաղ ըլլայ։

Խօսքը արծաԹ է, լռութիւնը ոսկի։

Խօսք կայ օրը մէյմը ըսես՝ քիչ է, խօսք կայ՝ տարին մէյմը ըսես՝ բաւէ։

Խօսքի սարաՃ եղիր. ականջդ երկուս, լեզուդ մէկ. երկուս լսէ, մէկ խօսէ։

Խօսքի որսորդը խօսքը բերնէդ կը քաղէ՝ իր օգտին։

Խօսքով արտ չի ցանուիր, բանը հերկելն է։

Խօսք կու տաս ստակ տալու, տալուն բան չի դիմանար։

Խօսքին սուտը չըլլար, սխալը կ՚ըլլայ, և անբաւ է։

Խօսքով փլաՃ չի եփիր, եղն ու բրինՃն է հարկաւոր. խօսքով բերդ առնել չըլլար, խելք ու զէնք է հարկաւոր։

Խօրատան խալի կը գործեն, բայց լանքին Թէ երկանքին՝ չի գիտեր։

Խօրոզն աղբանոցը մէկ հատիկ կը գտնէ, մեղք կ՚ըսէ՝ գարեհատ կարծեցի, մարգարիտ է եղեր։

Մալլաճ զգեստը, ինքիրեն կը մաշի։
Մախսերս եղաւ։
Մակ աչք մարդ է։
Մաճկէ թող մեռնիմ։
Մաճուկ բան մը լսեցիր, նայէ մեռնի սրտիդ մէջ. ամուր կեցիր, մի՛ վախնար, չի պատռիր ու գուրս չի ելլար։
Մաղիկը՝ թփի տակին վեր կ'ընկնի. (Ծաղիկը իր բոյսին տակը կ'իյնի)։
Մամեմ ծամեմ բերանդ դնեմ։
Մայրն է ծրարոցին։
Մանր կեցած քարին ծակէն՝ ջուր չի վազէլ։
Մանր կեցիր կամ նատէ, որ լիտր դաս։
Մանր օրը՝ թեթև անցուցինք։
Մառան է՝ տէրը տէր ընողը, կամ ծանուցընողը։
Մառայն եթէ տէր եղաւ, բոշան փաշայ կ'ըլլայ։
Մառայք երբ տանն կան, տուն է աղտոտ. երբ տնէն կ'ելլէն, անուն է աղտոտ. (Ե)։
Մառ լինի՞ որ քամի չիդպչի։
Մառը որ վեր ընկնի՝ (վար իյնայ,) կացնաւորը կը շատնայ։
Մառը քանի որ բար (բարուն ակ) շատ ու նեղնայ, գլուխը կախ կը դցի. (Ե)։
Մառն ըսեր է կացնին. ի՞նչպէս ինձ կը կտրես. — ըսեր է. կոթս քեզմէ է։
Մառուն մէկ երեսէն խաչ կ'ելլէ, մէկալ երեսէն խափէչ չե՞ելլեր։
Մատուրը խաղին կարօտ չէ։
Մարաւ՝ ջուրը կը տանի կը բերէ։
Մեծելն էլ ա ատաթ, սիրելն էլ։
Մերանաս, ծերի հալը կամ զատրը կամ տէրտը կ'իմանաս։

Մերացար, ծռեցար։

Մերը հօր պէս պատուէ, կինը մօր պէս, աղան զաւակիդ պէս։

Մերն ու աղան մէկ է։

Մերուքեան երեսին նալլաթ. ով ասես՝ ծերի դնչին էլ չի մտիկ տալիս. (Ե)։

Մերուքիւն՝ գերուքիւն։

Մերուքիւնն՝ երկրորդ տղայուքիւն։

Մերուն աչքով աղջիկ ա՛ռ, կէնձին աչքովը ձի ա՛ռ։

Մերը նաշը կամ ջախպը (ճաղ) մոեր է, ա-րևը մարը։

Մերան ի՞նչ ա, թէ իրայ եղն ի՞նչ ըլլի։

Մլիս ծաղկիս, վարդ լոլորիս։

Մնողաց չափէ 'ի դուրս սիրած տղան, կամ այն որ աւազակ կ'ըլլայ, և կամ մուրացկան։

Մոյը բանի դիր, խրատ լսէ։

Մովէն մէկ թաս մը ջուր թող պակաս ըլլայ։

Մոմն ընկեր, ձեռքը փրփուրին կ'երկնցընէ։

Մովը իյնողը՝ անձրևէն չի վախեր։

Մովը թապլէս նէ՝ ալ չի կը կայնի (տիրի է)։

Մովը ընկաւ կամ մտաւ՝ ցամաք էլաւ։

Մովը իյնալ լողալն ալ գիտէ, գուրս էլլէլ գո-ղալն ալ։

Մով ըլլէր, կը պակսէր։

Մով կ'երթաս, ցամաք կու գաս։

Մոմն անցանք, առո՛ւն կամ գե՞տը պիտի խըղ-դուինք։

Մովուն խուսի դնել և երկնքին սիւն՝ չըլլար։

Մուլին համար երկու անգամ ժամ չեն ըսեր։

Մուլուքիւնը տովլաթի ինաս ա։

Ծուռ ծակը՝ ծուռ չիվի կ'ուզէ. (Պ):
Ծուռ նատինք, շիտակ խօսինք:
Ծուռը ծռի, անմեղն ազատի:

Կաթէն բերանն էրեր է, մածունին ալ կը փչէ:
Կաթը արիւնին խառնող:
Կաթին հետ մտեր, հոգւոյն հետ պիտի ելլէ. (գէշ բնութիւնը). կամ Կաթի հետ ներս մտած մոլութիւնը կամ բնութիւնը՝ հոգուն հետ դուրս կու գայ:
Կաթ կ'ուզես՝ կով պահէ:
Կաթնամուան՝ գերեզմանէն կ'ելլէ:
Կաթն անարատ ընել:
Կաթողիկէս մեծ՝ զօրութիւնը սակաւ:
Կալաքը իրեն տեղն է աղէկ. (Պ:)
Կալէն ի՞նչ տեսայ, որ կալատակէն ի՞նչ տեսնամ:
Կալն ու կութը, մամին ալ հարսնիքը:
Կալոց է:
Կախ փէշերը:
Կակղընաս կ'ուտե՞ս:
Կաղամբն որ հոտի, թթուած դդմին բարկենդան կ'երթան:
Կաղը՝ կարմունջումը բռնել. (Ե):
Կամ աղերը կ'ելլի պակաս, կամ մաղերը. (Ե):
Կայ մարդ՝ տէրտէրը կը սիրի, կայ մարդ տէր-տէրակին. (Ե):
Կամացը՝ ուժով է:
Կամաց կէր, ակռադ չառնէ:
Կամ ծեծ չէս կերեր, կամ համրանք չիտես:
Կամ մի խոստանար, կամ կատարելու մի յամենար:

Կամուրջ կայ՝ ջուր չկայ, ջուր կայ՝ կամուրջ չկայ։
Կ'ամբչնաս, երեսդ մաղ մը անցուր։
Կայ յաշխարհի չկայ յանապատի. կայ յանապատի չկայ յաշխարհի։
Կանայք իմանան թէ երկինքը սէյիր կայ, սանդուխ կը դնեն որ տեսնեն թէ հոն ինչ կայ։
Կանանչ հաւի հաւկիթ կը բնտռէ։
Կանթեղը՝ տակը լուս չի տար։
Կանթեղն առաջուց վառելու է. (բարեգործութիւնը 'ի կենդանութեան)։
Կան (գէղը) նստեր, Մուտուրկան կը հաջէ կամ կը խօսի։
Կանչվռտող կատուն՝ մուկ չի բռներ։
Կանց հա ասեմ, մէջը մնամ (հա ըսելուն). հաղորդ չէ ասեմ, պրծնեմ (աղաղիմ։)
Կաշառքը տուողին՝ մութ տեղը լուս կու տայ։
Կաշի կը քալցընէ։
Կաշի ու ոսկոր է դարձեր։
Կապէկներ տալ, մանէթներու դործ չինել։
Կապը քաշեցինք հայ. (խաբեցինք)։
Կապիկը մենք խաղցուցինք, շապաշ անոնք առին։
Կ'առնեն կը ծախեն մարդու։
Կառքը՝ առանց օծելու չի քալեր։
Կ'ասեն ծրծռնըկան անէծքն՝ վեր մարդու չելնի։
Կասէ կուսէ չեմ ուզեր։
Կատարեալ խօսքը իշուն կ'ըսեն։
Կատուընները դուրս ելան, մկնները հափս ելան։
Կատուին ըսեր են՝ աղբդ դեղ է՝ տարեր խոլորունկ է թաղեր։
Կատուին հարցին, հէրդ ա լաւ թէ մէրդ. — ասեց. նա՛ օ նա՛ օ. (Ե)։

Կատուին խաղը մկանը մահ։
Կատուին պոչը կոխես նէ, ձանը կ'ելլէ։
Կատուին փախածը (կամ փախսը) մինչ 'ի մա-
րագն ա. (Ե)։
Կատուի պէս կը լզուին, շան պէս կը քծուին։
Կատուի պէս կ'ուտէ, տէքը կը խփէ։
Կատուն գլուխը կը թաթէ, կ'ըսէն՝ անձրև պիտի
գայ. թող նախ անձրևը գայ, ապա երեսդ լուա։
Կատուն իր փորին համար մուկ կը բռնէ։
Կատուն ճիկէրին հասած չէ, ասիլ է. պապա-
յիս հոգուն։
Կատուն մեռաւ՝ մուկերը մէյտան առին։
Կատուն մսին չէ հասեր, ըսեր է. Փիւֆ, հո-
տած է. կամ այսօր ուրբաթ է, և կամ մը-
լաւ կը կանչէ։
Կատուի խռխռալը՝ մկան հոգեհանգիստն է. (Ե)։
Կարաս է աւրեր. (սուտ մը կայ)։
Կարասին մէջ ինչ որ կանչես, ան կը լսես։
Կարն եկաւ կուրին վրայ։
Կարծեցիր թէ լոշին մէջ հալվայ կայ։
Կարծէ թէ պզոսի լեռները ինքը ստեղծեր է։
Կարկուտէն փախանք, անձրևի բռնուեցանք։
Կարճ է, խարիպ տէրտէրի խարճ է։
Կարմնջից անցել՝ իրար են դպել։
Կարմիր կոմշն իր կաթը կը թափի. (Ե)։
Կարմիր ձուն՝ զատկին կը սազի (Ե). կամ Կարմիր
հաւկիթ՝ զատկին համար է, կամ կը վայլէ։
Կարմիր ոսկին՝ սև օրի համար է։
Կարպետս ջուրէն հանեցի։
Կարող է վարդը՝ ծովի միջում, մանիշակը՝ կրա-
կի առջին դիմանալ։

Կարպետին տէր չեղողը, մէջտեղը կը պառկի։

Կացինը գնում ես ծառի քօքին, դու գնում։ ծառն ինքնիրան քեզ ցախ կը դառնայ։ (Ե)։

Կաքուի քալէք քալէն 'ի քէն, ագռաւինն ալ մոռցաւ։

Կեմ մը տամ (խոտէ չուան) տէր պապա, ժամ մը կ'ընե՞ս կամ կ'ըսե՞ս։ – Ժամ մ'ըսեմ կամ ընեմ որ, կեմ մը չաժէ։ (Կ)։

Կենդանւոյն սևն ու ճերմակը դուրսն է, մարդունը ներսն է։

Կեսուրդ մեռաւ, տեղդ լանցաւ։

Կեսուր չեմ ուզեր։ (Թէֆթաճի)։

Կեսուր չունիմ, ուսաի՞ վախեմ։ Ճիվերս Թոնիրը կախեմ։

Կերած ապուրը, հագած լաթը։

Կերած փսխած կը լմանի։

Կերածդ աչքէդ քթէդ գայ կամ բռնէ։

Կեր աղբարիկ կեր, տասնը հինգ աւուր Թաժա հաց է։

Կ'երթայ հուրը, կը մնայ մուրը։

Կեցիր կարեմ կատուիս տամ։ (մէկին աղիքները վար է եկեր, ըսեր է մէկը)։

Կեցիր ոտքիս տեղ ընեմ, տես քու գլխուդ ինչ կ'ընեմ։

Կ'եփիս կ'եփիս, գարձեալ հում ես։

Կէնճ կարըճին մէջքին վրան գօտին կը քաշեն։

Կը բռնուի ոտքին սահածը, չի բռնուիր լեզուին սահածը։

Կերանք կշտացանք բանուորով աշկերտով։

Կ'ըլլայ ամա, զուան կ'ըլլայ։

Կը խնդայ հարան ու փեսայն, երկու խենդ դրացնուԹեան։

Կը կարէ պուտուկ կ'ընէ, կը ջալէ՝ տիւտիւկ կ'ընէ։

Կըրէն կամ կիրիրան (հողի ճճի մը) իր հոտից փախսի. (կը փախչի՞)։

Կը տաճկըցընեն՝ ու մուրթատ կը կանչեցընեն։

Կիխչուի երկու գինա (մասթել,) ընտոր Դուռնայի մէջ խզգուող մարդը. (Պ)։

Կիսողն (օրթախութիւն) էշը գայլը կերիր է։

Կիրակոսին գակցու է (գտակցու). գերճակին գողցած կտորը։

Կիրակուայ դանակը՝ երկուշաբթի ալ պէտքը կը գայ. (Ե։)

Կիրիրի (հողի ճճի մը) սերման բերող եղար։

Կլորող քարը հիման քար չըլլար։

Կծկէ (փախիր)։

Կծողին (խածնողին) ետեւը կանենի (կայնէ), ապքայի (թէքմէ) տուողին առջեւը. (Ե)։

Կնիկ արմատին լսողն ալ, մտիկ ընողն ալ՝ կնիկ ա. (Ե)։

Կնիկ արմատ ու ձուն մէկ օրինակի են. հենց ձեռն ես տալի թէ չէ, էն սահաթը փլվում են։

Կնիկ արմատի մազն՝ երկէն կ'ելլի, խելքը կարճ։

Կնիկ մարդուն՝ քառասուն խօսքին մէկը բռնէ։

Կնիկ չունիս, հոգի չունիս։

Կնկան լաւը օրոցքին տակը կ'իմացուի։

Կոյր կենդանին առնողն ալ կոյր պէտք է ըլլայ։

Կոյրը կուրին ճըռթ է ըսեր։

Կոյրը չէմ տեսնում, հակում է։

Կոյրին ինչ հոգն է թէ ճրագը թանկ է։

Կոյրը՝ չիլին մահանայ է գնում։

Կոյրին մէկ ման հլուն տաս նէ, մէկ քանի հատը կ'անցնէ։

Կոյր կոյր, մատա աչքդ։

Կոյրը մեռեր է, խոշոր աչքերը գովեր են։

Կոյրին ով որ անաղ ընէ, ինքը պէտք է տեսօք աչք ունենայ։

Կոյրին առջին ձին (ձիւն) են դրեր, ըսեր է. աս ինչ սև է։

Կոյրն ինչպէս կը նայի Աստուծոյ, Աստուած ալ այնպէս կուրին։

Կոյր ոնամ ասեմ. երկու հեղ նոյն հորն իյնողը կոյր է. երկու անգամ խօսք լսող չընողը խուլ է։

Կոչտը նստել ա, քարի գլուխը լալի։ (Ե)։

Կովը թարաքը մի հաներ։

Կովը հորթին, հորթը կովին. գլուխը նախրապրածին ցաւեցաւ։

Կովը մեռաւ, խապը վերցաւ. կամ կաթը հատաւ։

Կովը որչափ հորթը ատէ, երկու ոտքով փորին չէլլար։

Կովը տես, ու կաթը բընտռէ։

Կովի աղբը ստաղ (ծեփ) չի բռնում։

Կոտրած փարչը՝ չի կոտրիր։

Կորեկը բեմ չէնի. (անազգին յաւագուրթիւն չէլանէ)։

Կորկոտ ապուրի պէս կ'էփիս։

Կ'ուզես իմ ձեռքովա՝ կրակէն շագանակը (քէստանէն) հանես ու գոնն ուտես։

Կ'ուզես մամ եղիր վառէ առջին, քեզի մուրթ կը տեսնէ։

Կ'ուզես որ Աստուած երկինքէն թափէ ուտես։

Կ'ուզէս որ հանգիստ թողուս ուրիշին, մունջ եղիր։

Կուզես որ հանգիստ ըլլաս՝ խուլ եղիր։

Կ'ուզես կամ կը սպասես որ սէլը գայ մալիզ բերէ։

Կ'ուզէ որ ինձմէ մազ մ'ալ ըլլայ՝ քաշէ։

Կուզ կուզն վրայ դրինք, նայինք ինչ կ'ըլլայ։

Կուզ մը հաներ կուզին վրայ։

Կուզս շալկեր եմ կը տքամ, էս իս ձգեր՝ աշխարք հոգամ։

Կուզը գերեզման չմտած չի շոկըւիր։

Կուժին առջևը շատ փարչեր են կոտրեր։

Կուժ քեզ ասեմ, կուլայ (գինի ըմպելու տման) դու լսի. (Ե)։

Կուկուն բերաւ, ճիճուն կերաւ. (Ե)։

Կուկուն ածեց, փուփուն հրեց։

Կունան մեծ սարին հրամայեր է որ իրեն գայ. չէ եկեր, ինքն է գնացեր սարին։

Կուշտն անօթուն՝ բէտ կամ մանր կի բրդէ։

Կուշտ նստանք, անօթի կայնանք։

Կուշտ փորով մարդուն՝ հարկելը դժար է։

Կուռը դէմ է տուեր կեցեր։

Կուտը կերաւ, սարը ելաւ. կուտը կերաւ, երկինք ելաւ։

Կուտը մեր տունն է ուտում, հաւկիթը գոռներում է ածում։

Կուտը պոլոզ (պակաս) է։

Կուտ ունիս, քո հաւի առաջն ածիր (թափել, լեցընել), դան կամ տան (աղալու բան) ունիս, քոյ ջաղացքը տար։

Կուրին՝ զուրի (փուճ տեղը) կասեն թէ լոյս է, ղի ամէնը չի տեսնուր. (Պ)։

Կուրծքին զարկեր են, ըսեր է, վայ կռնակս։
Կուրօրէն՝ Աստուծոյ ձամբէն։
Կպճակ (անիւ) է աշխարհս. (Պ)։
Կռեդ նստեր (քովդ), քեարի տարտ կու լայ. (Ե)։
Կռիւնալ կռիւ է, կէս կռիւն ալ կռիւ է։
Կռկռան հաւը, ածան կ'ըլլայ։
Կռնակէս ականջս չիտակ լուր մը չկայ։
Կռնակը ծեծելու առնելու է։
Կռնակը ծեծէ, բոլոր պաշարը կեր։
Կռնակիդ մանն է (մանածն) պակաս, գլխուդ սիւլէյմանը։
Կռնակ կռնակի տան երկու աղբար, սարեր կը շրջեն։
Կռուի մէջ՝ չամիչ կաղին չեն բաժներ։
Կռուին վերջը զղջում է և ափսոսանք։
Կռուի օրը՝ կռիւ պէտք է, հաշտութեան օրը՝ հաշտութիւն։
Կտրած հացը չի սաղնար։
Կտրած մատի դէղ ես հա՞։
Կտրել չկարցած ձեռքս, պագնեմ ճակատիս կը դնեմ։
Կտրէ լեզուդ, որ չկտրեն զգլուխդ։
Կտրիճին թևը բռնեցէք քաշեցէք։
Կտրիճը ձիէն ինայ, վազէ նորէն կը հեծնայ։
Կրակ առնելո՞ւ եկաք, ինչ։
Կրակը՝ ընկած տեղը կ'երէ կամ կ'երի։
Կրակի առջին չախմախի չեն տալ. (կրակին առջևը չախմախ չեն զարներ. Ե)։
Կրակի վրայ՝ սառ ջուր լեցունել։
Կրակ կը փսխէ։

Կրօնաւորութիւնը երկաթէ լէպլէպի է, ամէն մարդու բանը չէ։

Կրնայիր նէ պատին էտին կ'անցնէիր։

Կրող՝ գերեզմանին քոմն է։

Կօղնու (խոզ) գլուխը, խալի չին կենալ չի։

Կօթլօզ հաւին պոչ կը գնէ։

ԿօՃկէ։

Կօշիկ մաշիկ կարկատողն ալ՝ կօշկակարին նման է։

Կօշիկիս մէջ ալ ջուրը չիմ սիրի, այլ գինի։ (Պ)։

Կօշիկով մտար։

Կօշիկոմ պառկեցու է։

Կօշկակարին կօշիկը ծակ կ'ըլլայ։

Հաբեղան զհավան մանասթրին կի քաշէ։ (Պ)։

Հագուեր սգուեր ես, գիտես որ մարդ ես։ Մէյ-մըն ալ հայլին նայէ, աշխարհքիս խաղք ես։

Հազար գիտնաս՝ մէկ գիտունի բան հարցուր։ գուցէ քու հազարէդ մէկն ալ անոր քով է։

Հազար եղուկ՝ մէկ ըստակ։

Հազար անգամ մեղր ասա, միթէ բերանդ կ'անուշնայ։

Հազարը կ'անէ պազարը։

Հազար թուման պարտքս ըլլի, մարդամիջի մարդըս ըլլի։ (Ե)։

Հազար լսէ, մէկ խօսէ, տես գիմացինդ ինչ կ'ասէ, և միտքն ինչ է։

Հազար խրատ մէկ ատակ, և մէկ ատակ՝ հազար վատակ։

Հազար խօսողը՝ կ'ասեն մեռեալ է։

Հազար մաղիս հաց է կերեր։

Հազար վախ՝ մէկ ստակ։

Հազար տղի ատամէր ըլլէլ։ (Ե)։

Հալալը մեղ ալ գառնայ, չի կոտրիր։ Հարամը գերան ալ գառնայ՝ կը կոտրի։

Հալալ կաթ ուտող է։

Հալալ մալը՝ գայլը չի տանիր։

Հալէցի ականջդ լցի։

ՀաճուԹեան կ'երԹաս, ինձի մէկ ղաւալ բէր։— ինչո՞ւ չէ որդի, ա՛ռ փողս ինձ ղաւալ բէր։— որդի ղաւալը դու չալէցիր։

Համբերէ՝ որ համբերէ։

Համբերէ որ, մոմանքէզի բան բերէ։

ՀամբերուԹիւնը կեանք է։

ՀամբերուԹեան ծառը դառն է, բայց պտուղը մեղր ու շաքար։

Համեստը՝ գրաստին բեռ չէ, Թեր՝ Թռչունին, գմակը՝ ոչխարին, եղջիւրը՝ եզան։

Համը բերանդ մնաց հայ։

Համչէնու լուանկային պէս՝ ուզածին պէս կը ծագէ։

Համեռս համեռս, պուտուկը կէս։

Համրած ոչխարը, գայլը չի ուտեր։

Համ փողիցն ինկաւ, համ տեղիցը։ (Թէ փողէն եղաւ, Թէ տեղէն)։

Հայ հայն է գնացեր, վայ վայն է մնացեր։

Հայը հային վրայ որ բամբասէ, դու կէսը հաւատա։ Հայը հային որ գովէ, մէկ կէս ալ դու աւելցուր։

Հայը յետ կը գնէ։ (Հայը ամէնուն կը հեռացնէ)։

Հայը ձի հեծնայ՝ Աստուած կը մոռնայ։ Ձիէն իջնայ՝ ձին կը մոռնայ։

Հայուն խելքը գլխուն մն ա, Վրացուն խելքը աչքունը. (Ե):

Հայն է Թուրքին սատանայն:

Հայ (Թէ) ադամորդու սիրտը, հայ (Թէ) ծովին անդունդը, երկուան ալ մեզի համար մութ են. (Ե):

Հայուն եռքի խելքը՝ իմն ըլլար:

Հայը Աբրահամու պէրէքէթը մէջն է:

Հայրենեաց քարինքը՝ աւելի տաք են քան Բաբելոնի փուռերը:

Հայրմերս բերանս փսորեցաւ:

Հանգիստ ջուրը, հանգարտ գետը կի փորէ զքէնարները. (Պ):

Հանգստութեան փափաքն որ անցնի, կ'ըսեն գէշ նշան է:

Հանաքը՝ չանաք կը դառնայ:

Հաջան շունը խածան չըլլար:

Հաջացող Թազին՝ հորս (որս) չի կարող անել. հորս անողը՝ տաղ կ'անի, տակնահան՝ իր բանը կը շինի. (Ե):

Հաջիլ չգիտցող շունը, վրան գալ կը բերէ:

Հապը կըլլեցինք, (կամ կուլ տուինք):

Հասակով գաճաճէն հեռու կեցիր, վասն զի Աստուած գլխուն է զարկեր.

Հասկացող որդին՝ հօր աջու աչքն է. (Ե):

Հասկըցայ նէ, փարա մը տամ:

Հաստ ու բարակ մէկ գին ա, վայ դայ բարակ մանողին. (Ե):

Հաստ ու կարճ՝ զարիպի խարճ:

Հարամին՝ իր շուաքիցը (շուքէն) էլ կը վախնայ:

Հարամ մալ, շատ չիմնար:

Հարբածին խելօք խօսքն ալ օդը կը ցնդի։

Հարիր (հարիւր) տարի կ'ըլլի որ մեռիլ ա, էլի նրան ողորմին, հա՛ կայ, հա՛ կայ։

Հարեւանիս կը սիրեմ, որ ձուիս աղ անի։

Հարիւր ա՛լ շատ՝ խելքով, քանց ուժով։ (Պ)։

Հարիւր կնիկ՝ մօտ լինի, ցաւը ծնընդականին է։

Հարիւր հակ (տէնկ) բամբակ կայ, հարիւր մէկ ծակ կայ։ ո՞ր մէկը փակենք։

Հարիւր էրիկ մարդ՝ մէկ տուն մը քիչ է։ Երկու կնիկ մարդ՝ մէկ տուն մը շատ է։

Հարիւր միրուքէն մէկ մէկ մազ որ առնես կամ քաշես, մի մօրուք կը դառնայ։ (Ե)։

Հարիւր զլօթի ձին ալ փոթէքնիդ (սիքուրթայ) կ'ըլլայ։ (Պ)։

Հարկ ըլլայ՝ հօրս ըլլայ, հարսնիք ըլլայ՝ իմն ըլլայ։

Հարկն լուծանէ զօրէնս։

Հարկը պահանջած ժամանակ, մօրուքը գլխին մատաղ։

Հարկս հարկաւորաց, պատիւս արժանաւորաց։

Հարուստը՝ աղքատն է։

Հարուստը բարձր տարէն կառքն ու կայքը կ'անցընէ։ Էքաւորը դուրան դաշտը Ճամբան կը կորսընէ։

Հարուստէն ու տաքէն միասս չիգար։

Հարուստը մեռնի՝ գեղն երերայ, (կամ աշխարհք թնդայ)։ աղքատը մեռնի՝ մարդ չիմանայ։

Հարուստը օձ է կերեր, ըսեր են՝ գեղ է։ աղքատը կերեր է, ըսեր են՝ քաղցած է։

Հարուստին աչքը՝ վարագուրով կ'ըլլայ։

Հարսանիքն ու մահէնիքն՝ (մահուան հանդէս) աղբէր են։ (Ե)։

Հարսերնիս շատ աղուոր էր, Ճողայի խոց հանեց սկ աղուորցաւ. (Ղ):

Հարսը ինծի, հարսնիքը հօրս:

Հարսը իլլին է նատել՝ քաւորի գռնիցը չէ անցկացել:

Հարսը հարսին գիտէ, կեսուրն երկուսին:

Հարսը՝ տէրը կ'ընէ համաւոր, (պարկեշտ), խաչը՝ տէրը կ'ընէ զօրաւոր, շունը՝ տէրը կ'ընէ հաջան:

Հարսիս՝ լուս ու արև. աղջկանս՝ մուրթ ու խաւար:

Հարսնէտունը չիտէ, ամման կը կրէ:

Հարսնիք գնամ, ինչ տուն տանիմ. մաղտաք կուլ տամ կամ ծամեմ, ինչ կուլ տանիմ:

Հարսնիքը աղբօրս լինի, մահնիք (հոգեհաց) պապինս. (Ե):

Հարսնիքի կանչէն կուշտ գնա՛, որ քաղցած չըդառնաս:

Հարսնիքէն եռքը զուռնան ինչ բանի կու գայ:

Հարսնիքին տէրը՝ ինքը խաղք ընէ:

Հարսնիքին տունը խաղք ընող:

Հարս չտեսած՝ հարսնքուր կը բնռռէ:

Հարսի հարստութեան չէս կարող հասնիլ, դրացի եղիր նրան:

Հարստութիւնը՝ գէշին կը սիրուն ացնի. լալին՝ լէզու կը տայ. չալախին՝ (չոլախին) ջուխտ ոտք. քոռին ալ երկու լուս աչք:

Հարցընելով՝ Պաղտատ կ'երթըցուի:

Հարցո՛ւր չգիտցածդ, որ չսխալիս ու ափսոսաս:

Հարցուցեր են Խիկարին. Արջը հաւկթի կածէ. — չէ. բայց մէկ այլանդակ կենդանի է, ածէ նէ կ'ածէ:

Հացը դրած, բանն անիծած։
Հացը դրած, պանիրը վրան։
Հացը ծնկին՝ կ'ուրանայ (կամ կը մոռնայ)։
Հացը կերբեր եմ. չէմ կարնար ուրանալ։
Հացը համով ըլլի, թէ չէ՝ եփողը չֆուտ ա թէ քուրտ, հաճաթս չի. (Ե)։
Հացը հացագործին կամ հացարարին տուր. մէկ ալ քովէդ վրայ տուր։
Հաց է գտեր ու ցամաք կը խոռէ։
Հացը՝ հօրմէն, տղան՝ մօրմէն, ծեծէ՛նէ՝ լայ, կանչէ՛նէ՝ գայ։
Հացը շատ բան կարող է չինել։
Հացի կտրածը կամ կապը՝ թուրը չիկտրեր։
Հաց կայ՝ բերան չկայ։
Հացին մենծը՝ խմորին շատուութենէն կ'ըլլայ։
Հացին մոտիկ, բանէն հեռու հա՞։
Հաց մը ուտելու է, հաց մըն ալ՝ ողորմութիւն տալու է։
Հացն Աստուծոյ ա, ես էլ հեռը. ով հանի՝ թող ուտի. (Ե)։
Հացն ու ապուրը ապրանք են. մնացածները՝ պարծանք են։
Հաց ու պանիր, կեր ու բանիր. (բանէ)։
Հացով բան է. (աղէկ բան է)։
Հաց տուէք՝ ուտէ, ջուր տուէք՝ խմէ, ծածկեցէք որ քնի, պահեցէք որ հոգին չելլէ։
Հավայրին հաջող շունը՝ փորը քամիով կը լեցընէ։
Հավանս էլ ունիս։
Հաւատքը սրտանց պէտք է. վրան քսածը բանի չի գար։
Հաւն էլ իր ճուտը (վառեակ) ուրուրին չի տալիս. (Ե)։

Հաւն իր ձագը կորցնելիս՝ կեանքը հեռը տալիս ա. (Ե):

Հաւը կ'ածէ, ՀՀուն կամ ուրուրը կ'ուտէ:

Հաւը զաղին նայէր հաւկիթ ածեր է, ՀՀաթեր է:

Հաւը ջուր կը խմէ, Աստուծոյ կը նայի:

Հաւը տուիր. (յաղթուեցար):

Հաւին ձագերը որ սագ ըլլան, ջուր իյնան լուացուելու նէ՝ վայ կու տայ գլխուն ու կը կանչուրտուէ:

Հաւը՝ տունը կենայ կուտն ուտէ:

Հաւի կռկռոցէն իմացիր որ փորի ցաւ ունի:

Հաւի թռչանոցը, տէյոր գաղանոցը:

Հաւի պէս կտուցը աղբէն անպակաս է:

Հաւկիթ մը ածեց ամա, ինչ է չիկտեմ:

Հաւկթին մէջ՝ մաղ կը բնտռէ:

Հաւկիթ մը կլորեց գնաց:

Հաւնիս չի հաւնիս, ես ինչ որ եմ այն եմ:

Հաւքի թևով չի կարնար հանիլ:

Հաւքին թևովը հասուր, կամ հասցընեա:

Հեղ ձիուն կիցը՝ սասաիկ կ'ըլլայ:

Հեղեղի բերածը՝ էլի հեղեղը կը տանի. (Ե):

Հեշտ է քարին խոտ բուսցնել, քան քեզի խօսք հասկըցնել:

Հեշտ է զգաթիցը (Կատարինէ) պալ տանելու՝ թէ որ ինքն ալ քէֆ ունի՝ անոր մօտնա. (Պ):

Հեռաւոր սուրբը զօրաւոր կ'ըլլայ:

Հեռի ըլլայ. (Աստուած պահէ):

Հեռի տեղի հացը մեծ կը թուի:

Հեռուէն ջուրին ձայնը անուշ կու գայ:

Հեռուէն տավուլ զուրնային ձայնը՝ անուշ կու գայ:

Հեռուն դէմ խօսիլ մեծին՝ յիմար խօսք է անմեղ տղին։

Հետ հաւերուն կըռթ կ'ընէ։

Հետևակը ձիաւորէն շուտ կ'երթայ ըսէն՝ չաւտաս։

Հերուայ ածդ շնորհաւոր։

Հերու տասը հազար ռուպլի չունենալուս, աստարի՝ երկու հազար ռուպլի միաս ունիմ։

Հէլալ կաթ չէ ծծած։

Հէլէ գուն ալ չորս ոտքդ մէկ բերիր՝ ու խօսեցար կամ ըրիր։

Հէլպէթ քամին կը պարտի, քեզ մեր գեհը (գին) կը գցի՝ կը տեսնես. (Ե)։

Հէմ կովէն եղանք, հէմ չուանէն։

Հէմ կրակը կուտայ, հեմ եանղըն վար կը կանչէ։

Հէնքի մէջը շուն ինկաւ. (բանը խառնուեցաւ)։

Հէնց արա՛ որ կարմըճի տակի ջուրը չի փախցընես։

Հէնց գիտենաս որ գեղարքունի ձուկն են ծախելիս։

Հէրերը ժուռ (ազոխ) կերան, որդկերանց ատամն առաւ. (Ե)։

Հէրը որդին չի ճանչնում, որդին հօրը, ախպէրն աղբօրը. լաւ ա որ քարը քարի 'ի կանգնած մնում ա։

Հէրը որդին ուրացել էր. (Ե)։

Հիմա կածդ կը թռցնեմ։

Հին բարեկամը թշնամի չի լինիլ։

Հինան՝ հարսնեց պէտք է։

Հին գլխուն նոր գոտակ չեն գներ։

Հինգ կ'ըսէ, տասս կը խնդայ։

Հին դարմանը քամուն չեն տար, կամ կու տայ. (Ե):

Հին երգերը չեն երներ, չէ նէ հոտը կ'ելլէ:

Հինը՝ նորը չի տեսնար:

Հին նոր, պանիրի չոր:

Հի որ մէկ (ամէն) փայտէն չիլլայ ածիլելու պրինչ (կտրոց, ածելի. Պ):

Հին քաղաքին նոր օրէնք չ'ըլլար:

Հիւանդը որ գնալիս ըլլի (մեռնելու,) մատաղն ալ չի օգնիլ. (Ե):

Հիւանդը որ ողջանալու լինի՝ բժիշկը դէմ կգայ:

Հիւանդին գէշն ան է որ, անկողինը կը թողու՝ ու բարձին (կը պառկի:)

Հիւանդին տէրն է հիւանդ:

Հիւանդի՝ քահանայի երթալու մարդ ես էա:

Հիւնէրսիզ մարդուն լեզուն՝ երկար կ'ըլլայ:

Հիւրը հիւրին չէ ուզում, տանուտէրը ոչ մէկին:

Հիւրն ալ համով հոտով պիտի ըլլայ:

Հիւրն եկաւ հիւրը գնաց, աւէլն աւլողին աչքը, տեղը դատարկ չմնաց:

Հմէն (ամէն) բան աղով, աղն էլ համով:

Հնոստան ընկուզ կոտրեն, մէջէն կ'ելլէ:

Հոգի էս էլի՛:

Հոգիդ կը սիրես՝ մ'ըներ:

Հոգի հաւատք բեր, որ դիմանայ:

Հոգին բուռն է հաւաքել:

Հոգիս արքայութիւն կ'ուզէ, բայց մեղքերս չեն թողուր:

Հոգիս բերանս առած, կ'աշխատիմ:

Հոգուն տունը կրակ կը ձգէ:

Հովիւին ընծան կ'ըլլայ կաթ ու պանիր:

Հովուին շանը մահն որ գայ, հովուին ոտքը կը խածնէ։

Հող ու մոխիր կեր, տմարդիէն հաց մի մուրար. օր կու գայ որ Ճակտիդ կը զարնէ, ծանր կու գայ։

Հռոմն ու հայը կռուին նէ, զատին չՈ՞ր ուտէ։

Հորթը որ կովէն առաջ անցնի, գալը կ'ուտէ։

Հորթիս՝ ահը տալու եմ գնում. (Ե)։

Հորթ ուտող Ճգնաւոր։

Հոր փորողը, ինքը կ'իյնի։

Հում կաթ կերեր ենք, կրնայ ըլլալ սխալինք։

Հունար՝ փուշ կուլ տալը չի (չէ,) հունար մարսելն ա. (Ե)։

Հուր փորձէ զոսկի, և ոսկի զկին։

Հրաւիրած տեղը սիրով գնա. չհրաւիրած տեղը չերթաս, նեղ կ'ըլլայ տեղդ։

Հպարտին գուրսը ծեծեր են, տունը բան չէ ըսիր։

Հպարտին գուրսը ծեծեր են, եկեր է ներս. — ըսեր են. ի՞նչու երեսդ սևցեր է. — ըսեր է. շոգ էր արևն էրեց։

Հպարտին Թշնամին Աստուած է։

Հրամեցէք մեր տիզն ու տոտոզը, Աստուած ձեզ տիզէ ու տոտոզէ։

Հրամեցէք չ'եղողին, դրանը քովը հատիր է (հաղբր է) ամոռը. (Պ)։

Հոտէ բաժնուած ոչխարը, գալը կ'ուտէ։

Հօ (խօ) բերնիցդ քրէֆ (քիրա) չեն ուզում։ (Ե)։

Հօ աղջիկ չես որ խասդ ու վարաղդ գնայ. (Ե)։

Հօրը արհեստը, որդւոյն Ժառանգութիւն է։

Հօրը գինը վրան է գրեր։

Հօր կամ մօրը քիթէն է ընկեր։

Հօ շուշայ չէս որ կոտրուէիր, մամ չէս որ հալ-
չիս. (Ե)։

Հօրորդոյն ինչ պէտք է. Թեւերդ վերցուր Թէխ-
մախ խաղա։

Հօր ու մօր արինը (արիւնը) քաղցր ա, վաթանի
հողն ու ջուրը անոշ (անուշ)։

Հօրորդու զաւակ է։

Հօրս անունը ինձ ծախում է։

Զագը ձագի հետ, սագը սագի հետ, հաւը հաւի
հետ, հայը հայի հետ։

Զայն բաղմաց, ձայն Աստուծոյ.

Զայնը տակը, քարը վրէն։

Զայնս հասած տեղը պիտի պատմեմ։

Զաւար ձաւար, բերնին եկածը դուրս կու
ասայ։

Զեռաց տակէն բան կը տեսնայ։

Զեռն զձեռը կը լուայ, երկուքն երես կը լուան։

Զեռքդ ուղուր էր։

Զեռքդ քարին ծակը կը խօթես, զգոյշ կեցիր
օձու խածնելէն։

Զեռքդ չհասած տեղը մի երկընցըներ։

Զեռքէդ եկած բանը ուրիշի մի թողուր։

Զեռքէդ եկածը՝ էտիդ մի ձգեր։

Զեռքէն ալ կու գայ, լեզուէն ալ։

Զեռքէս ինչ կու գայ։

Զեռքը բացողը, պատրաստ պիտի ըլլայ՝ մեր-
ժումն ալ լսելու։

Զեռքը գործումն է, աչքը խաղումը։

Զեռքը հոգուն գնող վկայող կայ մի։

Զեռքը մուրն է թաթխեր, ձերմակ պատերուն կը զարնէ։

Զեռքը՝ տաքէն պաղն չի խօթեր։ (բան չըներ)։

Զեռքիդ հանգուցը, ակռայիդ տակը մի ձգեր։

Զեռքովդ տուածը քուկդ է, մահուընէդ վերջը ուրիշինն է, քուկդ չէ։

Զեռքիցը եկաւ, չարաւ։

Զեռքովդ տուած ողորմութիւնը՝ անդին եաւէդ կու գայ։

Զեռք ձեռքի դրած, պարապ կեցեր է։

Զեռքով շախան, իշու շախա է։ (Պ)։

Զեր ոտը շատ դիտի, քանց մեր գլուխը։ (Ե)։

Զէթը չվազած՝ քարն է դէմ տալու։

Զիգձիգը (հաւձագը) հաւկիթին մէջ, տղան օրոցքին մէջ աղէկ կ'երևնայ։

Զիդ ծառին նախ լաւ կապէ, վերջը Աստուծոյ յանձնէ։

Զիուն բնութիւնը չսորված եաւէն մի երթար։

Զիէն ինչեր՝ էշն է հեծեր։

Զիէն ձիաւորը կ'ինչեցնէ։

Զին՝ բհիրը (բիրը կամ ցիցը) պոկեց (փրցուց), առաջ իրեն գպաւ։

Զին էլ նրան է սազում (կը վայլէ), սիլահն էլ։

Զին ու ջորին կռուեր են, էշը մէջ տեղ ճզմեր են։

Զին իմն է ինչիր, տուն իմն է եղիր, վարձս վըճար ու գնա կորիր։

Զին կը խաղայ՝ մարդին են գովում. սուրը կը կտրէ՝ բազուկն են գովում։

Զին՝ վարպետ ձիաւորը կը ճանչնայ։

Զիուն տեղը էշ կապեցինք։

Զիու ոտները որ ջրումը ընի, շուարցնել չի ուզիլ։

Զի չկայ, զմռուր կի հաղրէ։ (Պ)։

Զկան հարցուցեր էն. Ծովէն ինչ խապար։ — ըսեր է. Ասելիք շատ ունիմ, բերանս ջրով լիքն է։

Զմեռը բաղնէպան ըլլաս, ամառը այգեպան։

Զմեռը կատու ըլլաս, ամառը շուն։

Զմեռը համամ՝ի դառնաս, ամառը բաղմանՃի (գիշերապահ)։

Զմեռուան վարդը՝ կրակն է։ բայց չըհոտուըտաս՝ քիթդ կ'էրէ։

Զոզ մը կաշի հանէ։ (ծեծէ)։

Զուազէզին սիրուն (խաթրին), թավային կոթն ալ լզելու է, կամ պագնելու է, կամ թավին կոթը կը լպտաեն (լզեն)։

Զուազէզ եփէինք, հաւկիթ չունինք։ տապակը ծակ, եղ չկայ։

Զուէն ելէ, հոռՃին (կՃեպ) չհաւնէ։ (Վ)։

Զուրթը աղբն ընկաւ։

Զուագողը՝ ձիագող կ'ըլլայ։

Զուի գողն ու ձիու գողը մին ա։ (Ե։)

Զուկը բռնողը՝ կը թրջուի։

Զուկը՝ իր գլխէն կը հոտի։

Զուկը ծովը բազար չըլլար։

Զուկն 'ի ծովին՝ տապակը դնել 'ի կրակին։ (գեռ ձուկը ծովը եղած ատեն, տապակը կրակի վրան չեն դներ։ Զ)։

Զուկը ինչ վախըթ բռնես, թաղա ա։

Զուկն ու միսը մէկ պղնՃումը չի եփիր։

Զուկը ջուրը ուզածը։ (Պ)։

Զուկը՝ ջրին մէջ կը մեծնայ։
Զուկը ձկանը ասեց. Դէնը գնա, (անդին գնա). – ասեց. Զո՞ր գնամ, երկուսս ալ մէկ թաւուման ենք։
Զուն է եկեր, որ ձեռք ու ոտք մնի, կամ ոտս մզմզտայ։

Ղազարը գիտէ իրեն բազարը։
Ղայիմ մարդի աղն՝ աւելի հետ կ'երթայ. (Ե)։
Ղարդանները սև հագան։
Ղաւուխդ էրէցաւ, կամ բռնկեր է։
Ղաւուն չէր որ հոտ անէի։
Ղիյամաթու սառչում ենք (կը սառինք), սա հէնց իր զուռնէն է փչում. (Ե)։
Ղուշը երկնքէցը վար կը բերէ. (Ե)։
Ղուշը իր բունը սիրում ա. (Ե)։
Ղնախը՝ տան տիրոջ էշն ա. (Ե)։
Ղնախան Աստուծուն ա. (Ե)։

Ճամբէց դուրս եկողի, աչքը դուրս կը գայ։
Ճամբէն որ ուղիղ ըլնի՝ ինչքան էլ երկար էլ լինի, գնա. դուս Ճամբէց դուրս մի գնալ. (Ե)։
Ճանճ եղիր՝ պատը կպիր։
Ճանճը՝ առիւծին ականջը կը մանայ կը յաղթէ։
Ճանճն ինչ է որ, ճենճն ինչ ըլլայ։
Ճանճը ոչ ինչ է, բայց սիրտ է պղտորում։
Ճաչն ուտելից յետոյ, դու արի ձեռին ջուր ածա։
Ճար ունիս, ճարդ տես։
Ճարտար գողը՝ տանը տիրոջը գող կը բռնէ։
Ճերմակ շունը բամբակ ծախողին ինչաս է։

Ձերմակ պատին մուր չէն քսեր. ('ի հարկէ մէկ պակասութիւն մը ունիս):

Ձերմակ ստակը՝ սև աւուր համար է, կամ սև օրին պէտք կու գայ:

Ձիոչը ծուռ, պատիկը ծուռ, որորոցինը կասի ես անց զըմէնն ծուռ. (Ծերը խենդ, պզտիկը խենթ. օրոցքինը կ'ըսէ ես քան զամէնն խենթ. Վ.):

Ձնձղուկը թռած տեղը ըսեր է. լիտր մը եղա գնաց. — կ'ըսեն. դուն մէկ լիտր չկաս. — կ'ըսէ. իմ լտրովս չափէ:

Ձնձղուկ թռչելու վրայ՝ պոզնտարն հերիք մահանայ. (Ե):

Ձնձղուկն ալ կ'ապրի, վայ ապրածին. ոտքերուն գիրուցը տես՝ կ'իմանաս:

Ձշմարտասէր և բարեսէր մարդուն ականջը՝ երկու դուռ ունի. առջի դռնէն մտած լուրը կամ խօսքը՝ երկրորդէն ներս չի առներ, ինչուան աղէկ մը չի քննէ:

Ձշմարտութիւնն ու լաւ խապարն ուշ կը հասնին. իսկ ստութիւն ու սև խապարը շուտ կը հասնին:

Ձուտը՝ (վառեակ) ձուու մը մանչուր կ'ըլլի. մանուկն՝ որորոցումը:

Ձպուռա աչքը կը պագնեմ որ վերը հացիս (հացիս վրայ) կարագ քսես. (Վ.):

Ձրագի առջին չախմախ չէն տար. (Ե):

Ձրագէդ ձրագ վառելով՝ բան չի պակսիր:

Մաղէ խալըսեցանք:

Մաղին մէջը՝ մանանեխ կը բնտռէ:

Մազումը եթէ զօրութիւն լինի՝ այծը մարգա-
րէ կը լինի։
Մաթոս տղային պէս պորտով կեցնի. (Պ)։
Մալը՝ մոքին, մուլքը այգին։
Մալը տիրոջը չի լմանի. կ'ըսեն գողծուն է։
Մալին՝ տէր պէտք է, որդուն՝ հէր։
Մալթայէն եսիր ես բերեր, ինչ։
Մախաթ եմ, եախատ եմ։
Մախն (պտտրասատ) ընկնելով հարանիսի. (Պ)։
Մածուն բերան մարդ է։
Մածուն ա թան չի, ամէն մարդու բան չի. (Ե)։
Մածուն ու թան կ'անէ։
Մածունով ապտէսթ կ'առնուի, բայց փիս կ'ըլ-
լայ։
Մահէն անդին գէղ կայ։
Մահը՝ մահանայով կու գայ. (Պ)։
Մահը մէկ օր, լացը մէկ օր։
Մահը չի հոգար՝ ընկուղէ ջախը կը բնտռէ։
Մահը տեսածին պէս, ջերմին գոհ կ'ըլլայ։
Մահ տայ, բաժանմունք չտայ։
Մահ կայ, բաժանմունք չկայ։
Մաղը ծակ է։
Մաղով ջուր կը կրէ։
Մամուդ էօրէքէն է։
Մամուկ մամուկ ոնը կ'երթաս. Երուսաղէմ
ժամ կերթաս։
Մամուկ մամուկ, սիրաս վրադ տաք չէ։
Մանդղուորին մանդաղը մի դողցեր եմ։
Մանեմ մանեմ, աչքդ հանեմ։
Մանէն մանած է, պատէն կախած է։
Մանկութեան գատումը, ծերութեան պաշարն է։

Մանկուց դատումը ('ի մանկութենէ վատաղը) ծերուց դաւազան ա. (Ե):

Մաշակարի մաշիկը (կօշկակարին կօշիկը) ծակ կ'ըլլի. (Ե):

Մանկութեան ուսումը քարի վրայ փորուածք է, ծերութեան ուսմունքը սառի վրայ գրուածք է:

Մանչ բերող աղջիկը քեզի չէն ի տար:

Մասման աղբուրն եկաւ պղտոր. — նա տիւ ինոր ասա կաղ, նա էն քի հօր. (Վ):

Մատաղատունը մատաղ չկայ, առէր դուշը կը վաղէ:

Մատաղի մսով շուն չի գիրնար:

Մատին վրայ կը խաղցընէ:

Մատին փաթթոց է ըրեր:

Մատս աչքդ:

Մատս հոնա էի ըրեր, ինչ գիտէի:

Մատս մէջն է. (այդ գործին՝ բանին):

Մատ տուեց:

Մարագը (յարդանոց, խոտանոց) հորթը կը հատացնի, անտուկը՝ երեխէն. (Ե):

Մարած Ճրագը, կէս օրն ալ՝ կէս գիշերն ալ սէրբես է:

Մարդամիջի մարդս ըլլի, հաղար թուման պարտքը ըլլի. (Ե):

Մարը հաց, տղան լաց:

Մարդ ինչ կ'անի, գլխին կ'անի:

Մարդ ինչ անի, էն իր առաջը կը գայ:

Մարդս մարդով է:

Մարդ իր աչքին քէօր կ'ուզի. (Ե):

Մարդը չէր մարդանման, խոսքն էր մարդասպան:

Մարդ կայ հազար կ'ապրէ, մարդ կայ մէկ կ'ապրէ։

Մարդը ջուր խմած տեղը, օձն ալ չի խայ թերը։

Մարդ կայ մարդ կը լմանի, բացուեր է վարդ կը լմանի. մարդ կայ աղուէս կը լմանի, ան ալ կ'ըսեն, մարդ կը լմանի։

Մարդ կայ հոտուն, մարդ կայ կարօտուն։

Մարդ կրակն իր բաղարջի տակ կ'ուզի։

Մարդ կայ որ հազար կ'ապրէ, հազար կայ՝ որ մէկը չապրէ. ան մարդն որ հազար կ'ապրէ՝ անդէտին քովը փող մը չարժէր։

Մարդ մարդի էգի կը տայ, մարդ մարդի պտուղ չիտալ կամ ճուռթ մը (ողկոյզ) խաղող չիտար. (Ե)։

Մարդի նամուսը կամ ամօթը գտակն ա. կընկանը՝ լաչակը. (Ե)։

Մարդի միս են ուտում, արինը խմում. (Ե)։

Մարդ իր մատը իր աչքը չի կոխի. իր ձեռքովը իր գլխին եա երեսին չի թակի. (Ե)։

Մարդ կայ որ մարդկցը լաւ է. մարդ կայ որ էշը նրանից լաւ. մարդ կայ որ խօսացնես քաղցր կը լսես. մարդ կայ որ չխօսացնես՝ լաւ է։

Մարդ մարդու հալը չիկաէ, կէս գիշերին ժամ կի ձէնէ. (Պ)։

Մարդ մարդու տէրտը չիյտէ, կէս գիշերին ժամ կը կանչէ։

Մարդը մարդուն հայլին է։

Մարդու կռնակէն կը ճանթեցնեն։

Մարդուն իրեն արածը՝ թշնամին չանի։

Մարդուն էշը չըլլար նէ, իշուն գին չի հանիր։

Մարդուն կայքն՝ 'ի հագուստէն ճանաչի, և վարքը, որուն հետ որ կը վարուի։

Մարդու սիրտին վկան՝ աչքն ու բերանն է։

Մարդուս ձեռքը հինգ մատ է. որը կարճ է, որը երկան։

Մարդուս ոչ մորթին կը հագնուի, և ոչ միսը կ'ուտուի։

Մարդուս պատիւն ու յարգը, տարիքը չէ, խելքն է։

Մարդուս իր ձեռքով ըրած գործասը, աշխարքք ժողվի չի կարնար ընել։

Մարդուս սիրտը՝ շիշէի նման է. կոտրի նէ ալ չի շինուիր։

Մարդս օր կայ ուրախ է, օր կայ՝ տրտում. բայց խելին համար ամէն օր տօն է։

Մարդ պիտի՝ որ փլաֆ ուտի։

Մարդս քանի ապրի՝ նոր նոր բաներ կը սորվի։

Մարդ տեսօք կամ աղէկոնկ է։

Մարդ չոր թոզ ուտէ, ամենքէդ մէկ մէկ գիլիմ։

Մարը ծեծ ու պատիժ կու տայ, բայց յեսոյ կը համբուրէ։

Մարը տես՝ աղջիկը ամա, եզերքը տես՝ կտաւը ամա։

Մարմինն ու հոգին աղբար են։

Մարմնոյս գլխուն բան բերին որ, հոգիս ալ մոռցայ։

Մարն զմանուկն ուրացեր է։

Մարն որ մօրու (խորթ մայր) ըլլայ, հարն ալ հօրաւ (խորթ հայր) կ'ըլլայ։

Մարն ուտէ, աղին չի տայ։

Մեզի դուռ է բացուեր։

Մեզի նեղ անել, քեզի տեղ անել։

Մարդ մարդու կը նմանի. խիստ քիչ երկու մարդ մէկ ձաշակով։

Մարդ մարդու քահանայ, մարդ մարդու սատանայ։

Մարդը մարդի մօտ յուղարկեցին, ինծ էլ քեզ մօտ։

Մարդը լաւ օրի չիդիմանալ։

Մարդը չանդգամացած՝ չարութիւնը իրան չի մօտենալ։

Մարդն ի՛ հալաւը, էշն ի՛ փալանը։

Մարդի հետ կռուելիս՝ եռքի խօսքը առաջ մի՛ ասիլ։

Մարդի փորին ծեծեցին՝ գոռաց, վայ կռնակս։

Մարդն մարդով, երկուսն՝ Աստուծով։

Մարդոյ անունը ոչ լեւով (լաւ) վեր կայ, ոչ վատով. (Զ)։

Մարդուս աչքը՝ մէկ բուռ հողը կը կըշտացընէ։

Մարդու բարեկամը իրա ձիպն է։

Մեզի ո՞վ ասել է որ՝ ղուզի ըլլանք որ գէլերը մեզ ուտեն։

Մեծ աղաներ՝ շատ բոշաներ, մեծ մեծ դռներ՝ սոված շներ։

Մեծ ղուրցողին լօխման թերանը կ՚ըլլայ։

Մեծ էշն ախոռն ենք մոռցեր։

Մեծ կտորը՝ ականջը մնաց։

Մեծ հարստութեան եռևանց՝ շատ տարտպայ օչօփայ կ՚ըլլայ (ոչնչանայ. Պ)։

Մեծ մեծ կը ջարդէ։

Մեծն ըսէ, պզտիկն չմռէ կամ չլսէ. ձունն այն ժամին պատէ։

Մեծ շեմը շլորի՝ ով մտնէ գլորի։

Մեծ պատառ կերը, մեծ խօսք մի՛ խօսիր։

Մեծ տունէ եկած, տաք հացի կարօտ։

Մեղայ հոգւովս, բռնէ. մեղայ մարմնովս, անձս բռնէ։

Մեղայ՝ մեծ խօսքիս։

Մեղաւորին մեղացէն՝ Թմրին արդարքն, կամ Մեղաւորին մեղքիցը տրամի արդար։

Մեղաւորին փուշը Թնտրի եղերքն է. (Պ)։

Մեղը մը կերանք որ։

Մեղրաճանճին մուխ տուր որ փախչի. (Ե)։

Մեղը չունիս, մեղրաբերանն ալ չունիս։

Մեղրը ծախողը՝ մատը կը լպստի (լզէ. Ե)։

Մեղքը լալով, պարտքը տալով։

Մենք գատինք, ուրիշներն ուտեն. (Ե)։

Մենք ալ գիտենք Թէ կորած էշը որ գոմուն կապած. (Ե)։

Մենք ու մերոնք, ցաւս 'ի օտարը։

Մենք էլ քու ջրերն ընկանք (քեզ նմանեցանք. Ե)։

Մենք գնացական, դուք մնացական։

Մենք ուր, փաշային բաղնիքն ուր։

Մենք ջուրն ենք, դուք կամուրջը։

Մեռած չէ, մեռոնուեր է։

Մեռածին մի՛ նայիր, ողորմիս եկածին նայէ։

Մեռածնուն վրայ կամ աղէկ կամ հէջ. (Պ)։

Մեռելտաց (մեռելոց) և մեծերուն վրայ կամ աղէկ զուրցէ կամ սրստուիր (լռել)։

Մեռելէն ալ սատանան հրաժարեր է։

Մեռելին խաթրը նայող չըլլար, ընկնողին ձեռքէն բըռնող չըլլար։

Մեռելը տաք տաք կը լուան։

Մեռելները գիտեն որ սաղերը ամէն օր քաթան են ուտում։

Մեռեր է հարըս, երկիր կու տայ վայըս։

Մեռնելը չի հոգար, ընկուզէ դագաղ կը բընռէ։

Մեռնի կնքահայրն, որ չարժէ սանահայրը։

Մեռնիմ էն տաշտին որ տաշտ մ՝էլ հետ կշտին. (Ալ.)։

Մեռնիս, շնորոց գալնոց չըլլաս։

Մեռնողին՝ բարին ալ հետը կը մեռնի։

Մեռնողին հետ ով է մեռեր։

Մեր սրտին սիսեռը՝ մեզի լէպլէպի է։

Մեր տասղը մէկ անգամ թէքիլ ա. (Ե)։

Մեր ծերերը կասեն. Նոր տարուն էշերը մարին կ՝իմանան գիշերուան կարճընալը։

Մեր երկրի մարդը նախ կը խորհի, և ապա կը խօսի. ոչ երկրի մարդն է որ նախ կը խօսի՝ ապա կը խորհի։

Մեր մեղքը մեզի հետ է։

Մեր պապերից մեր ականջն ընկէր մեզանից մեր որդիքը կ՝իմանան. (Ե)։

Մեր շապիկը մեր մարմնոյն աւելի մօտ է։

Մեր չորս պատը լմնցուցիր մի։

Մեր չըրախը կը վառենք, հալխին կալաճին (խօսակցութիւն) կ՝անենք. (Պ. Խ)։

Մեր սիրան ա նեղ. թէ չէ Աստուծոյ սիրան շատ լէն ա։

Մեր սպասը (թանապուր) ձեր հէչիցը վատ է։

Մեր տունը փոս է, ամէն խեր հոս է։

Մեր տուն ամենուն սիրտ կը քաշէ։

Մեր տունը կուտ կ'ուտէ, դրկցի տուն հաւկիթ կամ ձու կ'ածէ։

Մէկ ականջէս մտաւ, մէկալէն ելաւ։

Մէկ ամուր երեսը աղէկ է, քան զտունի գուն-թանը։

Մէկ անխոհեմ խօսքը աշխարհք երբար կ'անցը-նէ։

Մէկ աչքէն մէկալին չի հաւատար։

Մէկ աչքը լալով, մէկալը խնդալով կ'առնեմ։

Մէկ աչքը մէկ գլխին բաւական է. երկուսը շը-նորհքի համար։

Մէկ Աստուած, անթիւ ստեղծուած։

Մէկ բան էի ուզում ասել, ամա վախցայ թէ խիարը ծուռ կը բուսնի։

Մէկ գիժ մէկ կարաս (կոտրեց, հարիր խելօք վրայ թափեցին չկարացին սաղացընել. (Ե)։

Մէկ դրան շան պէս կէջինմիշ եղիք։

Մէկ դրասատացէն (հէյպէէն) երկուս կ'անէ. (աղքատը երբ կը կարդուի, մէկն երկուս կ'ըլ-լայ. Պ)։

Մէկմէկու հետ կատու ու մուկ են։

Մէկ թէմպէլ մարդ՝ մէկ ինատով մայմուն է։

Մէկը իրեն այգին թողու՝ ուրիշինը ջրէ, ոչ յարութիւն ունի ոչ թողութիւն։

Մէկը իր ձեռքով իր գլխին չի զարներ. (Ե)։

Մէկը հարս կ'ըլլայ, մէկը փեսայ. խեր մէջը կը խեղնայ։

Մէկը տանուինը պան կ'ածէ, երկուսումը մէկ պան պակաս քանէն։

Մէկը պուտ մի ջրի է կարօտ, որ ծարաւն անցնի։
Մէկ կամրջի է կարօտ որ գետը անցնի։

Մէկը իր երկիրը խելացի և գիտուն չեն համարեր, օտար երկիրներ կ'երթայ, սագ մը գըտանք կըսեն ու հաւնոցը կը փակեն։

Մէկը մէկին պաղ է տուեր. ան անոր ձուրթ մը խաղող չէ տուեր։

Մէկը չըսեր թէ ես խենթ կամ խև եմ։

Մէկը չըսեր թէ՝ իմ թանս թթու է։

Մէկը չի ըսեր թէ իր ճրագը մինչև առաւօտ լոյս կու տայ։

Մէկ թավայի ձուկ ենք. (հաւասար ենք և մէկտեղ կամ մէկ տուն մեծցեր ենք)։

Մէկ թելը քաշես կամ կտրես՝ հազար կարկտանը կը թափի. (շատ հին է)։

Մէկ թշնամին՝ հազար բարեկամէն շատ է։

Մէկին անել պէտք է, մէկին ասել։

Մէկին աղեքները վար է եկեր, մէկալը ըսեր է. Կեցիր կտրեմ կատուիս տամ։

Մէկին գիւրաւ խօսք մի տար. տուիր՝ ամուր կեցի՛ր։

Մէկին քառասուն օր խև կանչեր են՝ խենգեցեր կամ խևցեր է։

Մէկ խենթ մը քարը ջուրը ձգէ նէ, տասը խելօք չեն կարնար հանել։

Մէկ ծաղիկով կամ ծիծեռնիկով գարուն չի գար։

Մէկ խոշթուխը երկու ձմերուկ չի մեկնիր (սըղմիր)։

Մէկ ծաղկէն օձը թոյն կը շինէ, մեղուն՝ մեղր։

Մէկ ծառէն թի ալ կ'ըլլայ, հորսելի ալ։

Մէկ խելքը գարնան ու աշնան ինչպէս բաւէ։
Մէկ խելքը լաւ է, երկուսը լաւ առաւել։
Մէկ ինձոր զԱդամ 'ի ճէննէթէն քշեց։ (Պ)։
Մէկ խօսէ՝ մէկ լսէ։
Մէկ կենդանի՝ չկերած խոտը ուտէ, գլուխը կ'ուռի։
Մէկ կոտրող՝ քառասուն շինող։
Մէկ կորեկի չափ օգուտ չունիս։ (Ե)։
Մէկ ձայնը երկինքը, մէկ ձայնը գետինը կը կանչէ։
Մէկ ձեռքը ծափ չի տալ։
Մէկ ձեռքը ձայն չի հաներ։
Մէկ ձեռքով երկու ձմերուկ չի բռնուիր։
Մէկ ձեռքը մէկալը կը լուայ, երկուան ալ խատակ կ'ըլլայ։
Մէկին փողն որ աւելնայ, տանը սիւնը ծուռ կ'երևնայ։ փողն որ պակսի քսակը, կասէ՝ ծուռ սիւնն ալ ձեռք կու տայ։
Մէկին ճրագն ալ մինչև առաւօտ չէ վառեր։
Մէկ մանկութենեռէ, մէկ ծերութենեռէ։
Մէկ մի տալ, որ երկուս ալ չուզի։
Մէկ մ'ի կովէն, տասն 'ի ծովէն։
Մէկն ապրանքէն, մէկը կեանքէն։
Մէկ կորկոտ ունին ծեծելու։
Մէկ նաւն երկու կառավար չունենար։
Մէկ ոչխարէն երկու կաշի չելլար։
Մէկ ոտքը դուրսն է, մէկը գերեզմանը։
Մէկ ուտեմ՝ հազար փառք տամ։
Մէկ չամիչը օխտը տեղէ կը խածնէ։ (այնչափ նազիկ է որ)։
Մէկ չամուռ մէն է պատը զարկինք, բռնէ չբռնէ։

Մէկ չէն՝ հազար փորձանքից է ազատել։

Մէկ չուանի վրայ լուացք փռեր են, ազգա-
կան եզեր են։

Մէկ ոսկեթը ալ աղէկ է, քան զհարիւրը։ (Պ)։

Մէկ սեղանի մարդիկ ենք, օտար չենք։

Մէկ ստակ տուր՝ սիրելի չինէ, և հազար ստակ
տուր՝ մի աւրեր։

Մէկ տեսնելիս՝ բարեկամ, երկու տեսնելիս՝ աղ-
բար։

Մէկ տունը չէինք, բայց մէկ ձայնով էինք։

Մէկ տուն երկու տանտիկին էլնի, տախտն ան-
աւել կը մնայ։

Մէկ վէնճիրէ մը թողլու է։

Մէկ փող տուինք որ խօսի, տաս կու տանք չի
դադրիր։

Մէկ փորին երկու միննէթ չըլլար։

Մէկ փոր, երկու մունաթ։

Մէկ քաղաք մը կ'երթաս, կը տեսնաս որ գտակ-
ները ծուռ են դրեր, գոն ալ ծուռ դիր։

Մէկ քարթապլէլով՝ երկու ճնճղուկ բռնեցինք։

Մէկ քարով պատ չի կայնիր։

Մէկ օձի խեթած էք ամենքնիդ ալ։

Մէկ օր չեղաւ որ հին ցաւով պառկէինք։

Մէյմը աղօթքի կեցայ, ան ալ գիւանք հէլհէլ
կու տան։

Մէյմը զռայ, երկուս զռայ, գարձեալ հշ է։

Մէյմը հարուստէն, մէյմըն ալ տաքէն ինաս չի
գար։

Մէյմը նոր տունին, մէյմը նոր հարսին, ամէն
օր մէկ մէկ բան կը պակսին։

Մէյմը չուտողէն վախցիր, մէյմըն ալ չխօսողէն։

Մէյմն ալ հարս ըլլամ նէ, կուկուզ նստիլը կը սորվիմ կամ կը նստիմ։

Մէյմ՝ որ ձախ է, տար ու ծախէ։

Մէջ գետերուն մանդ եկաւ (մանելդ)։

Մէջերէս սև կատու անցաւ։

Մէջը բորբոս, դուրսը Փիլիպոս։

Մէջք մէջքի տանք, սառեր շուր տանք (շրջենք)։

Մէջ տեղը ջուր չկայ, բոժոժի ձայն կու գայ։

Մեռաս ուտես, ու գաս մուրաս։

Մթնծեծ կ'ընէ։

Մի առներ բանն անօրէն, կը գտնես երկնաւորէն։

Մի առուէց որ ջուր գնացիլ ա՝ էլի (նորէն) կ'երթայ։

Մժեղին ձայնը քնար է իմացողին։

Մի ասեղ է առնելու, երկաթի փուլթն է հարցնում։

Մի դարտը մարդ չիսպաննիր։

Մի անցնիր մուխանանաթ մարդի կամրջից, թող քեզ տանի հեղեղը. մի պառկիր աղուէսի հովանիքում, թող պատռէ քեզ առիւծը։

Մի դգալ տաք ու հովը իրարու հետ բաժնել։

Մ դգալ ջրի վարձքը կայ։

Մի ըլլար ուրագի պէս միշտ դէպ 'ի քեզ, միշտ դէպ'ի քեզ. այլ սղոցի պէս եղիր, մէկ դէպ 'ի քեզ, մէկ դէպ 'ի մեզ։

Մի ըսեր, մի լսեր։

Մլթէ քու հաբդ է միայն մօրուքուոր։

Մի թքներ ան ջրհորը, որուն ջուրը խմեր ես։

Մի խառներ, հոտը կ'ելլէ։

Մի խառներ զօղկային (ուրիշին) պտուկը, ուր կերակուրդ է՝ փիր. (Պ):

Մի հաւատար խալպ աղուէսին. (Պ):

Մի զայիմ (ամուր) երեսը լաւ ա՝ քանց տանու գուրթանը. (Ե):

Մի մարդի գործը Աստուած յանձնողի, ադամորդին ինչ կարող ա անել. (Ե):

Մի մոներ աւեր այդին, որ խաղող չունի շահ չունի:

Մի մուկն օխտը կարաս է աղտոտել. (Ե):

Մինակ ձեռքը չի տաքնար, երկու իրար շփելու է:

Մինարէին գլխուն բեռ մը ընկուզ լեցուր կամ լից, մէկն ալ չմնար:

Մինը միւսին տուն չէ թողէր նա ասել է՝ սիլահ նէրս ո՞րտից կախեմ:

Մինչև աղը եկաւ, մատաղը վերցաւ:

Մինը չմեռած՝ միւսը առաջ չի գալ:

Մինչև առուն ջուր գայ, գորտին աչքերը գուրս կու գայ:

Մինչև գարունքը չգայ, ծառ չի ծաղկիլ. (Ե):

Մինչև թուրը եկաւ, լեզուն գլուխը կտրեց:

Մինչև լեպլէպի ըսաց, խանութները փակուեցան:

Մինչև մողիկը կով ըլլայ, իր տէրը խոզ կ'ըլլայ:

Մինչև չպղտորի՝ չմաքրուիր:

Մինչև տաճկին չծեծես, քեզ բարեկամ չի դառնալ. (Ե):

Մինչև քիւրք ըսաց՝ ձմեռն անցաւ:

Մի ոռոգաներ զպտրտէզն. (բաց մ'ասէր):

Մի սատակիր իմ էշս, գարուն է բացվում, եօնջէն է ծլում:

Միսաֆիրը՝ տանտիրոջը ծառան է։

Միսաֆիր հոց կուտէ՞ս։ – Լաւ է ծէծէս քան հարցընէս. տուր ու տես։

Միսը միս է, խաշուն աչքի լիս ա. (խաշածը աչքի լուս է)։

Միսն ու կաշին քեզի, ոսկորն ինձի։

Միս ու էղունկի մէջ պէտք չէ մտնալ։

Միսս կերաւ կամ գցցեց։

Մի սիրեր զարծաթ՝ կ'իյնաս որոգայթ։

Մեան 'ի պտուկը բան չմնաց. (Պ)։

Մի սորվեցնուս քան զքեզ ա՛լ սորվածնեերը.(Պ)։

Մի տանից չէինք, հոմա մի ձէնով էինք. (Ե)։

Մի տար, մի սորվեցներ. տուիր, մի պակասցներ, կամ տուար՝ մի արգելուր. (Պ)։

Միրուքին տակէն ծամչայ կ'ըլլայ։

Միրուք չունիմ՝ որ խօսքս անցնի կամ անցկենայ։

Մի փոքր մոքիս արևը երևանց թէ չէ, էլի սև սև ամպերը գլխները բարձրացրին. (Ե)։

Մլիկ մեղաւոր։

Մկան ծակը հարիւր թումանով առնուլ։

Մկան շեռը վեր ('ի վերայ) ծովուն կ'երևնայ. (Ե)։

Մկիտանձի (գինեպան) Զաքէ ջուր կը խառնէ, պակաս կը ծախէ, միասին կը քցէ (խմէ։)

Մնաս բարով, բարեկամ։ – Հի՛ւր, եկածէդ ալ խապէր չէմ, գնացածէդ ալ։

Մնջի (մունջի) լեզուն, տէրը կը հասկընայ։

Մոխիրը կ'ուտեն, եղը պռկնեերուն կը քսեն. (ինչ նեղութիւն որ ունենայ մէկը՝ դրսէն պէտք է վայելուչ երևնայ)։

Մոմի պէս կակղըցաւ։

Մուրթաֆի աշկերտի պէս եռ եռ կամ եռեռ-
բանց կ'երթայ։

Մուրթ գիշերին կամ պատերուն և կամ տներուն
լուս կու տայ։

Մուրթն ու լուսը գիտես, քաղքին ճամբան չիյ-
տէս։

Մուրթ տեղը՝ մուր կու տայ։

Մուրթ տեղը աչք կ'ընէ։

Մուխը շիտակ կերթայ. (Պ)։

Մուխի պէս աչքս մտար։

Մուխ կայ՝ կրակ կայ. (Պ)։

Մուկը իր գարշահոտութենէն՝ տեղը կը փոխէ։

Մուկը ծակը կը խնտայ. (այնպէս խօսք կ'ըսես
որ, մուկը ծակը կը խնտայ)։

Մուկը ծակը չէ աղմած, ցախ աւելն ալ պոչն է
կապերը։

Մուկը կատուին՝ միշտ գէշ երազ կը տեսնէ։

Մուկը կը գնէ նաւալա (պաշար), քիթը կը գնէ
հաւալա. (Պ)։

Մուկը ուտէ ան մեղրը, որ ինձի խէր չունի։

Մուկի ծակ կը բնտռէ՝ որ մտնայ։

Մուկին շէռը՝ ջաղջին ջրին օգուտ է. (Պ)։

Մուկն ալ որոճ կ'ընէ. (գոնն ալ լեզու ելար,
բանի խառնուեցար)։

Մուկը իր բունը չէ մտեր, շաղգամ ալ կապերը
են պոչը։

Մուրամ մուրամ մուրացկանին տամ։

Մուրատ Մուրատ՝ մուրս 'ի վրադ, կարգուե-
ցար՝ ո՞ւր է հինադ։

Մուրը երեսը կը քսեն, հայլին ձեռքը կու տան։

Մուր ունի, մրամանն չունի. (կամք ունի, կարողութիւն չունի):

Մուրս 'ի վրադ. — Երեկուան խմած ջուրս 'ի վրադ:

Մուր քսեց մէկուն վրան:

Առմռասը փեռեալէն՝ զատիկը թէղ չի գալ:

Մսագործի կամքը որ լինի՝ զապուն էծիցն էլ եղ է հանում:

Մանեալէդ առաջ մտածէ թէ ինչպէս պիտի դուրս ելլես:

Մրէն ելաւ՝ մրջուրը ընկաւ:

Մրոտ պուտուկ կը լմանի, որուն քսուի՝ կ'աղտոտէ:

Մրջիւնը պզտիկ ա, համա ասլանի ականջ ա մտնում. (Ե):

Մօրդ էօրէքէին վրայ է գրած:

Մօրդ էօրէքէն է:

Մօրը մանածը ծախեր է:

Մօրն եփածը կերեր է:

Մօրս թընտիրը՝ մօրս ապուրը, նատեմ վերևը ուտեմ լաւաշը:

Մօրմէդ առաջ ախոռը մի մտնար:

Մօրուց խենթին, սուրբ Կարապետն ինչ ընէ:

Մօրուքդ ջաղացքը ճերմակցուցիր:

Մօրուքը համրեր է:

Մօրուքը ձեռքս է:

Մօրուք ձեռք տուինք:

Մօրուքս բռնկեր է, կ'ըսէ. կեցիր չուպուխս վառեմ:

Մօրս էօրէքէն, հօրդ մօրուքը մէկ է:

Ցանցանքը դափուա ըլլայ՝ մէկը վրան չառներ:

Յանցանքին կէսն ալ նոյն յանցանքն է։
Յառաջ գլուխը, յետոյ ոտքը։
Յաջողութիւնը և ձախորդութիւնը եղբայր են։
Յառաջ մերը, յետոյ մերոնցը։
Յաւիտեան ապրէ, միշտ ուսիր, և ոգէտ կը մեռնիս։
Յատակը չտեսած փոսիդ մէջ մի՛ կոխեր։
Յետինը չեկած, առջինը չիմացուիր։
Յետի շունը՝ վազան կ՚ըլլայ։
Յետնադուռը՝ կը զբրջէ զտունը (կը շրջէ. Խ)։
Յիմարին հետ շատ մի՛ խօսիր, քեզի ամօթ կը բերէ։
Յիմարը թէ որ դնէ սամուր գտակ՝ դարձեալ յիմար է յիմար։
Յիմարը խնդրեր է հայրենիքը. իմաստունը՝ հանգիստը։
Յիմարներուն ձեռքէն՝ բուերը անապատում են բնակում։
Յիւր ապարանան՝ թուր շողացուցանել։
Յոլովը գալը՝ կտրելու նշան է։
Յիմարը երկու բանով կը սխալի. մէկը՝ միտք չանելով, մէյմն ալ չլռելով։
Յոյսը ցանեցին՝ տեղը բան չիբուսաւ։
Յոյսդ սարին վրայ էր, սարը ձուն եկաւ. յոյսդ ծառին ճիւղին էր, բունած ճիւղդ վար եկաւ։
Յոպոպը ինքը հոտած է, կարծէ թէ իրեն բունն է հոտած։

Նա դուն ինոր ատա Ալ, նա էն քեզի ասի Պէ-լիօ. (Ա.)։
Նալաթ ան հանուքին, որուն կէսը ղորդ չըլլայ։

Նախանձոան՝ նախ ինքն իրեն կը խանձէ։

Նախիրը՝ ձեան վերայ չիտեսնիլ։ (յայտնի ինչ անգիտանալ։ Ա.)։

Նախիրը ձեռքէ գնաց։ գուն հորթը կը բռնտաես։

Նախանձորդը հանգիստ չունի, ստահօսը չափ չունի։

Նախ կէր, ապա գոհացիր։

Նախ տես, ապա զարմացիր։

Նախ հոգի, և ապա մարմին։

Նայէ որ իմաստուն ըլլաս, բայց տգէտ երևնալ սորվիս։

Նայինք թէ Քրիստոս Մահմետէն գո՞հ է։

Նա մարդ չէ՝ տէրտ է, ասուն չէ, անասուն է։

Նաչարը կերեր է չաչ ու բանձարը։

Նաչարութիւնը գատաստան կ՚աւրէ։ (Պ)։

Նապաստակին որոձին մի նայիր, թաթերը շան է։

Նա քիս մեղրն պիտի, նա քիս տըզ։ (ոչ քու մեղրը պէտք է, ոչ քու տըզը։ Վ.)։

Նաւ մեծին՝ շարժումը մեծ, լեռան մեծին՝ գոռումը մեծ կ՚ըլլայ։

Նեղութեանը լայնութիւնն ալ կայ, լայնութեանն ալ՝ նեղութիւնը։

Նեռն ու խօսքը գուրս թռչելէն վերջը, ա՛լ ետ չեն դառնար։

Ներկարարի կարաս է, որ խօթեմ հանեմ։

Ներսը ինձ է վառում, դուրսը ուրիշներին։

Ներսս դուրս ուրիշին։

Ներսէն դրսէն բարեխօս ըլլայ։

Նիզակը գողցողը՝ տեղը կը պատրաստէ։

Նման զնմանին սիրէ, ատատնան իր խնամին։

Նոր աւելը՝ լաւ կ'աւլէ, իսկ հնցածը մաքրելու տեղ՝ կ'աղտոտէ։

Նոր հաւ են եղեր, կանանչ հաւկիթ կ'ածեն։

Նուկին տաս, կեազ կը հանէ։

Նրա թրի երկու դեհն ալ կտրում ա. (Ե։)

Նրա համար՝ ժամն ու գէլի հարանիքը մէկ ա. (Ե)։

Շալկեմ Երուսաղէմ տանիմ, դեռ պարտքէս չեմ խալըսիր։

Շալկեա՝ առնող չիկայ. ալկեա՝ (գեռին դնեա) առնող շատ։

Շահն ու ֆեսան աղբար են։

Շաղգամն ալ՝ ապրին երեսը ինք զինքը եղ է կարծեր։

Շամփուր լզող շանը՝ խորոված չի հաւատացուիր։

Շանը աղաղակը թէ որ լսելի ըլլար, մէնղիլիանան ձի չի մնար։

Շանը լաւ մոիկ անելու է որ մարդի չի կծի (խածնէ)։

Շանը կաղալուն մի հաւատար։

Շանը կաղութիւնը կամ կատաղութիւնը մինչև աղուէսի տեսութիւնն է։

Շանը հաջելէն դայլ կը բերէ։

Շանը հարանիքը՝ թագուոր կամ փեսայ աղբար պէտք չէ բնտռել։

Շանը հարանիքը՝ շարական չըլլար։

Շան հետ աղբերացիր, փէսը ձեռիցդ վեր մի դցիլ։

Շանը հետ շախայ չըլլար։
Շանը հետ պարկը չեմ մոնար։
Շանը պոչը կապուեր է։
Շանը պօթը (քիթը) կարճ է. (Պ)։
Շան պոչը քառասուն տարի մանկանէն դնես, դրատուիլ չի։
Շանը պոչը օխտը տարի կաղպար դնես, հանած տեղն դարձեալ ան կէտ պոչն է։
Շանը սատկելիք չկայ, վատ մարդին մեռնելիք։
Շանը սևն ալ ճերմակն ալ շուն է։
Շանը սիւրիւն չի լինիլ։
Շանը տուր՝ տիրոջը խաթրը արա։
Շանը քանի քար գցես՝ կը հաջայ։
Շանիցը լակոտ վեր կալ։
Շան լակով՝ հարանիք չըլլար։
Շան կաշի է, որ դին քաշես կ'երկընայ։
Շան հարանիք, բոշի բարեկենդանք։
Շան հետն ինես, շան հոտ կու գայ. (շանը քըսուիս)։
Շանն հաջելը իրեն արհեստն է։
Շան ոտքը քարվանիցը խնայու�էս։
Շանը շատ հաջումը՝ գալ կը բերէ. (Պ)։
Շան վրայէն քաղցր հոտ։
Շան տաճիկ ըլլալը լսես, քար մի նետեր։
Շատ աշխատիլը՝ անօգուտ է. տուրքը Աստուծուցը պէտք է։
Շատ անգամ հանաքը (կատակ) չանագ կ'ըլլայ. (Ե)։
Շատ լաւ աղջիկ է. — ինչէն յայտնի է. — մարը վկայեց. (Պ)։
Շատ լաւին մեն եկողը՝ փոխն ռատտ կգայ. (Ե)։

Շատ բան տրա, քիչ խօսէ։

Շատ ապրողը գիտուն չէ, շատ տեղ քալողն է գիտուն։

Շատ ապրողը՝ շատ բան կը տեսնէ։

Շատ գիտցողը՝ շատ կը սխալի։

Շատ դատողին՝ արար է վատակ։

Շատ դատողին՝ շարէ շապիկ։

Շատ դատողին չուլ շապիկ, քիչ դատողին շալ շապիկ։

Շատ եփողը աղի կ'անէ զուտելուն. (Պ)։

Շատ զուրցողը տըրտըռան կ'ըլլայ։

Շատ լացը աչքի ինաս է. վատ խօսքը անձի վնաս է։

Շատ է նա ջրն 'ի վար. (դժուարութեան թեթեւութիւն. Պ)։

Շատ խաղը խոզն ա կի վարէ։

Շատ խաղ գիտեմ, բայց ձայն չունիմ։

Շատ խօսելով՝ փլաւ չեփիր, բրինձ ու եղ հարկաւոր է։

Շատ խօսքը ականջ կը ցաւցընէ։

Շատ բան կայ որ՝ ինչուան չի սորվիս, չես կրնար ընել. շատ բան ալ կայ որ՝ ինչուան չընես, չես սորվիր։

Շատ ծաղրը՝ լաց կը բերէ։

Շատ կարդացողն դառի (կը դառնայ) տաճկըցել է։

Շատ կի խոստանայ, քիչ կու տայ. (Պ)։

Շատ կը վախնաս, ծոցդ քար մը դիր։

Շատ հա հան՝ կովին կը դժուարիցնի (կը խեղթեցընէ. Ե)։

Շատ հովիւը՝ ջոկին ինաս է։

Շատ ձեռք շատ կ'ընէ. երկուսը ոչչափ կարնայ նէ. (Պ)։

Շատ մամերուն մէջ՝ աղան կի կորի. (Պ)։

Շատ մարդ կայ որ ուրիշներու. աւելի աղէկ գիտէ խորհուրդ տալ, քան թէ իր անձին։

Շատ մի սիրեր՝ ատել կայ, շատ մի ատեր, սիրել կայ։

Շատ տուողը գանձէն կու տայ, քիչ տուողը՝ աղքատ անձէն։

Շատ փարչեր կժի առջի թող կ'ելլեն (կը կլորին)։

Շատ փուռ հաց պէտք է որ կատարեալ ըլլայ։

Շատը շատին կ'երթայ։

Շատը քիչին խայիլ է։

Շատը կի հատնի, քիչը օգուտ է. (Պ)։

Շարժէ՝ որ շարժի։

Շաքարը քաղցր է ամմա, հացի տեղ ե՞րբ կը բռնի. Ե)։

Շաքարն՝ ընկեր շան բերան։

Շեխին՝ իրիցուն կ'ասի, պանակեր (պաս ուտող. Ե)։

Շեմը շեմին կը նայի, հարսը կեսրին։

Շէն անուն՝ վեր աւեր քաղքին. (Ա)։

Շէն կենէր (կենար) մեր անիկ, անուշ կենէր մեր կնիկ. (Ա.)։

Շէն տան հարս ես գնացել, թաժա հացի կարօտ։

Շէն տնէ եկած՝ քաղցած կատու։

Շէքէրն ջո՞ւրն ինկաւ, ի՞նչ եղաւ։

Շէքլըդ (շէնքդ շնորհքդ) 'ի հարանցդ, 'ի կեսրանցդ ըլլայ. (Կ)։

Ելնականն որ չփոթի, չարու

Շունն առնէ մեղքը։
Շուն ըլլաս, տան տէր չըլլաս։
Շունը կաղալով չի սատկիր։
Շունը կը հաջէ՝ քամին կը տանի։ (կ'ուզէն թող բամբասեն)։
Շունը հաջելով կը մնայ, ճամբորդը իր ճամբան կ'երթայ։
Շունը կը հաջայ, քարվանը կը քաջայ, կամ ընթնի։
Շունը յիշէ՝ փատ պատրաստէ։
Շունը շալկուորին կը հաջէ։
Շունը շանն եռևէն, սուագ շունն ալ անոնց եռևէն, կամ երկուքը մէկ տնէն։
Շունը շան թանթլիքը (թաթը) չի ծամել։ (Ե)։
Շունը շանը միսը կերեր է, ոսկոր չէ հանած։
Շունը շան միս չուտեր։
Շունը շանից, երկուսը մի տանից։
Շունը ջուր խմելով ծովը չի պղծուիր։
Շունը սպաննողին քաշ տալ կը տան։ (Ե)։
Շունը տաշտը մի կապէր։
Շունը տէմիրճիին խանթէն ինչ պիտի տանի։
Շունը՝ տէրը կը ճանչնայ։
Շունը՝ տէրը հաջան կ'ընէ։
Շունը տէր ունի, գէլին էլ Աստուած է։ (Ե)։
Շունը տէրը չի ճանաչում։ (Ե)։
Շունին ալ պէտք էր մէկ շարէ շապիկ մը։
Շունին անունը կայ, անոր անունը չկայ։
Շունին պանիր է հաւատացեր։
Շունն հաջելով ապրեր է, գառը մնչելով մեռեր է։
Շուն մը չունեցողը՝ շուն մը չարժեր։
Շուն ու փող քաշէ, վասաբկէ։

Շունին ալ շնորհք պէտք է։
Շունն ինչչափ վազէ, տիրոջն հետ գեղկը մնայ։
Շունն իրենց տանը զօրախ (կարիճ) կ'ըլլի։ (Ե)։
Շունն հաջելով եկեղեցին (սրբութիւնը) չպղծիր։
Շունը ծովը լկելով ծովը հարամ չըլլար։
Շուն սալահանէն մտնելով ելլելով խաղաղ չեն։ (Ե)։
Շուշանը ինչուան զարդարուի, ժամը կ'արձակուի։
Շուշանը շփոթ չէր գիտի, վանքին խաւծարար գրին։
Շուտ ակըրտի ուտող չի փոշըմնայ։
Շուտ տուողը՝ կրկին կամ շատ կու տայ։
Շուտ քալողը՝ ճամբան կը մնայ։
Շուքէն վախցող մարդ է։

Ողորմի ուտողին, չողորմի բրդողին։
Ողջ լինի պարտքընտէրը։ ոչ կու տայ, ոչ կ'ուրանայ։
Ողջ գլուխս աւետարանին տակը չեմ դներ։
Ողջերը քանի կան՝ մեռելներին բաժին չի կայ։
Ողջ տեղը ականջն է մեացեր։
Ամենարէ վարդ, ոմն մանուշակ։
Ոչ ած ունիմ ոչ ուլ, սատանին ականջը՝ խուլ։
Ոչ անուշ եղիր՝ որ կ'ըլլուիս, և ոչ լեղի որ թքքնուիս։
Ոչ սառ ու փախիր, ոչ նսամէ ու լաց։
Ոչ բարձր եղիր կախուէ, ոչ ցած եղիր կոխուէ։
Ոչ էս կրակն ա ինձ էրում, ոչ էս ջուրն ինձ խեղդում։

Ոչ է տօն ոչ զատիկ, խնթին է հագեր շարէ շապիկ։

Ոչ գիտէ աղիւսակն՝ ընդ ում խաղայ։

Ոչ գիտէ ախ՝ զինչ ծնանիցի գիշեր։

Ոչ գուրսն ինք՝ ոչ ներսը։

Ոչ եկեսցէ ոչ մեկեսցէ, այլ պառկեսցէ շընթըռկեսցէ, մինչև արևն ծագեսցէ։

Ոչ էս քոռ ասեմ, ոչ գուն ինձ քաչալ։

Ոչ թող ու փախիր, ոչ ուռ ու նստէ։

Ոչ ինձի մէկ կ'ուզեմ, և ոչ գրացիս երկուս։

Ոչ սրբին խունկ կամ մատաղ խոստացիր, ոչ տղին կակա (ուտելիք)։

Ոչխարի մորթ է հագուեր, ու գալի բնութիւն ունի, կամ գայլի գործ կ'ընէ։

Ոչխարի խելք ունի։

Ոչխարին գմակը՝ իրեն բեռ չէ։

Ոչխարին առջևը խոտ ձգելուն պէս, գմակը կը նայի որ գիրացաւ։

Ոչխարները որչափ մորթեն, դարձեալ կը բազմանան. գայլերը միշտ քաղցածութենէ չեն շատնար։

Ոչ կը քշէ էշը, ոչ կը բռնէ կապերտին փէշը։

Ոչ կերաւ եղն ու ճմուռը, ոչ զարկաւ գլուխը դուռը։

Ոչ կուտեմ ձեր գոմշին (սերկևիլ), ոչ կը քշեմ ձեր գոմշին։

Ոչ զափլանը իր պէնէլը կը փոխէ, և ոչ արտակը իր սևութիւնը։

Ոչ մեղք, ոչ խելք։ (Պ)։

Ոչ սոխ եմ կերեր, ոչ սիրտս կ'երի։

Ոչ մէկին բերանը պախշիշ չի թռի խորված աղուէնիքը։ (Պ)։

Ոչ մորթում ա, ոչ ապրեցնում։

Ոչ ջան մնաց, ոչ տաշտերումը հաց։

Ոչ ջուր, ոչ սառ եղեր մնացեր ենք։

Ոչ սապատն եմ, ոչ քէպապը։

Ոչ սատանան տես, ոչ աղօթք կարդա՛, կամ ոչ երես թուք։

Ոչ վառած կրակը քամին դէմ խաղաղ կարնայ կենալ, և ոչ երես եղած կին կամ որդի սատակ կը դիմանայ։

Ոչ տանծ եղայ հասայ, ոչ խնձոր եղայ կարմրեցայ։

Ոչ տնկէ ծառ սալորի, ոչ կ՚ըլլայ թուրք սիրելի։

Ոչիլս կապուտակեր է, (աղքատցայ)։

Ոսկի առապան գուռը կոտրեցաւ. (բաղդաւոր եղաւ)։

Ոսկի բեռով ջորւոյն առջին՝ ամէն բերդի դրուռ-տուք բաց են (կը բացուին)։

Ոսկի հաճաթլըն (գործիքաւոր) արծաթ հաճաթլրին գուռը կ՚երթայ. (ե)։

Ոսկին գեղացին քեւխա կ՚ընէ, չաբեսին աղա։

Ոսկին կրակը կը փորձէ, գատաւորը ոսկին։

Ոսկին՝ մուրթ տեղը լուս կու տայ։

Ոսկին զմարդը կը փորձէ, մարդուն Աստուած։

Ոսկին պզտիկ ա, համա գինը մեծ ա։

Ոսկի ունէր, ձի ունէր, այգի ունէր, արտ ունէր. ծախեց ծախծխեց կին առաւ, կին չառաւ տարտ առաւ։

Ոսկոր չունի լեզուն, որ սուտ ասած ատենը տամաղը ծակէ։

Ոսկոր բերող չունը, ոսկոր ալ կը տանի։

Ով աշարի, ոչ գաշարի։

Ով անագան կ'անէ, աղէկ կ'անէ։

Ո՞վ ա խաբար թէ էգուց գլխներնիս ի՞նչ ա գալացուկ. (Ե)։

Ով առաջ, քառասուն խալաՀ (բլիթ)։

Ով ասես գլխին կը խփի, ու բուրդը քամուն կու տայ. (Ե)։

Ո՞վ ա լսել թէ ծծմոր կաթը ¦մոր կաթիցը լաւ ըլլի. (Ե)։

Ով առեղին կօրայ (կեօրէ) չի քալէր, ինչպէս որ պէտք է, նա առեղէն գուս կի քալէ՝ ինչպէս որ ինքը չուզէ. (Պ)։

Ո՛վ արա ցանեց, չիտակ բուսաւ. իմն ծուռնիմուռնի բուսաւ։

Ով գիտէ թէ՝ ո՞վ է աշխատում, ո՞վ է ուտում։

Ով էտքը կի ճնայ, Աստուած հետը. (Պ)։

Ով զինֆա կը կոխէ, ինոր կու սեւի. (Պ)։

Ո՞վ է հարուստ. — նա որ ունեցածին գոհ է։

Ով թամպալ ա, նա գարտ անի. (Ե)։

Ով թուանք չիգցեալ իր օրումը (կեանք), ֆորս (որս) ինչպէս կարնայ անել։

Ով թուր չի առեր ձեռքն, թրի ղատրըն ի՞նչ կ'իմանայ. (Ե)։

Ով ինչուր օրհասրակ կարձէ, հացին էտև ալ այն կը ճնայ. (Պ)։

Ո՞վ իր աչքը քէօռ կ'ուզի, իր հացին քացով կըտայ (աքացով կը զարնէ. Պ)։

Ով իր հացը մինակ կ'ուտէ, բեռը լեզուովը կը կապէ։

Ով լաւուչի (զուռնա) սորվելու չիկարնայ, դըրըմպէցա (գալարափող) փչէ. (Պ)։

Ով խմողի հետ կու կռուի՝ զօզկան (զուրիշը) կու խաբէ. (Պ)։

Ո՞վ կ'ըսէ թէ աչքիդ վրայ օնք կայ։

Ո՛վ կը խաղայ, նա կը կաղայ. ով կը կարդայ, նա մարդ ա. (Ե)։

Ո՞վ կուզի որ իր աչքը կոր կամ քէօռ լինի. (Ե)։

Ով մարդու մէջ չէ մտեր, խամ պտուղ է մի ուտեր։

Ով կի մտնու առանց վարձուած, կի վարձուի եր դուս կ'ելէ. (Պ)։

Ով հարս, դուն հարսնքուր։

Ով Ճար ունի, իր գլխին թող անէ. (Ե)։

Ով մեղ չար, Աստուած նրան բարի։

Ով մեծերուն հետ ժուռ կու գայ, աչիցը լուսը դուրս կու գայ. (Պ)։

Ով շատ կերաւ՝ ողորմի հօրը։

Ով առանց պակասութեան բարեկամ կը բընտրուէ, առանց բարեկամի կը մնայ։

Ով որ զլեղին կուստադ չէ արի, նա չիյտէ թէ ինչ է քաղցրը. (Պ)։

Ով որ արտումը ցան ունի, եկեղեցումը ձայն ունի։

Ով որ պարը չէ, աք մը (քայլ) աւելի կը թռչի։

Ով որ պաղ ունի, սրտին մէջը տաղ ունի։

Ով որ էշ, մենք փալան. (Ե)։

Ով որ պարպէ, պապուն ընկեր ըլլայ. (Կ)։

Ով որ տեսնէ, քեռին կը կարծէ։

Ով որ փքանայ, շուտով չքանայ։

Ով որ փող ունի, խելք չունի. ով որ խելք ունի, փող չունի։

Ով որ քիչով գոհ կ'ըլլայ՝ շատը կը գտնայ։

Ով որուն հետ, դուն ալ ինծի՞ հետ։

Ով ուխ որ պիզուիթ կ'ըլլայ (կ'ապաւինի), 'ի հոն կը գերանայ։ (Պ)։

Ով ունեցածովը գոհ չէ, զունեցածն ալ կի կորսունցնու։ (Պ)։

Ով ուրիշին ձեռքը կի նայի, քամիով կուշտ կ'ըլլայ։ (Պ)։

Ով տեսաւ՝ չհաւնաւ։

Ով չուստ, փորը կուշտ։

Ով պարտք ունի տալիք, մեծպաքն եկած, զատիկն էր մատիկ։

Ով փռօտայ (առուտուր) չ'անի, ոչ կի կորսընցնու, ոչ կի գտնուի։ (Պ)։

Ոտացէն չուստ, խելքէն թեթեւ։

Ոտքդ քարին զարնուի, խղճմտանքդ քննէ։

Ոտքերս լեզու ելան։ (շատ մտեցան)։

Ոտքը գլուխ է եղեր, գլուխը ոտք։

Ոտքը չօրտպ չունի, գլուխը ֆէսլիյէն կը շարէ։

Ոտքին սահածը կը բռնուի, լեզուին սահածը չի բռնուիր։

Ոտքիս ոչիլը՝ գլուխս ելաւ։

Ոտքիս չամուռը գլուխս չեմ հաներ։

Ոտքովը ուտենք, անոտքը մեր ծառան է։

Ոտք չթրջած, ձուկ չի բռնուիր։

Ոտքս դեռանէն կտրեցաւ, (զարմանալուս)։

Ոտքս երկնցուցած տեղս, ձեռքս չեմ երկընցներր։

Որ ակռադ որ ցաւի՝ լեզուդ հոն կը վազէ։

Որբ գառը մեծցնես, բերանդ կ'եղոտէ։ որբ աղջան մեծցընես, բերանդ կ'արունէ։

Որբը խնտար նէ, դալը մօրմէն կը ծծէր։

Որբի բարի է, աւելցուցէք։ (զրպարտեցէք)։

Որբին հարցուցեր են ինչու կուլաս. – ըսեր է ո՞ւր են իմ հարս ու մարս։

Որբին հաց տուող չկայ, խրատ տուող շատ։

Որբին տէրն ու պաշտպանն Աստուած է։

Որբին՝ օրոցքը կոտրի։

Որբ տղան՝ իր պորտը ինքը կը կտրէ։

Որ գնաս մի երկիր, տեսնես քոմմա (բոլոր) քուռ են, գուն էլ աչքդ խփի. (Ե)։

Որդին հօրէն պէտք է, հացը՝ մօրէն։

Որը նալին, որը մխին։

Որը ջուր չգտնար խմելու, որը անցք չգտնար անցնելու։

Որ՞ն լ՞ը, լ՞ը. ինծի աֆ մի լ՞ը։

Որ ինչ կարես անձամբ անձին, մի յանձնեսցես մերձաւորին։

Որ լռէ՝ հաւանի։

Որ կը ձախէ, տա՛ր ծախէ։

Ո՞ր խաչէն է. (ինչ հրաշալի բան է. Խ)։

Որ երկրի պտկի նայի, անոր երկայն վզիկ պիտի. (որ յերկիր յառեալ նայի՝ երկայն վիզ պէտք է ունենայ. Ա)։

Որ հեռանայ՝ սազն ու սարուն հարցըրու. էլ էն խոյն ա, էլ էն խասիաթը. (Ե)։

Ո՞ր մատրդ կտրես որ չցաւի։

Որ մարդու աչք բունին մէջը կը խաղայ, անոր փորին մէջ սատանայ կայ։

Որ շունը կ'ուզէն սպաննելու, կատղած անուն կի հանեն. (Պ)։

Որ շունը փատով կը քշին՝ էփուրին (նապաստակին) եսեանց չիքուռի ղինքը. (Ռ)։

Որ չի չափեր՝ չքաւեցընուր. (Պ)։

Որպէս թակարդ զհողմն անցուցանել զերատ։
Որովայն յագեալ, արհամարհէ զկերակուր։
Որ ջուրը զիս կը խղդէ, ես անոր ծով կ՚ըսեմ։
Որ սոխը ջես կերուր, ի՞նչու կը կրծվրծաս, (կերրի)։
Որ տեղ հաց կայ, բերան չկայ. որ տեղ բերան կայ, հաց չկայ։
Որ տեղ հաց, ան տեղ կաց։
Որ տեղ որ գնաս, էն տեղի գտակը ծածկի։
Որ փորձ չէ, քիչ գիտէ։
Որ քչին գոհ կ՚անէ, շատերը կը գանէ։
Որչափ ալ որ ուղտը վատի, կաշին խշու մը բեռ կ՚ըլլայ։
Որչափ աչքը մեծնայ, ծնքէն վեր չելլեր։
Որչափ գիտես ալ նէ, մէյմը գտակիդ ալ խորհուրդ հարցուր։
Որչափ գիտուն ու խելօք ես, բարեկամիդ խորհուրդ մը հարցուր, դարձեալ գիտցածդ արա։
Որչափ մարդիկ, այնչափ կարծիք։
Որչափ որ գեանին երեան է, այնչափ ալ տակն է։
Որս կ՚երթայ, առանց որսի տուն կու գայ։
Որսի շունն որ եաև նայի, կը փախցընէ նապաստակը։
Որ տեղ երկու շուն լծէն՝ դուն սէլատան (սայլատան) պէ՞տք է լինիս։
Ո՛ր տեղ որ բարակ է, հոն թող կըտրի։
Ո՞ր քամին բերեց զքեզ։
Ուզան բերանը, կթան կովէն աղէկ է։
Ուզողին մէկ երեսը սև, չտուողին երկուսն ալ արատ է։

Ուժդ չի յաղթած քարը մի վերցներ։

Ուժեղին հետ մի կռուիր, կռնակդ գետին կուտայ։

Ուժը էշին չի էխտեր, փալանը կը ծեծէ։

Ութը ղուրուշի կապաս է, ինչ կայ չըկայ վրաս է։

Ուլը կողովին տակը չի մնար։

Ուլը վաղեց ապրեցաւ, այծ չըվաղեց չապրեցաւ։

Ուխտաւորին խուռնկին ու մոմն է պակաս։

Ուղիղ հաւատքը յայտնի պէտք է։

Ուղիղ ճանապարհով գնացողը չի դադրում։

Ուղտապանին բարեկամ եղողին գուռն ու խալկինը մեծ պէտք է։

Ուղտը գգալով չեն ջրեր։

Ուղտը իր կուզը չի տեսներ։

Ուղտը կորսրեր ես, քէօշէկին ես ման գալի. (սէմիրը կը բնտռես)։

Ուղտը հեծնողը՝ կ'ուզէ կուզ ման չիգալ։

Ուղտին հարցուցեր են. ինչու կուռդ ծուռ է. ըսեր է. Ո՞ր տեղս չիտակ է։

Ուղտը ոլքան էլ սատկի՝ կաշին մի խշաբեռն ա. (Ե)։

Ուղտին ասին. աչքդ լիս (լոյս), քեզ քուռակ եկաւ. ասեց. — ինչ անեմ որ իմ բեռը ինծանից վեր չի ընկնիր (չինջնար). (Ե)։

Ուղտի ձեռքով փուշ քաղէ. (Ե)։

Ուղտին փուշ ա հարկաւոր, վիզը թող ծռի. (Ե)։

Ուղտին քանտրրպազութիւնը (ճանապազրդ) մազէ կամրջին վրայ կ'երևնայ. (Ե)։

Ո՞ւմ ասես ում. հազար շուն հազար գէլ կայ, որ ոչ գիր գիտեն, ոչ գրի զօրութիւն. (Ե):

Ում աղէկութիւն ըրիր, անկէց զգոյշ կեցիր, որ չարիք չընդունիս:

Ում ասացի իմը գու ես, ասաց, իմ գլուը գու ես. (Ե):

Ո՞ւմ գլուխը ծեծենք. (Ե):

Ո՞ւմ խօսքը անցուկ կ'ըլլայ. – Հարուսային ու գեղեցիկին:

Ում որ շատ էր կորեկը, սա նրա հաւը գարձաւ. լաւ կերակրեց նորեկին, բայց շուտով մորթեց կերաւ:

Ում սայլը նատի, անոր խաղը կը կանչէ:

Ո՞ւմ սարդն ա թէ, քարը-քարի վրայ չիկանգնիլ. (Ե):

Ում քոյր ես բռնում, հասարակաց տունն է սիրում. (Ե):

Ունևորին շատ բարեկամ, չունևորին չիք բարեկամ:

Ունիմ Աստուած, չունիմ գարտ:

Ունիս նէ կ'ուտես կուշտ կուշտ, չունիս նէ՝ կ'ելնես գռնէ գուրս:

Ուն ունի բուն ունի, կաքուի պէս կտուց ունի:

Ունիս պլիկ բաղարջ, իմ եարը գուն ես. չունիս պլիկ բաղարջ, իմ եարը կամ գլը գուն ես. (Ե):

Ունիս՝ գուն ես. չունիս՝ շուն ես. (Ե):

Ուշ գտայ, շուտ կորուսի:

Ուշ եկաւ, դէզ տռնկեց:

Ուշ եկողին պաղ ապուր. ապուր չի կայ թան ապուր:

Ուշ եկաւ, շուտ առաջեց։
Ուշ եկուր, անուշ եկուր։
Ուշ թող ըլլայ, նուշ ըլլայ։
Ուտելն ու պահելը աղբար է, մանաւանդ պահելը։
Ուտեմ տենդիմ, չուտեմ տենդիմ. լաւ է ուտեմ տենդիմ։
Ուտեն որդիքը, վճարեն հոգիքը։
Ուտես չուտես, կաղպարդ էտ է։
Ուտէ որդին, վճարէ աղքատ հոգին։
Ուտողը խև չէ, բրդողն է խև. (Պ)։
Ուտողը չէյտէ, բրդողը (փշրողը) գիտէ։
Ուր լոյս՝ անդ անշուշտ և ստուեր։
Ուրագն իր դեհն ա տաշում. Ծառն իր տակին ա շուտադ անում (շուք. Ե)։
Ուրագը Մշտ իր կողմը կը տաշէ։
Ուրագն իր կոթը չի տաշեր։
Ուրախ ալ երթայ մարդ, չի պէտք է բայց ուտելու. (Պ)։
Ուրախութենէս աշխարք իմն եղաւ։
Ուրախութենէս լերդս պատռեցաւ, (Ե)։
Ուրիշին աչքը՝ քեզի լուս չի տար։
Ուրիշին աչքին ցաւը, իրեն կրունկին ցաւը մէկ է։
Ուրիշին բղուղ առեր է, ինքը խափխ։
Ուրիշին զաւակը քեզի որդի չըլլար։
Ուրիշի տոպրակին վրայ զռալ չըլլար։
Ուրիշին ձեռքովը փուշ քաղէ։
Ուրիշին ձեռքովը օձ ալ բռնես, քեզ մեղքըցիր։
Ո՞ւր կապեմ ձիս. – լեզուիս կապէ։
Ուր որ հրաւիրեն՝ պատուով գնա՛. բայց երկար չի կենաս։

Ուր որ յուսայ տեղ կայ, հոն ամէն բան կը գըտնուի։

Ուր տեղ շուն մը գզուի, հոն կը գտնուիս։

Ուրախութենից մազն է երկենանում, տրտմութենից եղունգը։

Զալապու հաւողն ա։ գու էլ կէր, էս էլ։ (Վ)։

Զալ օձը տեսնողը, չալ չաթուից (խատուտիկ տալ փայտ) կը վախնայ։ (Ե)։

Զամիչը՝ խատխատ, մեղրը մատ մատ։ տեղն պապրասպ զատ չինինայ։

Զամիչ կը բնտուէս։

Զառնէ Աստուած մարդուս ահը սրտէն, ամօթը երեսէն։

Զարը բարուոյն հակառակ է։

Զարին չար հատուցանել, ամէն մարդ կ'ընէ։ չարին բարին հատուցանել՝ մեծահոգին կ'ընէ։

Զարին չարեկն ալ կայ։

Զարիք ընողն՝ իրեն կ'ընէ։

Զար խօսեցար՝ կը չարչարուիս։

Զարոց՝ ճարտար։ բարոց՝ տխմար։

Զարը սրտէն՝ չարիքն ըղեղէն։

Զափաւորն է զարդ, էւելին՝ թակարդ։

Զափէ չափէ՝ տպա ձեւէ։

Զափով սիրէ՝ ատելը կայ, չափով ատէ՝ սիրելը կայ։

Զաւտալու բանին մի հաւատար։

Զգործող ձեռքը, հաց ալ թող չուտէ։

Զեկան չուզեցին, մարս ալ չտուէց։

Զեմ գիտեր ո՞ր սի պուճախն է (տաք)։

Զեմ ուզեր ճէպս ձգէ։

Զ զարնելդ ինտոր է յայտնի, որ քարի մեծին ես վազում։

Զէ՞ որ մեր արտին սխտեան է։

Զէր տեսեր պատէն 'ի կախ, յանկարծ տեսաւ ճակատէն 'ի կախ. (օրինակ ագահի)։

Զբլթը բբլթը փապուճներ, ոսկեջրած նալչաներ։

Զբլլար որ մէկ մարդ իր մատը իր աչքը խօթէ. (Ե)։

Զբխրատեցուցած՝ չի համբուրիր (այնչափ շատ են որ)։

Զբծնած տղուն անուն չեն դներ։

Զբծնած տղու զգեստ չեն կարեր։

Զհատած տեղդ մի ձգտիր։

Զհատած տեղիդ, ատգիտու գին պառկէ։

Զհաւնած քարդ, աչք կը հանէ։

Զբճանչցած մարդուդ հետ համարձակ մի վարուիր. վասն զի սրտին խորութիւնը չես գիտեր։

Զբրուր մարդը (շուարած), լեզուն երկար կ'ըլլայ։

Զի զարնուի խոզու քիթը ոսկու վերիկա (օղակ. Պ)։

Զի ըսեր թէ՝ աչքիդ վերևը ոնք կայ. (Ե)։

Զինկեանէին տունը՝ մուսանտարա բնտռել կըլլայ։

Զի ուղեր որ արեգակը մէկին վրայ ծագէ։

Զի ցանած տեղէն կը քաղէ։

Զինքը՝ սատանան է։

Զոր աղբը քառասուն կտոր պիտի ընես։

Զոր ցեխը մարդի փեշին չկպչիր։

Զորս ոտքդ մէկ բերիր ու ըրիր (խօսեցար)։

Զորս աչքը ա՛լ շատ կի տեսնու, քան զերկուսը. (Պ):

Զորս պատը չորս ականջ ունի, ծածուկ խորհուրդ դուրս կը տանի:

Զուանին վրայ աղուր փռել է առ խօսքը:

Զուզունաղուն ճոթը ոքուսն է (ոքալն է. Պ):

Զուլը չուլին բարև կու տայ, կամ հայտար կու տայ. (շատ հին է):

Զում (մինչև) գժոխք նշանց չիտաս, արքայութեան չի տիրանայ:

Զում (գըզբլՃըգ) կերած արջի է դարձեր:

Զունևորութիւնն ալ մէկ օրուան պէտք եկաւ:

Զունիս փող, մտիր հող:

Զըսեն թէ էշ է, թող ըսեն թէ գէշ է:

Զփորձած ձիու ետիցը մի անցնիլ:

Պահէ դարմանը, կու գայ ժամանակը:

Պահէ թուռշի գիր:

Պաղ պաղ ջուրեր ո՞ր կ'երթաս. — խավուրմայլին գէմ կ'երթամ:

Պանիրը շանը տիկն են լեցուցեր:

Պանիր ու հաց կերաւ գնաց:

Պանիր ու հաց, սիրտը բաց:

Պառաւը ժամ գնաց, խչիլը (չէօփը) աչքը մըտաւ:

Պառկած շանը քար մի գցիր:

Պառկէ խեղնի՝ լուսուն շատ կայ:

Պասը անկաճ ունի:

Պաս ուտեմ պաս. ան ալ թանէ՞ ապաս:

Պատանքը պատռեց:

Պատառի բարեկամը՝ միշտ խռով պէտք է կենայ:

Պատերն եղաւ։

Պատէն խնողը, պատէն խնողին հալէն կը հասկընայ, թէ որ գլխէն անցածն յիշէ միտքը գայ։

Պատէ պատ կու տայ։

Պատն ականջ ունի։

Պատը ծուռ է, կովը կաթ չի տար։

Պատիւ չէ, պատիժ է։

Պատուէ՛ սուրբերը, բայց վախցի՛ր ալ։ (Պ)։

Պատրաստած զգեստին ոսկի կոճակ։

Պատրաստած փորձանք։

Պարապ մնալէն, դատարկ աշխատիլն աղէկ է։

Պարապ ձեռքով աղայի դուռն երթաս, աղան քուն է կ'ասեն. ձեռքդ մէկ ընծայ ունենաս, աղա ներս հրամմէ կ'ասեն։

Պարապ շուներուն աղ կու տայ։

Պարապ տոպրակով ձին չի բռնուիր։

Պարզ երկաթը պողպատ չըլլար։

Պարզերես գիմացս եղար։

Պարը բոլորվեցաւ։

Պար մնողը պէտք է խաղայ։

Պարկով լո՞ւս բերիր, կամ՝ լո՞ւս է բերեր։

Պարնի գլխուն հող չեն ցաներ. (Ե)։

Պարտականի երեսը սև կ'ըլլի, լեղուն՝ կարճ։

Պարտք ունեցողը չմեռնիր, այլերեսը կը գեղնի։

Պարտք չունիս, գնա երաշխաւոր եղիր, գործք չունիս՝ վկայ եղիր։

Պարտքէ չվախցողն, Աստուծմէ ալ չվախնար։

Պարտքը՝ կրակէ շատիկ է։

Պարտքը հաղարի հասաւ, հաւի միս է ուտելու։

Պաքը պաք է, պարծենալն ալ (կամ պագնելն ալ) պագ է։

Պաք կացանք, պաք կացանք, ագռաւի մեռելի զատիկ արինք։ ('ի զուր աշխատ եղաք։ Ջ)։

Պզտիկ մարդիկ՝ մեծ մեծ երազներ կը տեսնեն։

Պզտիկը մեծին էշ նահատակ։

Պզտիկ է, բայց Ճզտիկ է։

Պզտիկէն ակսէ որ մեծին հասնիս։

Պզտիկ մը դուն, պզտիկ մը ես։ վերի դին դուն, վարի դին ես։

Պզտիկ ձիուն կարճ էօզէնկի պիտէր։ (Պ)։

Պէլքին ցաներ են՝ չէ բուսեր։

Պէ է շան սուրաթ։ տուիր աւետարանը՝ առիր թամպուրագ։ չալէ՛ նայիմ չալէ՛։

Պէրէքէթ վէրսին գոմշուն լանը Ճակտին։

Պէտք է մահ սպառնալ, որ ջերմը յանձն առնէ։

Պիղ կը խօթեն, հանգիստ չի կարնար կենալ, վեր կ'ելնայ։

Պղեն ծայրին բռնցկով զարնել չըլլար։

Պլպլողն՝ ամէնքին խարապն է։

Պղինձը վեր ինկաւ՝ չկոտրեց, ձէնը վեր եկաւ։

Պղտոր ջուրին մէջ ձուկ բռնելը դիւրին է։

Պոչերնէս բռնուեցանք։

Պոչը հանկուրցէ կամ կապէ (Ճամբու դիր)։

Պոպիկ սատանայ։

Պուհան (բու) ալ իր տանը մէջ պիրով (քաղաքաղեռ) է։ (Պ)։

Պուտկի եռ (եռալը), տէ կէր կնկան խեր։

Պուտուկը ամէն մարդ կը շինէ, վարպետութիւնը ունկին է (խուլի)։

Պուտուկ կ'ասի։ Տակս ի լինք ոսկի ի։ — Շերեփի կ'ասի։ Ես իւսա՞ կուգամ։ (Ե)։

Պուտուկը պրտկի զարնես, մէկը չէ մէկը կը կոտրի։

Պտուկը պակին ըսեր է, սէ՛ երես. – սխտորգուշն ալ որ լսեց՝ երկուսին ալ վրայ թքեց։

Պոյդ պոյախանան, գլուխդ սալախանան։

Ջահերը վառեր է. (հարբած)։

Ջաղացք մոնողը պէտք է ճերմկի։

Ջաղացքը ան բանը կ՚աղայ, ինչ բան որ մէջը լեցընես։

Ջաղացպանը ալեւորտ կը լինի։

Ջաղացքը երկու քարէն, սէրն երկու գլխէն։

Ջայլամի պէս բռնելու ըլլան նէ, գլուխը ծակ մը կը պահէ ու մարմինը գուրս։

Ջարդուեր էք հա՛։

Ջորեցա՞ր. Ջորին թանկ է. (կամ սարերը կ՚ըլլայ)։

Ջուահիրն ու ալմասը շատ ջուհար ունի և գին. ինչ անես որ ներանով տուն շինել չի կարելի. (Ե)։

Ջուլհակին՝ (կտաւագործ) պատանք չըլլար։

Ջուխտ աղբերով մի շալվարի վրայ կտորում են (կը կռուին)։

Ջուր է մաղում։

Ջուրը գլխէն է պղտորեր։

Ջուրը գլխէն կը կարի։

Ջուրը գնացած ճամբան չի մոռնար, (կամ կ՚երթայ)։

Ջուրը գնում է, աւազն է մնում։

Ջուրը գնաց, ծարաւ եկաւ։

Ջուրը գցես՝ կ՚ընկի, կրակը գցես՝ երեսը եա չի գարձըներ։

Զուրը գարիվեր չի գնալ։

Զուրը եղած տեղը կը ճապկըտի. (կը տարածուի)։

Զուրը իյնողը անձրևէն (կամ թաթաւէն) չի վախնար (կամ կը վախնայ)։

Զուրը իր ձկանն ա պահում, հաւը իր ճուտին մուխայէթ կենում. (Ե)։

Զուրը կը գագրի, անոր լեզուն չի գագրիր։

Զուրը մէկ տեղ մը շատ մնայ նէ, կը հոտի։

Զուրը չի պղտորած, ձուկ չի բռնուիր։

Զուրը չի պղտորած, չի ծորանար (չի մաքրուիր)։

Զուրը չի տեսած, կօշիկս չեմ հանի. (Պ)։

Զուրը պատիցը վերև մի տանիլ։

Զուրն եկեր ջաղացքն է տարեր, դու ջախջախը կը ընտրես։

Զուրի ձայն կու գայ քէզի։

Զուրին եխտ գալը կամ շատ վազելը՝ կարելու նշան է։

Զուր խմելուն՝ օձն որ օձ է, չի խեթեր։

Զուր կայ՝ կամուրջ չկայ. կամուրջ կայ՝ ջուր չկայ։

Զուրն անուշ է քան գինուան գինին։

Զուրն իյնողը՝ ձեռքը փրփուրներուն կը նետէ։

Զուրն իր ճամբէն կը գանի. (Ե)։

Զուրն կու գայ Սուլէյմանայ, քրդին տղան է սատանայ. ան տէրտէր բուրգն ու բամպակը, կ'ուզէ հայանայ, կ'ուզէ թրքանայ։

Զրի ճամբայ չինել։

Զրին մէկ կը խօսի, չամչին երկուս։

Զրին չըմօտիկցած՝ մի բոպիկնար։

Ջրին տարածը, ծեղը կը բռնէ որ ազատի։
Ջրի պէս երկան արև ըլլաս, վազես վազես չը-
պարպիս։
Ջրհորը չորնալէն վերջը յարգը կը ճանչցուի։

Ոանչպար մարդը լաւ ա՝ քանց չինօվնիկը։
Ոէսի վրէն լոս ի կաթէ, ոՎ տիսէ գզիրը. (քե-
հեայի վրայ լուս է ինքը. ոՎ է տեսեր գզիրը)։

Սալտան ծախեր է. (ցնդեր է)։
Սախաթ (պակասաւոր) մարդը կենօքը աղէկ
չըլլար. (Պ)։
Սահմանք քաջաց զէնն իւրեանց։
Սայլը կոտրէլէն վերջը, ճամբայ ցուցնող շատ։
Սագը հաւին գրուական տալ. (Պ)։
Սանթուրի մէջտեղի թելն է։
Սառած օձն տաքցընես՝ առաջ քեզի կը խածնէ։
Սատանային ալ իր բաժինը տալու է։
Սատանայ կտրեցաւ (մեր մէջը)։
Սատանայ չէղած, մարդ կը խաբէ։
Սատանան այնքան սոսկալի չէ, ինչպէս որ նկա-
րած է։
Սատանան ալ պատին տակը շատ մալ ունի։
Սատանան ամէն բանի մէջ իր պոչը կը դնէ։
Սատանան առնէ մեղքը .... բայց։
Սատանան ոչ մեռեր է, ոչ կը մեռնի։
Սատանի իսկ իրա տուն է. մանի էլ՝ դուրս էլ
գայ։
Սատանէն իր պոչը մի բանում չխառնի, մինչև
գու խաչը հանես, նա իրան բան կը հոգայ. (Ե)։
Սատանի հաւկիթ կը լմանի։

Ատանի ձին է հեծեր։
Ատանին ականջը խուլ ըլլայ, ամմա . . . .
Ատանին գաս կու տայ։
Ատանի չէքիճ։
Ատանին չարբիսը մէկ օր մը կը մաշի կամ կը ծակի։
Ատանին պառկած տեղը գիտէ։
Ատանին պոչ կը դնէ։
Ատանին տրեխ կը հագցընէ։
Ատանի քամիի պէս կորաւ։
Ատկած էշին գին չիհանիր, կամ ըլլար։
Ատկած ձի, կամ էշ կը բնտռէ որ նալերը քաշէ, կամ հանէ։
Ատկած կովը կաթնոտ կը լինի։
Ատկած հաւ կը բնտռէ, որ պոպկէ։
Ատկած ձիուն նալն են ման գալիս. (Ե)։
Արդիսը մուխ կը քաշէ, քեզի ինչ։
Արեւու տեղ՝ ձորերը կ'որոտան, կամ ձորերն են որոտում. (Ե)։
Աղ ըլլէր, փուլ կը դար. ծով ըլլէր՝ կը պակսէր (Հայոց աղդը. Ե)։
Աղը փլաւ, փոսը ծածկեց. (Ե)։
Արէն սարայն է եկեր, սարայտարը գուրս կ'ընէ։
Աղ ու լեռ փուլ կու տար (կը փըլցընէր)։
Արի անհոտ ծաղիկն էլ իրան տեղը իրան փառքը վարդի հետ չիփոխիլ. (Ե)։
Աղ ու ձոր, իրիցու փոր. որքան որ տաս, կ'առնէ՝ տուր տուր։
Աղ ու ձոր՝ նորա համար մէկ է։
Արտաքին էլ ա մեր դուռը գալիս, փողատէրն էլ. (Ե)։

Սափրիչը մազով չի շատանար. ստակ կ'ուզէ:

Սեղան գնելուն գայ, կամ հասաւ, ժամուրն ելլելուն, կամ արձակուելուն:

Սերը սուրն է կերեր, թանը մոլորը:

Սերտ բարեկամը շատ գանձի հետ մի փոխեր:

Սերկևիլը թուզ չի բերեր, արջի ձագը՝ առիւծ չըլլար:

Սև աչքը մօրուց է պէտք. ծարուրածը շուտ կ'անցնի:

Սևագլխին անէծքը քարին որ դիպչի, քարը կը պատռի:

Սև ըլլայ տէ պօլ ըլլայ:

Սև սիրտը գիտէ. (Պ):

Սևը նեռս, Ճերմակը դուրս:

Սև ձուքը կ'ասեն գեղ է. որին կ'օգնէ, որին չի օգնում:

Սևին երեսը, շամին շէքերը ատել կու տայ:

Սևին սատանն ինչ ընէ, խևին խրատն ինչ ընէ:

Սևին վերև Ճերմակ չըլլար:

Սև կովը վար ընկաւ, դանակաւորը շատցաւ:

Սև հաւ են եղեր, կանանչ հաւկիթ կ'ածեն:

Սև հաւը՝ ուր երթայ նէ, սևի հաւկիթ կ'ածէ:

Սևն առաւ՝ սուգը մոռաւ:

Սև ու գեղին, ով որ տեսնի պատռի լեղին:

Սև ու մուրթ օրեր:

Սև սիրտ՝ սպիտակ ատամ:

Սև օձը տեսնողը, սև գաւազանէն կը վախնայ:

Սէլը գնաց փէտի. բերուց՝ բերուց. չբերուց. ինքը փէտ ա ու փէտ. (Ե):

Սէիր անողին դիւրին կը թուի:

Սէրը աթարն է կպեր:

Սէրը՝ սիրով կ'ըլլայ, քաշկըռտելով բան չի գառնալ։
Սէրը սխտոր է բուսեր։
Սէրթ տավարն կապով զապթ կ'անեն. (Պ)։
Սէրը Ճամբայ չունի։
Սիմ կըսեմ՝ Սիմաւոն կը հասկընայ։
Սիմ Սիմ՝ Սիմաւոն, ըսէ խալըսէ։
Սիրելի և իմաստուն մարդուն ձեռքէն ինչ առնես՝ շէքէր է. ատելի և անգէտ մարդուն ձեռքէն մեղը առնես՝ լեղի է։
Սիպտակ միսը (մարմինը) երևնալուց, սև կարկատանը լաւ ա։
Սիրէ ինձի, սիրեմ քեզի։
Սիրտս կը ցաւի. — հանէ ռաֆը գիր։
Սիրտդ նեղանայ նէ՝ էալըն վազէ։
Սիրտս սուֆրա չէ՝ որ ամէն տեղ բաց անեմ։
Սիրտս վրան տաք չէ։
Սխտոր կերած չեմ, որ բերանս հոտայ (հոտի)։
Սխտոր քացախով ուտես։
Սխտորնոցը սէր է բուսեր, էֆինոցը մաղտանոս։
Սկսած գործդ կիսատ մի թողուր։
Սկսիլը գործին կէսն է։
Սոխակը վանդակ փակողն է իր անուշ լեզուն։
Սոխակը ոսկի վանդակը գրեր են, դարձեալ ամի հայրենիք կանչեր է։
Սոխակին համար ո՞ր այգին կ'ըլլայ ըլլայ՝ իր բնակարանն է։
Սոխին անուշը չըլլար։
Սոխի գացինք՝ պարզերեսիկ դարձանք։
Սոխի տեղ սխտոր են ծեծում. (Ե)։
Սոխն ու սխտորը հաշիւ ընողը, խաշ չի կարնար ուտել։

Սոխ ու հաց՝ պարզ երես։

Սոխ չեմ կերեր, որ սիրաս էրի. (կակըծի, ցաւի)։

Սորվողին չի զարնուիր, որ ա՛լ մեծ բռնուի քան զինք սորվեցնողը. (Պ)։

Սուած մարդը չի մեռնիր, աչուընները կը դեղնի։

Սուածին խղճմտանք չի լինիլ։

Սուորին մի պակսեցըներ, անսուորին մի սորվեցըներ (վարժեցըներ)։

Սուորութիւն հնացեալ ջանայ լինել երկրորդ բնութիւն։

Սուորութենէ դուրս խալտընցողը՝ (սխալողը,) զամէնքը կորսունցնու. (Պ)։

Սուրբ Աստուած չէ որ, իրեք դարպայ (անգամ) կրկնեմ. (Պ. և Խ)։

Սուրբ ես նէ՝ զօրքդ, վարդ ես նէ՝ հոտդ։

Սուրբ սիտոր, անարատ գիտոր։

Սուսիկ փուսիկ, մէկ եղիկ, մէկ ալուրիկ։

Սուտը կը ոտանաւորի, բայց չերթար։

Սուտը ոտք կ'ելլէ, ամա չ'երթար։

Սուտը մէնդիլ չունի։

Սուտը ջարդէ։

Սուտը սամուր մուշտակ ըլլայ նէ, մարդ վրան չառներ։

Սուտը սատանային կը վայլէ։

Սուտ խև եղիլ է, պասը կ'ուտէ։

Սուտ խօսողին՝ տունն է երեր, վայեր կանչէր մարդ չիմացեր։

Սուտ հիւանդ է եղեր, վանքին հաւերը կ'ուտէ։

Սուրբ Գէորգ կամ Սարգիս լսեր է, բայց ո՛ր քարին տակը եղածը չի գիտեր։

Սուրին վէրքը կ'անցնի, լեզուին վէրքը չանցնիր։
Սուֆրայ չեմ որ բացուիմ։
Ստակ կռնակ, կը բանայ ամէն կղպակ։ (ստակը՝ կը բանայ ամէն կղպանքը)։
Ստախօսի շահն այն է որ ուղիղ էլ ասէ՝ չեն հաւատում։
Ստակդ համրէ որ հաշիւ սորուիս, զգեստդ կոկ պահէ որ քալէլ սորուիս։
Ստակը՝ մութ տեղը լուս կու տայ։
Ստակը՝ ստակ կը բերէ։
Սրտին ուզածը ըսողը, սրտին չուզածը կը լսէ։
Սրտիդ սիրածը՝ տեսօք է։
Սրտի սիրածը՝ գեղեցիկ է աչխարհքումը։
Սրտէ 'ի սիրտ ճամբայ կայ։
Սրտերը ընկաւ տեղը, մատներն ընկաւ էղը։ աքլորին բարձրին գեղը։ (Ե)։
Տրկի մը խուռնկ կը բերէ, չորս տկի հոտ կը ձգէ։
Օշկրի սօլը՝ հին կ'եղնի, (ոտնաման կարողին՝ ոտնամանը հին կ'ըլլայ։ Ա.)։

Վազած ջուրը մի կտրեր։
Վազող ձիուն՝ գլխուն չեն զարներ։
Վազող ջուրը կը դադրի, անոր լեզուն չի դադրիր։
Վազուկ ջուրը՝ աղտ չի վերցներ։
Վախեցիր անկից՝ որ չվախնայ Աստուծուց։
Վախկոտ մօր կաթ խմեր ես։
Վախկոտը՝ մէկ փոսուռայ (կայծոռիկ) տեսնէ, հառայ կտայ (պոռալ) թէ կրակ կայ։ (Ե)։
Վախտը վախտին։ թէ չէ, ժամանակն անց ա կենում։

Վախցիր վար նայողէն, կնկան աւելորդ զարդէն։
Վաղ վեր կենողի խամրաթը երկում է. ուշ վեր կենողինը՝ մէկ։
Վաղ վեր կենաս (ելլաս) ինչ օգուտ. Աստուած պիտի յաջողէ։
Վայ ան եղին որ գետինը կի վօթի (թափի. Պ)։
Վա՛յ ան մարդուն որ խելքը պակաս է։
Վա՛յ կաշուդ։
Վա՛յ կիրիս. (վա՛յ խեղճ վիճակիս, կամ վա՛յ ճակատիս գրին. Խ)։
Վա՛յ հախին, վա՛յ նը հախին. (Ե)։
Վա՛յ մէջքս, թագուոր։
Վաճառականը որ կոտոր ելնի (միւհլիւզ), հին տաւթարներն է քրքում։
Վա՛յ միամտին, որ դատի ընդ երկմտին։
Վա՛յ միոյն։
Վայրահաջ է։
Վանքին հաւերէն ուտող խեղթերէն է։
Վառած ճրագը մի՛ մարեր. (տուն մի՛ աւրեր)։
Վառած ճրագներս չանցընենք (չմարենք)։
Վատրկած ունին մի։
Վատ բանը վատից է դուրս գալի։
Վատ լեզուն ածիլիցը սուր է։
Վատ համբաւը շուտ տեղ կը հասնի։
Վատուժ շունը՝ վազան կ'ըլլայ։
Վատ խօսքը՝ չանցկացած փողը՝ իրենց տիրոջն են։
Վատ տղան գետնիցը ցախ է ժողվում, այլոց օճախն է վառում։
Վար աչէ, (նայի Աստուած) ու վեր քաշէ. (Կ)։
Վարդապետին ասին. Որդիդ մեռնի. – Ասաց. Ես որդի չունիմ, համա լաղապդ լաղապ էի. (Ե)։

Վարդը առանց փուշի չըլլար, մարդը առանց դէշի, կամ սէրը առանց վշտի։

Վարդը առինք, փուշին կրակ տուինք։

Վարդը սիրողը՝ փուշն ալ պիտի սիրէ։

Վարդ ժողվողը ատէպ անոր փուշերէն կի խայ-թուի։

Վար էյնողին ձեռքէն բռնես, Աստուած ալ քու ձեռքէդ կը բռնէ. վար էյնողին ոտքով զար-նես, Աստուած ալ գլխուդ կը զարնէ։

Վարձք չի ստանար, պարապ էլ չի մնար։

Վարձքդ կատար։

Վարձքը (շատ անգամ) մեղք կը ծնանի։

Վարպետ բժիշկ նա է, որն որ ցաւիդ դարման կ'ընէ։

Վարպետին ալէկը՝ աղբանոցը պառկած կ'ըլլայ։

Վէր աշեմ յօնքս ես, վար աշեմ պռկունքս ես. քեզի ի՞նչ ասեմ ես։

Վէր թքնեմ երեսս ա, քաշէ թքնեմ միրուքս ա. (Ե)։

Վէր կը քաշեն հիմա։

Վերինը գիտէ. (Աստուած գիտէ)։

Վերն Աստուած, վարն ստակ։

Վերջը կ'երթան հալիսը փէշերս վեր վեր կը ձգեն. (կը հայհոյեն)։

Վերջս բուրդ է։

Վէր (թէ) քեզի ասիլ եմ՝ վեր (թէ) պազարը, մէկ է. (բերանդ բաց է. Պ)։

Վէգ (կոճ) չունի՝ դեռին կը սրբէ։

Վէքիլ՝ զիմ քէսէն չի տեսներ, իլլէ իրն. (Վ)։

Վիզը չուան։

Վիճաբանն է, երկան լեզու՝ կարճ ուղեղ։

Վնասին կէսէն դռանալը վաստակ է։
Վշտացած սիրտը՝ խօսուն կ'ըլլայ։
Վրայ քսուած (բռնի) հաւատքը, հաստատ չըլլար։

Տաղին ինչ պէտք է ոսկի սանտր։
Տալախ կերած կուտիկ կը լմանի։
Տալնուկ քեզ կ'ասեմ, հարսնուկ դու հասկըցիր, կամ իմացիր. (հարսը էրկան քրոջը տալ կ'ըսէ. կեսուրին բերնէն է աս խօսքը)։
Տախտակը պակաս, բամպակը նօսր, խեւն ալ կ'ըսէ՝ էս ալ հոս։
Տախտակը պակաս է։
Տախտակ ունի՝ գամ չունի, կերած մեղրը՝ համ չունի։
Տակէն մտաւ, վրայէն ելաւ (մխեց)։
Տակը պուլղուր կ'աղայ։
Տակին սևն ու ճերմակը, ջուրը անցնելուն յայտնի կ'ըլլայ։
Տաճիկ կարծածնիս՝ խաչը ծոցէն ելաւ,
Տաճիկ մարդ է։
Տայմա ժիր էս, չէն տանտէր էս։
Տանը խօսքը, դուրսը չանցնիր։
Տանը տիրոջը շահատը գզիրն է։
Տանը տիրոջը բանին չէն խառնուիր։
Տանձ էր նէ հատաւ, խնձոր էր նէ կարմրեցաւ։
Տանձը ընկեր՝ կոթը ծառին։
Տանձը ինձի, խնձորն ինծի. ձեռքս վրան սերկեւիլի։
Տանձը՝ ծառէն հեռու չիյնար։
Տանծի պէս ապրանք ունենամ. չիծախուի նէ՝ էոր կ'ընեմ։

Տանձն ի՞նչ ըրաւ որ՝ կոթն ի՞նչ ընէ։

Տաներիցուն՝ օրհնեա՛ ի Տէր զբլլար։

Տաշած քարը գեռինը չի մնար։

Տաշտ ու մաղը կախեցին (խեղճին) միսաֆիր-ները։

Տաշտումը՝ հաց ունենամ. կարասումը՝ գինի, չուալումն՝ ալիւր. հերն անիծած որ չիփ չը-պլախ էլ ըլլիմ անիմ։

Տապախը հաւնած կաշին առած ատենը գետ-նէ գեռին կը զարնէ։

Տապնի վրայ ընկած մարդ. (շուտով ծերացած. Պ)։

Տասը գլուխ ունենայ չի ազատիր։

Տասը խօսք գիտես՝ բարի. ինը խօսէ՝ մէկը պահէ։

Տասը մատս մոմ ընեմ առջևը վառեմ, դարձեալ բան մը չեմ ըրած։

Տասը չափէ, մէկ ձեւէ։

Տարեկան որթիկ, կ'երթայ աղբուր ջուր կը խմի։

Տարի կայ աւուրն է պահում. օր կայ՝ տա-ռուանը։

Տարին մի զատիկ, էն էլ նաւակատիք։

Տարին չանթնին (չէթէն, ցանկ) տակը կապած չէ. (Պ)։

Տարով էլ որ խօսաս՝ տուտը չի հատնիլ։

Տարոց տարի, հերու լաւ էր քան զաս տարի։

Տաւուլին ձայնը կէս գիշերէն եաև կ'ելլէ։

Տափակ խանտալա (մշուկ. տակեանց գործող)։

Տաք ապուր կերայ, բերանս էրեցաւ, մածու-նէն ալ կը վախնամ։

Տաք հայը փոխ է. (Պ)։

Տեղին տէր էս, տաքցողին տէր չէ՞ս (տաքցընելուն):

Տեղս քարոտ է:

Տեղ կայ սովի, տեղ կայ ծովի:

Տեսաւ՝ հանակ. չտեսաւ՝ կէօրչէկ:

Տեսնես որ ջուրը քեզ հետ չիգալի, դու նրան հետևիր. (Ե):

Տես որ անոր ջրով չլուացուիս:

Տզրուկը օձին նայեցաւ՝ երկնցաւ, մէջտեղէն երերկու ճղքեցաւ:

Տէվէին հարցուցին վիզը ի՞նչու ծուռ է. - Ըսաց. Ո՞ր տեղս շիտակ է որ վիզս շիտակ ըլլայ:

Տէլ (գեռ) չէր ելեր դաշտ դմբոց, շոտ ելաւ թորուան քթոց. (Վ):

Տէլ չէլէ խաւ (գեռ չէ եղեր հաւ), կը թռնի թառ. (Վ):

Տէլ չէլէ՝ կը խօսի. (Վ):

Տէմիրճիին տունը խաչէրկաթ (կամ մաշա) չի գտնուիր:

Տէ՛ սիրտ բեր որ դիմանայ:

Տէվէք կռուան, իշուանք խեղդան:

Տէվէն թապուտով կը տանին, դուն ալաճա հորթը կը բնտռես:

Տէր ունեցողին տէրն է պահէր, անտէրին գալն է կերեր:

Տէրը տարածին կ'ափսոսայ, գալը մնացածին:

Տէրը սիրողը՝ շանը ոսկոր կու տայ:

Տէր տէր արա՛ գեղը գցի, թէ չը ապրի, գետը գցի. (Ե):

Տէրտէրը ամէն օր գաթա չուտեր:

Տէրտէրը տունէն ըլլայ նէ, մասը պօղ կ'ուտեն:

Տէրտէրին կաշին թամբուկին վրայ են անցուցեր. քանի որ զարնեն՝ տուր տուր կ'ասէ։

Տէրտէրի ասմունքը, միշտ է ուղմունք։

Տէրտէրին տունը զէրտէ, բոշային տունը ֆէրտ ջրլլար։

Տէրտէրին փորը՝ վայ վայի պնակ է. ինչ որ դնես՝ կ'երթայ։

Տիտիկ ըրէ տիտիկ ըրէ, եռքի բանը մտիկ ըրէ։

Տիրացուն տէրտէրին այնպէս կը նայի, ինչպէս ուղտը պայտառին կը նայի։

Տիրոջը փողն է գնում, ծառային հոգին է դուրս գալում։

Տիւմանը մեծ սարի (լեռ) գլխէն էրը պակսեր է։

Տկլորի մոքից օրը տասնըհինգ կաղ կտաւ էր անցկենում։ (Ե)։

Տկլորը սարը եկաւ, սարի անունը պետնամ ա՞րաւ. (Ե)։

Տխմարին հետ ճամբու ընկեր մ'ըլլար։

Տղաղ մեծցաւ, քեզի մեծ ցաւ։

Տղայ մարդ եղիր՝ գլուխ պատռիր։

Տղան բախտաւոր ըլլայ, դալը մորմէն կ'ուտէ։

Տղան բանի գիր, դուն ալ հանէն եղիր։

Տղան մահանայ, մարը կշտանայ, կամ քնանայ։

Տղան՝ մորուն, հացը՝ հօրուն, ծեծես նէ՝ լայ, կանչես նէ՝ գայ։

Տղուն նազին թէ չես գիմանար, հետը ճամբայ մի երթար։

Տղաքն արջին մազոտ կռնակ կանչեցին. — Ըսաց. Մեծերն ըսեր են որ պզտիկներն ալ սորվեր են։

Տղուն բան գիր, յետոյ դարձիր գուն արա։

Տղին ու խևին խորհուրդ մի յայտներ։

Տղին՝ բան, տկին՝ թան, կնկան՝ տիվան, իշու՝ քէվրան, տէրտէրը՝ պաղիրկեան։

Տղին ըսին ինչու կու լաս. – Ասաց. Խօսքս կ'անցնի, անոր համար կու լամ։

Տնտես հաւատար տէս։

Տնտես, վայ քեզ. հաւատար տես, չէ նէ ծեծը կ'ուտես։

Տոպրակը թոթուեցի։

Տունը թէ և վառեցաւ, մկներուն ալ չի մնաց։

Տունը մարդ չկայ, դուռը որո՞ւն կը ծեծես։

Տունը մեր՝ բակը հաւերաց. (հաւերուն. Վ.։)

Տունը մերը, խօսքը մերը։

Տունը չկայ թանաջուր՝ ինքը կը գնայ էքէպուռ։

Տունը չունի տաք ապուր, ինք ժուռ կու գայ էքէպուռ. (իւլվանով)։

Տունն խախուտ, մահանայն կարկուտ։

Տուն չինողին ու կարգուողին՝ Աստուած կը հանի։

Տուն տանող խեւերէն է, դուրս տանողներէն չէ։

Տուն քանդողին՝ տունն Աստուած կը քանդէ։

Տուր ծնողին՝ որ կու տայ զաւկին. մի՛ տար զաւկին, որ չիտար ծնողին։

Տուր ոսկեգօտեւորին (տէրտէրին՝ իրիցկինին), մի՛ խնայեր կամ մի՛ հարցներ։

Տուին տարին՝ զատիկ չի լալ. (Ե)։

Տօ՛, լո՛գի, լո՛լո՛, քրդի տղի՞ն ալ լոլո։

Տօ ձեր տունը չը քակուի. (Ե)։

Տօնան ով, ձին ով, գայլը ով, թէխմախ (պար գալ) ով։

Տօն չէ, զատիկ չէ, խեւն հագեր է շար – շապիկ։

Յամքուլթեան մի նայիր, հրամմէ։
Յաներ են, ու չէ բուսեր։
Յանկ անողը՝ պէտք է առաջ գետինը վարի, (վարէ), յետոյ սերմն ածի. չէ նէ՝ եւլածնալ ղուրտ ու խուշ կ'ուտի. (Ե)։
Յաւ կայ կու գայ կ'անցնի, ցաւ կայ ծակէ կ'անցնի։
Յաւած սիրտը՝ խօսան կ'ըլլայ։
Յաւը իր գլուխը լիս կը ձգի, գուրս կ'ելլէ, թէ որ գու վրէդ չես գնիլ։
Յաւը կու գայ վազ տալով, ներս կը մտնէ խանթարով. կ'երթայ նազ տալով, ու կ'ելլէ գուրս մըսխալով։
Յաւը՝ քաշողը գիտէ։
Յաւոզ փորին կորեկ հացը ինաս է։
Յաւս փորդ։
Յորեկը ձուլթ կը ծամէ, գիշերը ձէթ կը վառէ։
Յուրտ է եկեր որ կամ ոտք կամ ձեռք մնի։
Յուրտը՝ աղքատը վազուկ կ'ընէ, հարուստը համալ։
Յռան կովը՝ նախրի անունը կ'աւրի. (Ե)։

Փախիր որ պրծնես։
Փախչիլն ալ մէկ քաջութիւն է։
Փակն ու բանալին՝ սովքարի (համեստ մարդու) համար է, չէ թէ գողի. (Ղ)։
Փառք քեզ փշրուկ, որ պատճառ եղար։
Փասա փուսէդ քաշիր. վեր կաց կորիր. (Ե)։
Փատէ ձի է հեծեր, չի դար (ուշացաւ)։
Փատը (ծառը) մէկ կտրելուն (մէկ զարնելով) չի իյնիր վար. (Պ)։

Փարայ ստակ, բանը կ'ընէ խատակ։

Փարայ մը տուինք՝ խօսեցուցինք, երկու կու տանք ձէնը չի կտրիր։

Փարչը՝ ջուրին Ճամբան կը կոտրի։

Փարչ ղորդողին իրեն ձեռքն է, ղուլփը որ կողմը ուզէ կը դնէ։

Փեսին անձը կամ ցոյցը՝ ղրքանչին սրտին սիւնն է։

Փէտը վեր առնես՝ գող շունը կ'իմանայ։

Փէտի որդն՝ իրանից պհամ կու գայ (կ'ըլլայ)։

Փիլաւը փստինք, մենք հոս կը նստինք՝ ղէնչէ։ (Պ)։

Փիլաւին եղը, ամէն մարդ տեղը։

Փիճն ալ՝ իրեն կնուինքը կ'ուզէ։

Փիս ասողին, լաւ լսողին։

Փիս բանը, փիս Ճամբէն՝ էս օր ա, էգուց լիս կ'ընկնի (լոյս կ'ելլէ), ու էն ժամանակը շատ մեր լաց կ'ըլլի (կու լայ)։

Փիս մարդը զատկին ալ փիս է։

Փիս շունը՝ ոչ ինքը կ'ուտէ զխոտն, կամ ղգալին, և ոչ գառին կը թողու որ ուտէ։

Փիս շունին մէկ քարն ալ պակաս։

Փնտռած չգտածդ էր։

Փոխ ուզողին, տաս՝ մէկ փորձանք, չտաս՝ տասը։

Փնտռէ որ գտնես։

Փոխը օխտը տուն ա պահել։

Փողակեր, հողակեր։

Փող եմ տալման կամ տալիս, ինչ ճրճռում ա, կամ ես։

Փողը գնաց, բայց մալն էլ մալ եղաւ։

Փողը ձայն կը տայ։

Փողը ձեռքի աղտ է. լուացուիս՝ կ'երթայ։

Փողը անիրաւ դատաւորին շղթաներէն կը քակէ։

Փողը որ կայ՝ ժանգ ա. ձեռքի կեխա՝ էսօր կայ՝ էգուց Աստուծով մխիթարիս։

Փողը ջուլուն որ փչում ես, քեզ ո՞վ շաբաշ կը տայ. (Ե)։

Փողը չհատաւ, հաձու (հաձի) ձամբէն չբերնուաւ։

Փողը որ կայ՝ աղտ կամ կիղտ ա. (Ե)։

Փող՝ հող մին ա. (Ե)։

Փողի սիքքէն ձանչցողը, ոչ հոգի ունի, ոչ հաւատ. (Ե)։

Փողին սուտը, խօսքին սուտը տիրոջն է։

Փորդ հօ բերնիցդ բարձր չի. (Ե)։

Փորը՝ հորի նման է. ինչ որ թէ վերածես՝ չի երևում. (լեցընես՝ չերևնար)։

Փորը ցաւ ունի. (նենգութիւն)։

Փորը փորիցն շահ չի. (Ե)։

Փորին մէջ այբ մը չկայ, ասուածաբան է էղեր։

Փորձած սատանէն լաւ է՝ քան անփորձ հրեշտակը։

Փորձանք չի գար մարդուս գլխին, թէ որ ձակատը չէ գրուած։

Փորձանքի կէս ձամբիցը եա դառնալը խելօքութիւն ա. (Ե)։

Փորձեալը կրկին փորձել անմտութիւն է։

Փոր մը հացը՝ հոր մը հաց կը կորցընէ։

Փորցաւ ընկածի պէս (եղածի պէս) մարդ չիմանում թէ, թիւքէն (պատառ) ո՞ր կողմումն է կուլ գնում։

Փորցաւ մարդուն գարի հացը մահանա է։

Փուշ ալ է նէ՝ պատէ. (քուկդ է՝ ինչ ընենք)։

Փուշը կը խնայես՝ թէ ըղտու թուշը. (Ա.):

Փուշը փուշի, մարիֆէթը խոշի:

Փուռ մը ձուազեղ եփէ տղան՝ հօրը պարտքը չի հատուցանել:

Փչէ՛ հիւսիւս փչէ՛, մէկ բօշային հոգին առնելով հարուստ պիտի ըլլաս:

Փսփսուքը կամ փսփսոցը տուն կը շրջէ՝ կամ կ'աւրէ:

Փտած յարդը առողջ եղին ճնաս չի տար:

Փտած չուանով հորը մի մնար, կտրուի կ'իյնաս, հոն կը ճնաս:

Քաղցածը՝ երազը հաց կը տեսնէ, ծարաւը՝ ջուր:

Քաղցած հաւը՝ երազը կուտ տեսնելով, թառը ոտքով փորելուն՝ վար կ'իյնայ:

Քաղցած մարդուն մոքէն օրը մէկ ամսան փիլաֆ կ'անցնի:

Քաղցը լեզուն՝ օձն ծակից հանիլ ա:

Քամին բերածը՝ քամին կը տանի:

Քամին եկած ծակը՝ գոցելու է:

Քամի կուլ կու տանք, այսպէս երթայ նէ:

Քամին՝ ապառաժէն ինչ կը տանի:

Քամին բերեց, քամին տարաւ:

Քամին ասեց մարագին. Դուռդ բաց արա՛, գալմանն (յարդ, խոտ և այլն) տուն ածեմ. — Ա. սաց. Ոչ քու բերածը կ'ուզեմ, ոչ քու տարածը:

Քամին մեռաւ ցրտէն:

Քամով տուն չի պահուիր:

Քան զպտուկը կարմիր չկայ. կոտրես մէջը սև է:

Քան զան խուծած (գէշ) գող չըլլար, որն որ

առէսաէն դուս կ'ելլայ. (բանտէն կը փախ-
չի. Պ)։

Քանի կեայը (ողջ էր), պատանք չի կէր (չկայր.)
որ մեռաւ (երբ մեռաւ) քիւպէթ (գմբէթ)
կապեցին. (Ե)։

Քանին քամին տարեր է։

Քանի որ ան սև շունը ան գուռն է, դեռ շատ
մարդ ան փոսը կ'ազատուէ։

Քանի որ ագռաւն ողջ է, ջյանեա կտաւատ։

Քաշելիք ունէի։

Քաջալը որ գեղ գիտնայ, իր գլխին կ'անի, կամ
իրա տաղ կատարին կ'անի։

Քառասուն անգամ քեզի ըսեր եմ որ . . . . .

Քառասուն գլուխ ունենայ, չի ազատիր։

Քառասուն գողը մի մերկին չեն կարացել կողոպ-
տել։

Քառասուն սուրբի աղաչելուս, մէկ Աստուծոյ
կ'աղաչեմ։

Քառասուն տարի գուն խօսէ։

Քար աղան գլխուն ձէն չի տալ. (Ե)։

Քար ըլլէր, կը պատռէր։

Քարիցը կը կարծէր, ներանից (անկէց) չէր կար-
ծէր էս բանը։

Քար կը զարնէ։

Քարը բերնէս հանեմ. — հանէ որդի։

Քարը գոհար չի լինիր, ոնկի անտուկ պահելով.
ագռաւն թուքակ չի լինիր՝ գողունի փեռուր-
նեբով։

Քարը թապլած տեղը կը հասցնէ։

Քար է ձեր սիրտը. ձեզ հօ մօր չի բերել. (Ե)։

Քարը սիմէ՝ ջուր կամ եղ կը հանէ։

Քարին որ տաս տարի քարոզ էլ ասես, քեռար կ'անի. (Ե):

Քարի տակ կը մնայ, խօսքի տակ չի մնար:

Քար խածեց կեցաւ:

Քար կեր ջաղացն 'ի վեր. էն էլ իրեջրաուն 'ի վեր:

Քար նետեր թեզ, կամ մէջդ ցաւցուցեր ես:

Քարն էլ իմ ձեռին, պօպօքն ալ (ընկուղ):

Քարոզը քարին ինչ ընէ:

Քարով ձգես անկանձը վեր չի անիլ:

Քարոտ քաղաքը գնաց. (դերեզման):

Քար սիրտ մարդ է:

Քարվանը գնաց, պոչդ կարձացրու (Ե):

Քար քարի վրայ թող չմնայ:

Քար քարի զարնես կամ քըսես, կրակ կ'ելլէ:

Քեզի՛ է մնացեր, ուրբաթ օր պաքը աւրելը:

Քեզի կ'ըսեմ՝ մարդու մ'ըսեր:

Քեզ կը սիրեմ ամմա, քսիկէս (քսակէս) աւելի չեմ սիրեր:

Քեզ ով է ասում թէ արի մեր կալը չափիր. (Ե):

Քեզ չընկած բանին մէջը մի մտներ:

Քեզ լացնողը՝ սիրէ, խնամացնողը՝ ատէ:

Քեզմէ ուժովին կամ վերնագուռնին հետ մի կը-ռուիր:

Քեզ չեմ սիրում՝ սև սև ընկերդ, շալակն եմ սիրում՝ լի լի բեռներդ. (ոչ զքեզդ սիրեմ, այլ զձոխութիւնդ):

Քենին մէնայ է արել, եարոջը տես ա երթում. (Ե):

Քեռիդ ձանչցաՙր, կամ տեսաՙր:

Քեռեկին ասաց. Որդի, գտակդ ինչու է ծակ – դրուստ խօսելուցն է:

Քէլիս մի նայիր, բաղդիս նայէ։
Քէն ընողը՝ պատն 'ի վէր։
Քէսատանէիցն է եղեր, ակեղեին է մահանայ դը-
նում։
Քէֆը քոնը, գեղը՝ տանուտէրինը։
Քթէն ականջը լուր մը չիհասնիր։
Քթէն ճանճ մը իյնայ, քառասուն կամ հազար
կտոր կ'ըլլայ։
Քթէս բերնէս բերաւ։
Քիթդ ինչո՞ւ կը վազէ. — ճմեռ է. — ես քեզի
գարուն՝ ալ տեսեր եմ։
Քիթը ամպերէն կը ջուր խմէ. (հպարտ է)։
Քիթը սրբած մարդ է։
Քիչ բարձիր, շուտ գարձիր։
Քիչ զուրցէ, աղէկ զուրցէ. (Պ)։
Քիչ էին մոեղ դոնից, մէկն ալ ընկաւ երդիքից։
Քիչը քիչին օգտեր է, շատը շատին օգտած չէ։
Քիչ էնք, դա էլ եկաւ աւելի։
Քիչը մի արհամարհեր, որ շատէն ալ չզրկուիս։
Քիչ խօսէ՝ որ շատ լսես։
Քիչ խօսիլն ու քիչ ուտելը, ոչ երբէք ինաս կը
բերէ։
Քիչ խօսել. (անգոհունակ ըլլալ. Ղ)։
Քիչ մը ջաղացքն է վերնական, քիչ մ'ալ գիւանք
հէլ հէլ կու տան։
Քիչ ուտելը մարմնոյն շահ է, քիչ խօսիլը՝ հոգ-
ւոյն։
Քիւլհանն է նստեր, սուլթան Մուրատը երա-
զը կը տեսնէ։
Քծնող գառը, օխտը մար է ծծեր։
Քնածն կոյր է. տէօվլէթն՝ արթուն մարդուն է։

Քո միտքդ չար ի (է), դու գիտէս ինն։

Քոյրն ասում ա. եղբայր ունիմ. – եղբայրն ասում ա, քոյր չունիմ. (Ե)։

Քոսոտ էծն՝ աղբրի ակնից ջուր կը խմի. (Ե)։

Քո տունն է էրում, կամ էրեր ում, դուն նայ (նէյ) ես փչում։

Քո գլխուդ ձմերուկ մի կտրեր։

Քո ղանտը՝ (քէլլէ շէքէր) ամէնքի գլխի հետ չեմ փոխել։

Քու բանդ ձեռքովդ հոգա։

Քու թրովդ քու գլուխդ կտրել մի տար. քու խօսքովդ քու վնիռդ կտրել մի տար։

Քու թիւֆէնկդ երկու տեղէ կը ֆաթի։

Քու ղապլու փլաւն ինծի ինչ օգուտ որ ես չեմ սիրում. (Ե)։

Քու նմանիդ քովը նիստ։

Քունէդ արթընցիր, ապա երազդ քննէ։

Քունը՝ մահին աղբարն է, կամ քունն ու մահը մէկ է։

Քունը քուն կը բերէ։

Քունն անուշ է քան զնուան գինին։

Քուն եղած օձին պոչը մի կոխեր, դառնայ կը խայթէ։

Քու չուանովդ հորը մանողը կամ ինջողը՝ հոն կը մնայ. կամ քու կապովդ ես հորը չեմ մըտնար։

Քու պարկուկէն (ծիրան չոր) թանձրիկ արա, իմ պարկուկից՝ նօսրիկ. (Ջ)։

Քուրդը հարցուցեր է սափրիչին. Մաղս ֆնրմանկ կը թէ սև. – ըսեր է. Երբ առջևդ թափեմ՝ կը տեսնաս։

Քուրդին եղն որ շատ ըլլայ՝ կէսն ալ կռնըկին կը քսէ։

Քուրդն ինչ գիտէ ծոմ ու պաս, կը խմէ թանն ու սպաս։

Քուրդն հարցեր է. Մօլլան ինչու կը կանչէ.— Էշան կուտայ. — Էշանն ինչ է.— Թուրքն աղօթքի կը կանչէ. հա, մեր ոչխարին զէն չըլլի, հա՛ թող. . . հա՛ թող. . .։

Քռքռաս վարդ խաթուն։

Քրդի սատկած է. (շատ ծանոր է)։

Քօռ եզը խիալով (իշմարով) ա ման գալի. (Ե)։

Քօռէն լաւ է շիլը։

Քօռին ինչ պէտքն է թէ Ճրագը թանկ է։

Քօսին խորթն եմ ես ինչ. (ե՞ս մի պիտոր զըրկուիմ)։

Քօսին ով որ տնաղ կ'անի, կամ կ'ընէ, ինքը լաւ միրուք պէտք է ունենայ։

Օխտը մենք էինք, օխտը մեր հերանք. մի մոծակի կաչա կերանք։

Օխտը ծովից, մի կովից, կամ Օխան 'ի ծովէն, մէկ մ'ի կովէն։

Օխտը օր կախեր են՝ չէ խղդուեր։

Օխան օտարը տունս է եկեր, ինծի տունէս դուրս կ'ընէ։

Օձը բերանը թքեր է։

Օձը իր շապիկը կը փոխէ, բնութքը չի փոխեր։

Օձը ծակէն դուրս չելլեր (գէշ օդին)։

Օձը պորտով, հաւքը թևով չի կարնար գալ հանիլ։

Օձը վեր ջրին խարամ (հարամ) չանի. (Վ.)։

Օձը քանի շուտ սպաննես, էնքան քու խէրդ ա. (Ե):

Օձի գլուխն որ ցաւի, ճամբի մէջ տեղը վէր կ'ընկնի, (կ'իյնայ, կը պառկի. Ջ):

Օձի կծածն՝ հալաձա (ալաձա) չուանից կը վախի. (Ջ):

Օձի սատկիլն որ գայ՝ ճամբու վրայ կը պառկի:

Օձի սևին ալ նալլաթ, սիպտակին ալ. (Ե):

Օձն՝ ամէն տեղ ծուռ կը քալէ, կամ ծուռ է մտն գալի, իր բունը մոնեալուն շիտակ, կամ իր բունը մոնալիս՝ շիտակ:

Օձու խեթածը՝ չըունի հետքէն կը վախնայ:

Ճախը՝ պուճախ ըրաւ:

Օչ ով չասի, թէ ես գիժ եմ. (Ե):

Օչ ով չասի, թէ իր ճրագն ինչանք առաւօտ լիս կը տայ:

Օչ ով թոզ չպարծենայ:

Օտար ազգեր լոյս չունին, օտար վարդեր հոտ չունին:

Օտարին հացին եղ քսող չէն ըլլար:

Օտարի բառունց չուտող՝ իւր բառունցը տանձ կարծէ:

Օտարի ձեռքով օձ բռնէ, ան ալ սոսկալով:

Օտարի ձեռքով լաւ է միայն փուշ քաղել:

Օտարին սրտին ցաւը և իրեն կրունկին ցաւը մէկ է:

Օտարն երթալով գալով՝ բարեկամացաւ. բարեկամը չերթալով չգալով՝ օտարացաւ:

Օր է՝ կ'անցնի:

Օրերս առաջ. (դեռ ժամանակ ունինք ապագային. Խ):

Օր լինի որ մեր փողոցումն էլ տօն լինի։
Օրը գայ՝ բարին հեաը։
Օրը կ՚ելնէ՝ չարը չելնէ։
Օրը կ՚երթայ, աւուր շաղը չերթար։
Օրը նոր՝ բանը նոր, կամ օրը նոր, մարդը նոր։
Օրթախուրթեան արտը՝ կռուանկն է կերբեր. (Կ)։
Օրիկ բացուեր է քեզի։
Օ՛ֆ, Օֆը Իրզու քոմէն է։

Ֆէնէռդ առջևէդ վառէ. (բարեգործութիւնդ ողջութեանդ)։
Ֆէնէռդ ո՞ւր տեղ մարեցաւ։

ԲԱՌՔ ԵՒ ՈՃՔ ԳԱՒԱՌԱԿԱՆՔ

Ա. Հ. Ե։
Ա.Թար. Ռէպէհ. Կ։
Ա.Ժի. Կ'աժէ. Ե։
Ա.Լկել. վար դնել. Ե։
Ա.Լէի. Վէգին կայնած փոս կողմը։
Ա.Ծել. Չալել։
Ա.Ծել, վեր ածել. Լեցունել, Թափել. Ե։
Ա.Ղ անել. աղ ցանել. Ե։
Ա.Ղէմլիք. աղիք և փորոտիք. Կ։
Ա.Ղնոց. աղաման. Ե։
Ա.Ղու. Ջաղացք. Ե։
Ա.մպուր. շատ, յոյժ, ուժով. Պ։
Ա.նոշ. անուշ. Ե։
Ա.նիսար. այնչափ. Ե։
Ա.նսի. անոր համար, վասն այն. Կ։
Ա.նցընել. մարել. Խ։
Ա.ն կաշու մէջ. այն մարմնոյն մէջ. Պ։
Ա.նցկանալ. անցնիլ. Ե։
Ա.ռնանք. Երկանը կողմի ազգականք. Խ. Կ։

Աստուծով մխիթարուիս. փոխանակ չը կայի, ոչ. Ե։
Արին. արիւն. Ե։
Արմացք. արմենալու, զարմանալու. Պ։
Արեման. երևցած. Ջ։
Աք. քայլ. Ե։
Բամպակը նօսր է. թեթևասոլիկ է. Կ։
Բանն աջ ա. բանը յաջողակ է. Ե։
Բարեբարիլ. անուշանալ, աղէկ ըլլալ։
Բարի. ապրանք, ունեցածը. Խ։
Բարոց. բարեաց. Ե։
Բաֆա. ճնաս. պէֆա. Ե։
Բերուց. բերեց. Ե։
Բէտ. խոշոր. Ա։
Բէտամաղ ըլլալ. անհանգիստ՝ անպատիւ ըլլալ։
Բըս. հապա, ուրեմն. Ջ. Ե։
Բհամ. առաջ բերած, անուցած. Ե։
Բհիր. բիր, ցից։
Բղուղ. բղուկ. ֆէֆ. Ե։
Բովիլ. պիտոյանալ, պիտոյ է. –կի բովի. պիտոյ է. Պ։
Բռունցք. էռմրոֆ. Ե։
Գաղ. չաֆի. ատաղին. Ե։
Գալատակ. գայլին տակը. Ե.Կ։
Գաշնոց. գայլերու բնակարան. Կ. Ե։
Գաղանոց. ընֆէլիֆ. Ե։
Գացուց. անարգուեցնէ, քամիէն. Ե.
Գիժ (վրացի). խենթ. Ե։
Գլխած. կիսամաշ, հին. Պ։
Գնալիս ըլլալ. մեռնելու ըլլալ. Ե։
Գողծուն. գողցած. Կ։
Գոռալ. կանչել, պոռալ. Ե։
Գուշ. պնակ փայտեայ։
Գրուական. գրաւական. Կ. Ե։
Գոնուիլ. վասակիլ. Պ։

Դցեմ. ձգել, նետել, խմել. Ե։
Դոմշի (վրացի). սերկևիլ. Ե։
Դանակաւոր. դանակ ունեցող. Ե։
Դառի. դառնայ. Ե։
Դասաել. թասել, հեալ. Կ։
Դատուամ. վասատակ, աշխատութիւն. Կ. Ե։
Դարմանն. ուտելի խոտք կենդանեաց. Կ. Ե։
Դարպա. անգամ. Պ։
Դապրա. նոյն. Խ։
Դերձանը կարիլ. մեռնիլ. Կ։
Դէս. ասային. Ե։
Դէն. անդին։
Դէհ. դի, կողմ. Ե։
Դժուարացնել. խենթեցնել. կամ բերել. Ե։
Դիհ. կողմ. Ե։
Դինկ. պլղուր կամ կորկոտի կճեպը ճղելով հանելու ջաղացք. Կ. Ե։
Դիւանք. գևերը. Կ։
Դուանչ. երես. Ե։
Դրանք. ատոնք։
Դրատուիլ. շրակիլ։
Դրուատ. շիտակ։
Եատ. օտար, հիւր. Ե։
Եար. սիրելի, ամուսին. Ե։
Եէնի. ըլլայ. Ե։
Եիսա գալ. յորդ գալ ջրոց. սէլ. Կ։
Եղնիլ. ըլլալ. Ա։
Եռ գալ. եռալ, եփ եղելը. Ե։
Եռ. եռալը. Ե։
Եսևորանց. յետ կոյս, յետ. Կ։
Զատանց. հեռուէն. Պ։
Զբս. զայս. Ա։
Զբվբռնել. շրջիլ. Ա։
Զբրջել. շրջել, պատկեցնել. Խ։
Զուրի. փուճ տեղը. Պ։

Զար. վարագ, էաւրդ. Ե:
Էգի. այգի. Ե:
Էծ. այծ:
Էնդիցն. անդիէն, անկէց. Ե:
Էրը. եղածը:
Էքէպիւռ. հպարտ, գոռոզ. Կ:
Ընդոր. անոր համար, վասն այն. Ե:
Ըլլիլ. ըլլալ. Կ. Ե.
Ընթենիլ. ընթանալ, քալէլ. Ե:
Ընչանք. ինչուան, մինչև. Ե:
Ընչուր. ինչուան. Ե:
Թապլէլ. թալէլ, նեռեալ. Կ. Ա:
Թակարթ. ճնասակար. պոռղագ:
Թան. վիշտ, նեղութիւն:
Թանձրիկ. առատ. Ե:
Թանթլիկ. թաթ. Ե:
Թառ. վերի գլուխը. Ռավլա պաշը. Ե:
Թէխմախ. ֆէօլէկ օյոնոս. ոտքին երկու մատին վրայ պարելը. Կ:
Թըխ. թող. Վ:
Թիքա. պատառ. Ե:
Թոլ էլլէլ. կլօրիլ. Ե:
Թո՛ւհ. թիւ. Ե:
Թուման. 10 մանէթը մէկ թուման է. Ե:
Ժուռ. աղոխ. Կ. Ե:
Իմաճ. ինչպէս. Ա:
Ինեալ. հետ ընեալ, քսուիլ. Ե:
Ինի. յայնմ, մէջը. զոր օրինակ՝ երաշ ինի. Երաշին մէջ. Ե. Խ. Վ:
Ինոր. անով. զոր օրինակ՝ ինոր կի սևի. Պ:
Ինչ. քանի որ, ոչ. Ե:
Ի՞նչ էս լալի. ինչո՞ւ կու լաս. Ե:
Իշանք, իշուանք. էշերը. Ե:
Իրա փայը. իր տեղը, փոխանակ նորա. Ե:
Իրե. իրենը. Ե:

Իսկ պուճախ. տաք անկիւն՝ տեղ։
Իրար ընկնիլ. յարմարիլ. Ե։
Իրեն իրենը. ինքն իրեն, ինքնին. Ե։
Ի՞ւստ. ուսկից. Վ. Ե։
Ի՞ւր. ո՞ւր. Ա։
Լաչ. համր. Կ.Ե։
Լէփէզ. անամօթ, լկռթած, սրուած. Կ։
Լըպըստել. լզել, լզուրռատել. Ե։
Լիս գցել. գուրս հանել. Ե։
Լիս ընկնիլ. յայտնիլ, հրատարակիլ. Ե։
Լիս, լոս. լոյս. Ե։
Լիսցնել. լոյս հանել, գուրս հանել. Ե։
Լտրա գզող. լիտրով գզող. Կ։
Լոշ. լաւաշ. Կ. Ե։
Խալաճ. բլիթ. Խ։
Խալանալ. սխալիլ. Պ. Խ։
Խաղալ. պարել. Խ։
Խանել. հանել. Վ. Ա։
Խանուալա. մլուկն, փայտոջիլ. Խ։
Խաչու կամ Խաչի. արգանակ, միսի ջուր. Ե։
Խաչի. հաչէ. Ե. Վ։
Խաչերկաթ. թոնրի վրայ դնելու խաչաձև երկաթ. Կ։
Խաչօխնէք. խաչօրհնէք, պսակ. Ե։
Խարճ. յարմար, ըստ յօժարութեան. Կ։
Խարսանիս կամ Խարանիս. հարսնիք. Ե. Վ.
Խաց. հաց. Վ։
Խացթուխ. հացեփեաց. Ե.Վ։
Խաւ. հաւ. Ջ. Վ։
Խեղդան. խեղդուեցան. Կ.Ե։
Խեթել. խայթել. Կ. Ե։
Խըլխ. ժողովուրդ. հալխ. Վ։
Խըփըշտել. հապշտապ ուտել, կամ բրդել. Ե։
Խիալ. էշմաբ. Ե։
Խիպիլիկ. խպիլիկ, թիթեռն Կ։

Խիրուն. ագեղ. Վ:
Խոտել. համարիլ. Կ:
Խուծած. անպէտ, չար. Պ:
Խչիլ. շիւղ. էջ. Կ:
Խօսան. խօսուն. Կ:
Խօր, խորոտիկ. գեղեցիկ. Վ:
Խորթել. շինել. Խ:
Խորոմ. խուրձին իրեք մասին մէկ կապոցը. Կ. Ա. Ե:
Ծարուրած. ծարոյր քաշած աչք. «Իրմէնմէ. Կ:
Ծեղ. լաւը, էջ. Կ:
Ծըծրանիկ. ծիծեռնակ. Ե:
Ծի. ինձ. Ե:
Ծիտ. ճնճղուկ. Ե:
Ծորան. մաքուր, զուտ:
Ծորիլ. մաքրուիլ, զտուիլ. Կ:
Ծուռ. խեղթ. Ե. Վ:
Կալակ կամ կալաք. կատակ. Պ:
Կալաճի. խօսակցութիւն. Պ. Խ:
Կալատակ. պարապցած կալ. Կ:
Կակա (տղայական բառ). պտուղք, և որևիցէ անուշեղէնք. Կ:
Կաղպար. գաղափար. Ա. Ե. Կ:
Կանտար. որջափ. գոպար. Ե:
Կաննի. ժողովի. Ե:
Կապէկ. Ռուսի հարիւրեակ փողն. Ե:
Կարաս. բղուղ. փէֆ. Պ. Խ:
Կարճացրու լեղուդ. լեղուդ քաշէ, լուռ կեցիր. Ա:
Կացք. կենցաղավարութիւն, որպիսութիւն. Կ. Ե:
Կեայր. կապրէր, ողջ էր. Ե:
Կեմ. խոտի խուրձը կապելու նոյն խոտէն շինած չուան. Կ:

Կենդանապար. պարի տեսակ մը. Ե։
Կենէր. կենար. փոխուայլիր. Ա։
Կենէ. կենար. Ա. Ե։
Կենօք. իր կենացը մէջ, բոլոր կեանքը. Ե։
Կէր. կայր. վարիր. Ա. Ե։
Կըտրտոր. սպառուր այծի՝ ոչխարի. Կ։
Կը տայ. կու տայ. Ե։
Կ'ուզի ևն. կ'ըլլայ. Ե։
Կի, կը. այո. զոր օրինակ՝ կի գանաս. կը գըտ-
նաս. Պ։
Կի տայ. կու տայ։
Կիր. գիր, ճակտի գիր, վիճակ. Խ։
Կից. աքացի. ՌԷՄՏ. Ե։
Կծել. խածնել. Ե։
Կըծվըծալ. էրիլ. Պ։
Կչաին. քովը. Ե։
Կոթ. գէշ, զոր օրինակ. Բանը կոթ է. գէշ է. Կ։
Կոլոխ. գլուխ. Պ։
Կող. թոնտրի մէջը. Կ։
Կողիցը. կողմէն. Ե։
Կողք. մէջք. Ե։
Կոտրեց. կոտրեցաւ. Ե։
Կոտը ընիլ. անանկանալ. ՄԻՀԼԻՈՂ. Կ։
Կոտորիլ. կռուիլ. Ե։
Կուզ. կուզէ, կամի. Ե։
Կուժ. փայտէ և հողէ ջուր բերելու աման.
պարպագ. Ե։
Կուլայ (վրացերէն). գինի խմելու թաս եղ-
ջերեայ՝ արծաթեայ և հողէ. Ե։
Կուռ. ուղտու կուզ. Ե։
Կուռը դէմ տալ. յամառիլ, կենալ. ԻՆԱՊ. Ե։
Կուստաթ անել. համառես ընել. Պ։
Կպչակ կամ Կուլչակ. անիւ. Պ. Խ։
Կռացնել. ճկել, ծռել. Ե։
Կռուին կոխել. խաղաղցընել, հաշտեցնել. Պ։

Կտեղ. հրեղ. Ի։
Կտեղ, գտալ. դգալ։
Կտորում են. կը կռուին. Ե։
Կրրէ. կերերայ. Ե։
Կօշ. խոշ. Ե։
Կօթլօշ. անպոչ հաւ. ֆոպոպ։
Կօրա. ըստ այնմ. կէօրէ. Ե։
Հաղրի. հազարի. Ե։
Հալաձա. խայտաբղէտ. ալաձա. Ջ։
Հալէլ. հալիլ. Ե։
Հախ նըհախ. իրաւունք ունենալ և չունենալ. Ե։
Հաձաթլը. գործիքաւոր. Ե։
Հաձու. հաձիին. Կ. Ե։
Համաւոր. պարկեշտ, ամօթխած. Կ։
Համ տալ. գործ տեսնել, տեղ բռնել. Ե։
Հանաք. կատակ. Ե։
Հառայ տալ. վայ կանչել, շամանա հանել. Ե։
Հատիր. հաղբր. Պ։
Հարիր. հարիւր. Ե։
Հարուիլ, հարուլ. առնուիլ ակռային ազրիսէ. Կ. Ե։
Հացը կողքը տալ. հացը թոնրին մէջ զարնել. Կ.Ե։
Հաւալա. գէպ 'ի վեր. Պ. Կ։
Հաւերաց. հաւերուն. Վ։
Հաւող. խաղող. Վ. Կ։
Հետ կշտին. քովը. Ե. Ա։
Հերթը. կարգը. Ե։
Հերոն. հերիւն, պէպ. Կ։
Հզուլթիւն. հեղուլթիւն. Ե։
Հէլհէլ տալ. գրգռելով վրան խնդալ. Կ։
Հէնց. այնպէս, դարձեալ, նորէն. Ե։
Հէր. հայր. Ե. Ա. Վ։
Համալ. այնպէս, այդպէս. Ա։

Հմէն. ամէն, բոլոր. Ե. Ա։
Հոգս. հոգալը. Ե։
Հոտալ. հոտիլ. Խ.Ե։
Հորս. որս. Ե։
Հորսելի. հոսելի. Ե.Կ։
Հուռճ. հաւկթի կճեպ. Վ։
Հո՛ կամ հո՛յ, խո՛. խոշ, ապաքէն. Ե։
Հօրուն. հօրը. Ե։
Զաւառ ձաւառ գուրս տալ. բերնին եկածը գուրս տալ. Կ։
Զէն. ձայն. Կ. Ե. Խ։
Զէնել. հրաւիրել, կանչել. Ե.Խ։
Զէն տալ. կանչել, իմացնել. Ե։
Զին. ձիւն. Ե։
Զիգձիգ. հաւաձագ. Կ։
Ղանտ և գլուխ. +էանէ ղէ+էր. Ե։
Ղորդել. շինել. Խ։
Ճագիլ. ճաթիլ. Ե։
Ճամբից գուս գալ. ճամբայէն ելլել. Ե։
Ճապկտիլ. ճապաղիլ, տարածուիլ ջրոց. Ե։
Ճապկտիլ. ճապկտալ. Ա. Կ։
Ճար. գեղ. Խ։
Ճիժ. մանուկ, տղայ. Ա։
Ճիճիմ. գեղեցիկ, յաջողակ. Ե։
Ճիոջ կամ ջիոջ կամ ջոջ. ծեր, մեծ. Ե. Ա։
Ճիպ. գրպան. ճէպ. Ե։
Ճողել. երկնցնել. Ե։
Ճուլթ. ճիւռ խաղողոյ. Կ.Ե։
Ճուտ. հաւաձագ. Ե։
Մալուխ. խթան. Ե. Կ։
Մահնիք կամ Մահընէք. մահուան հանդէս, թաղում. Ե։
Ման. մանած, փաթթոց. Ե։
Ման գալ. հոգալ, հոգ ունենալ. Ե։
Ման գալ. փնտռել, շրջագայիլ. Ե։

Մանը գալ. մանելը գալ. Ե։
Մանկուց. 'ի մանկութենէ. Ե։
Մաշակար. կօշկակար. Ե։
Մաշիկ. կօշիկ. Ե։
Մարագ. խոտանոց, յարդանոց. Ե. Կ։
Մարդի. մարդու. Ե։
Մաքիւն. մաքիւին, էգ ոչխարին. Ա. Վ։
Մեխել, մխել. գամել. Կ.Ա։
Մեկնիլ. սղմիլ. Խ։
Մէնը. միայն, մինակ. Ե։
Մէջը մնալ. խօսքէն բռնուիլ. Ե։
Մէր. մայր. Ե։
Միս. մարմին և միս. Ե։
Մնի. մէկին. Ե։
Մնջի. մուանջի. Ե։
Մոլոր. խեղճ, աղքատ. Ե. Կ։
Մօրուն. մօրը. Ե։
Նա. ալ, թէ և. Պ։
Նա. նէ, ոչ. Ե։
Նայ. նէյ. փող մի. Ե։
Նամ. թաց. նէմ. Ե։
Նաշ. ճաղ, ջախպ. Ե։
Նաւալայ. պաշար։ Ե։
Նը. նէ. Ե։
Նշանաբան. ցոյց. Ե։
Նրա. նորա. Ե։
Նրանից. անկէց, նորամէն. Ե։
Նրանք. անոնց։
Շաբաշ. երգեցողութեան և ջալելու վարձ։
Շալկուոր. բեռնակիր, շալակը բան ունեցող. Ե։
Շահի. (Վրաց փող.) որ է մին 40 սանթիմ. Ե։
Շաղ. լոյս. ջաֆ. Ե։
Շանց տալ. նշան տալ, ցուցանել. Ե։
Շէքլդ. շէնքդ ու շնորհքդ. Կ։
Շլորիլ. ծռիլ, կլորիլ, տեղէն ելլել. Ե։

Շննոց. շունեբու բնակարան. Ե. Կ։
Շողոմքոր. քծնող. Ե։
Շոր. զգեստ. Ե։
Շորորալ. քովէքով ընթիլ. ցալանմագ. Կ։
Շուապ. շուք. Ե։
Շուռ տալ. շրջել, դարձնել. Ե.
Շուարիլ. շփոթիլ. Ե։
Ո՞ր խաչէն է. ինչ հրաշալի բան է. Ե։
Որ մեռաւ. երբոր մեռաւ. Ե։
Ո՞ւխ. ուր. Պ։
Ուտելու. կերակուր. Պ. Խ։
Ուտան. ուտող, կերող, շատակեր. Կ։
Զաթու. ցանկի զարկած ձող. Ե։
Զալ. խայտաբղէտ. ալաճա. Ե։
Զալախ. խեղ. լղոգ. Ե։
Զախմախ տալ. լոխմախ զարնել. Ե։
Զանագ. ոչ հէնէկ, ատոյգ. Ե։
Զաչ. արմռեաց վրայի կանանչը. Կ։
Զարոց. չարաց. Ե։
Զէթէն. ցանկ. Պ. Խ։
Զի. չէ, ոչ. Ե։
Զի քալի. չի քալեր. Ե։
Զիր. չորցուցած պտուղք. ղախ. Ե։
Զ'ուզունալ. չ'ուզենալ. Պ. Խ։
Զուանի դնել. բանի տեղ դնել. Ե։
Զում. մինչև. Ե։
Զում. գըեըբՀգ. Պ. Խ։
Զրուր. շուարած. Կ. Խ։
Զօլ. դուրս տեղ. ինօլ. Ե։
Պատակեր. պաս ուտող. Կ. Ե։
Պատուիր. պատուէ. Ե։
Պատրաստիր. պատրաստէ. Ե։
Պարխանայ. պարի տեղ. պարտուն. Պ։
Պարկով լուս բերել. մոռղամպա լապտերով լոյս բերել. Կ։

Պարկուկ. Ծիրանի չոր. գայլուկ գոռոռաստ. Ե. Կ։
Պարնի. պարոնի. Ե։
Պիզուիթ ըլլալ. ապաւինիլ. Պ։
Պլիկ. ստակ. Կ.Ե։
Պհամ գալ. առաջանալ, շինուիլ, ըլլալ. Ե։
Պոկեալ. փրցնեալ. Ե։
Պուռչախ և Փուրչախ. կարկուտ. Պ. Խ։
Պուհա. բոլ. Ե։
Պակինայիլ. Ծուռ հայելի, յառիլ. Ա. Ե։
Պրծնիլ. ազատիլ, աւարտեալ. Ե։
Պօպոք. ընկոյզ. Ե։
Պօթ. քիթ անատնոց, ցռուկ. Պ։
Պոլոզ. երկայն. Կ։
Պօս. խաղ. փիւպարա, ոյուն. Խ։
Չախչախ. Չաղացքին չախչախ փայտը. Կ. Պ։
Չան. կեանք, անձն, մարմին. Ե։
Չարդի. Չարդէ. Ե։
Չորիլ. խռովիլ. Կ. Ե։
Չուլհակ. կտաւագործ. Կ. Ե։
Չրտուն. Չաղացքի չարխի տակի տեղը, որ և Ցրքտուն ասի. Ե. Կ։
Ռատ ըլլալ. բացակայ ըլլալ, հեռանալ. Ե։
Ռէս. փէհէտ. Ա։
Սաղ գալ. վայլել, յարմարիլ. Ե։
Սազում ա. կը վայլէ. Ե։
Սազն ու սարուն. զարդարանքը. Ե։
Սախաթ մարդ. պակասաւոր մարդ. Պ։
Սառ. պաղ, զով. (Ջուր, քար ևն). Ե։
Սառչիլ. սառիլ. Ե։
Սևագլուխ. վեղարաւոր. Ե։
Սէլ, սէլապան. սայլ, սայլպան. Ե։
Սըպաս. Թանապուր. Ե։
Սըսուիլ. սուս կենալ, լռել. Պ։
Սիպտակ. սպիտակ։
Սիպտակացուցանել. սպիտակացուցանել. Ե։

Սիրունացնել. գեղեցկացուցանել. Ե։
Սուտ փող. գալպ ակէք. Ե։
Սպրուզ. սրբիչ ձեռաց. Պ։
Սրանք. ասոնք։
Սրեց. սրէ. Ե։
Սօլ և սօլկըը. ոտնաման և ոտնաման կարող. Ե։
Վատ. գէշ. Ե։
Վազ տալ. վազել. Ե։
Վեր. վար. Ե։
Վեր. վրայ. Ե։
Վեր առնել. վերցնել. Ե։
Վեր ածել. լեցունել, թափել, վօթել. Ե։
Վեր գալ. վար իջնալ. Ե։
Վեր ելլել. հեծնալ. Ե։
Վեր ընկիլ. վար ընկիլ. Ե։
Վեր թափել. վար թափել. Ե։
Վեր ծովուն. ծովուն վրայ. Ե։
Վեր կալ կամ վե կալ. ուռ. Ե։
Վեր կենալ. վեր ելլել. Ե։
Վզիկ. վիզ. Ե։
Վրէն դնել. վրան դնել. Ե։
Վօթիլ. թափիլ. Խ. Պ։
Տազկատար. կնտակ, փող. Ե։
Տախտ. սէֆէ. գետնէն բարձր տանը կէսէն տախ-
տակաւ բարձրացուցած. Ե։
Տակնահան. ծածուկ գործ տեսնող. Ե։
Տանից. տուներէն. Ե։
Տանջայ. տանջուի. Ե։
Տապրա. անգամ. Ե։
Տարմ. երբեմն. Ե։
Տատմէր. դայեկ կամ ծրծմար. Ե։
Տափ. թմբուկ, ռէֆ։
Տաքցոց. տաքցնելուն. Ե։
Տեղ ցկել. անկողին ձգել. Կ։
Տեսնելիս. տեսնելուն. Ե։

Տէլ էր ելեր. դեռ չէ եղեր. Ե:
Տէվէք. ուղտերը. Ե:
Տիկ. Ռուլոմ. Կ.Ա.:
Տիտիկ ընել. (տղայական բառ) նստիլ. Ե.Կ:
Տղայ. մանչ տղայ. Ե:
Տղամարդ. կարիճ, երիտասարդ. Կ. Ե:
Տղայ տէրտէր. նորընծայ քահանայ:
Տնկուիլ. կենալ, դադրիլ. Ե:
Տուար. տուիր. Ե:
Տրընկել. ոտքի ձան հանել, առաջել. Կ:
Տռանիկ տալ. վեր վեր խնալով ցանկելով վաղ-
վըղել. Կ. Ե:
Տրաղիլ. ճանթիլ:
Տրաղեցնել. ճանթեցնել. Կ:
Տքում. տքալը. Կ. Ե. Պ. Խ:
Տօ. ծօ. Ե:
Ցախ աւել. ցախէ երկայն աւել դոմ աւլե-
լու. Ե:
Ցան. քակոր էորացեալ 'ի դաշտի. Կ:
Ցամքութեան էնայիլ. ցամաքութեան կերակրոց
էնայիլ. Ե. Կ:
Ցխու�. ցեխին մէջ. Ե:
Փէշակ. (վրացի) արուեստ. Պ.Ե:
Փէտ. գաւազան, ցուպ. Ե:
Փլխորիլ. կոտրիլ. Էպիլֆ+ Կ:
Փլուիլ. կոտրիլ, փլխորիլ. Ե:
Փողեցն ընկնալ. փողէն ելլել, զրկուիլ. Ե:
Փոսուռայ. կածռուիկ. Ե. Վ:
Փուլ գալ. փլէիլ. Ե:
Փուլ տալ. փլցնել. Ե:
Փռօտա անել. (Ռուս) առուտուր ընել. Պ:
Փստիլ. ուտել հապշտապ. Ե:
Փօթէքնիդ. ապահովութիւն, երաշխաւորու-
թիւն. Պ:
Փաղով տալ. ոքացով զարնել. Ե:

Քանարպաշ. Չուանի վրայ խաղացող. Ճամպաշ. Ե:
Քաչալ. Էջ. Ե:
Քար խածել. Յամառիլ, պինդ կենալ. Ե:
Քարոտ քաղաք. Գերեզմանատուն. Կ:
Քարղան. Պնակ կաւեայ. Ե:
Քաւոր. Կնքահայր. Ե.Ա:
Քեզ վրայ կ'ընդունի. Վրադ կ'ինայ. Ե:
Քէօ կամ քիոյ. Քոյ, քու. Ե:
Քիւմն. Քուկդ. Ե:
Քիւպէթ. Գմբէթ. Ե:
Քնացրու. Քնացուր. Ե:
Քոնը. Քուկդ. Ե:
Քուռակ եղէլ. Քուռակ ծնանիլ. Ե:
Քուռիկ. Քուռակ, տրմուղ. Կ.Ե:
Քչփորել կամ քցփորել. Պչխել, մաքրել. Ե:
Քսիկ. Քսակ. Ե:
Քրէհ. Վարձք. Էրայ. Ե:
Քոմմոն. Բոլորն ալ. Ե:
Քօշակ. Սէմբը, քալան. Ե:
Քօչայ. Գաղթել, երթալ. Ե:
Օչօփայ ըլլալ. Ոչնչանալ. Պ:
Օրերս առաջ. Ասկէց վերջը, գեռ ժամանակ ունինք. Թ:
Օրիկ. Ոճնախմբուլթեան օր, հանդիսաւոր օր. Զոր օրինակ. Դուռը ծախելու օրը օրիկ ընելու է. Փառաւոր. Կ:

Եր · Տ՝		Սխալ	Ուղիղ
50	23	զուռանձու	զուռնաձու
81	5	քծուին	գգուին
82	3	դառնայ	դառնայ
82	12	թէֆթձիշի	թէֆտիշճի
83	27	չեմ	չէ
96	6	կռուին զատին չոր ուտէ	չը կռուին նէ զատին չօր ուտէ
96	17	տուինը	տունը
101	6	անց	քանց
108	15	սրտին	արտին
113	7	տառեր	սարեր
122	6	արար է	հալալ է
125	32	Շուն ու փող քաշէ վատակէ	Շուն քաշէ փող վատակէ.
133	4	(կերի)	(սիրտդ կերի ·)
135	25	եարը	եատը
135	30	դէզ	թէզ
137	31	սի	խի
144	6	ով տիսէ	ով է տեսեր
145	10	ըլլար	չըլլար
150	2	խամրաթը երկու մէ	խայրաթը երկուս է
151	18	քաշէ	քաշը
155	4	ֆէրտ	ֆէրտէ

Bucheinband von
JOSEF ERDMANN
BONN, Dottendorferstr. 144